ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

KONRAD
ADENAUER
STIFTUNG

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
(պետականագիտություն)
ԾՏԵՄԱՐԱՆ

Ընտրովի, համապատասխանեցման,
լրացման և շարադրվող
առաջադրանքներ



ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(պետականագիտություն)

ՇՏԵՄԱՐԱՆ

Ընտրովի, համապատասխանեցման,
լրացման և շարադրվող առաջադրանքներ

ԵՐԵՎԱՆ 2026

ՀՏԴ 321.01:373(07)
ԳՄԴ 66.0+74.2g7
Վ 192

Շտեմարանը մշակվել է
Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի աջակցությամբ

Վաղարշյան Արթուր, Սիմոնյան Տարոն

Վ 192 ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (պետականագիտություն) ՇՏԵՄԱՐԱՆ/ Ա. Վաղարշյան, Տ. Սիմոնյան. - Եր.: Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, 2026.- 128 էջ:

Շտեմարանը նվիրված է «Հասարակագիտություն» առարկայի պետաիրավական բովանդակության համակարգված ստուգմանը: Դպրոցական դասարանների դասագրքերում իրավական գիտելիքները մատուցվում են տարբեր տարիքային փուլերում և տարբեր համատեքստերում: Այստեղ դրանք միավորված են մեկ ամբողջական համակարգի մեջ: Յուրաքանչյուր թեմա բացահայտվում է թեստային, համապատասխանեցման, լրացման և շարադրվող առաջադրանքների միջոցով:

Շտեմարանը նախատեսված է իրավաբանական ֆակուլտետների դիմորդների, ինչպես նաև իրավագիտության առաջին կուրսի ուսանողների համար: Այն կարող է օգտագործվել թե՛ դասապրոցեսում գիտելիքների ստուգման, թե՛ իրավագիտության հիմնարար հասկացությունների սկզբնական իմացության գնահատման նպատակով:

ՀՏԴ 321.01:373(07)
ԳՄԴ 66.0+74.2g7

ISBN 978-9939-1-2380-6
© Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ, 2026

ՇՏԵՄԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԿՐԹԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հարգելի՛ ընթերցող,

Ձեր ուշադրությանը ներկայացվող շտեմարանը ստեղծվել է երկու փոխկապակցված նպատակներով՝ օբյեկտիվորեն գնահատել հանրակրթական դպրոցի «Հասարակագիտություն» դասընթացի շրջանակում սովորողների ձեռք բերած գիտելիքները և ստուգել բուհական իրավագիտական կրթության համար անհրաժեշտ նախնական պատրաստվածությունը: Այս երկու նպատակները միավորում են կրթության շարունակականության գաղափարը. դպրոցում ձևավորված գիտելիքներն ու մտածողության հմտությունները պետք է դառնան բուհական ուսուցման հուսալի հիմք: Այդ առումով շտեմարանը կապող օղակ է հանրակրթության և բարձրագույն իրավագիտական կրթության միջև:

Ուսուցչին այն հնարավորություն է ընձեռելու պարզել, թե որքանով են սովորողները յուրացրել դասընթացի հիմնարար հասկացություններն ու առանցքային դրույթները, և որ հարցերն են պահանջում լրացուցիչ աշխատանք: Համալսարանի դիմորդի համար այն ինքնուրույն նախապատրաստման և ինքնագնահատման միջոց է՝ օգնելով տեսնելու սեփական գիտելիքների բացերն ու հետևողականորեն լրացնելու դրանք: Շտեմարանը հնարավորություն է տալիս գնահատելու բուհի ընդունելության թեկնածուների և առաջին կուրսի ուսանողների պատրաստվածությունը՝ հետագա ուսուցումն առավել նպատակային կազմակերպելու համար:

Շտեմարանի թեմատիկ շրջանակը պայմանավորված է կրթական այս նպատակներով: Այն ընդգրկում է «Հասարակագիտություն» դասընթացի միայն պետականագիտական և իրավագիտական թեմաները՝ պետություն, քաղաքացիական հասարակություն, իրավունք և բարոյականություն, մարդու իրավունքներ, իրավունքի համակարգ և իրավապահ մարմիններ, միջազգային իրավունք: Նմանատիպ ընտրությունն ուղղակիորեն բխում է շտեմարանի գործառութային նշանակությունից: Այս թեմաները կազմում են այն հասկացութային հիմքը, որն անհրաժեշտ է պետության և իրավունքի տեսության, սահմանադրական իրավունքի, մարդու իրավունքների, միջազգային իրավունքի և իրավագիտական այլ դասընթացների ուսումնասիրության համար: Թեմատիկ շրջանակի գիտակցված սահմանափակումը հնարավորություն է տվել ընտրված հիմնախնդիրներն առաջադրանքներում ներկայացնելու առավել խորությամբ՝ կարևորելով դրանց փոխկապակցվածությունն ու գործնական նշանակությունը:

Շտեմարանն ընդգրկում է վեց թեմատիկ բաժնում համակարգված ավելի քան վեց հարյուր առաջադրանք: Դրանք ներկայացված են ընտրովի պատասխանով, հարցերի համապատասխանեցման, առաջադրանքների լրացման, ինչպես նաև շարադրվող աշխատանքի ձևով: Առաջադրանքների բազմազանությունը հնարավորություն է տալիս գնահատելու ինչպես գիտելիքի յուրացման աստիճանը, այնպես էլ այդ գիտելիքը կիրառելու կարողությունը: Շտեմարանով աշխատանքը կարող է օգտակար լինել նաև ուսումնառության ընթացքում որպես քննարկման, գիտելիքների ամրապնդման և վերլուծական հմտությունների զարգացման միջոց:

Շտեմարանի առաջադրանքները գերազանցապես վերլուծական ուղղվածություն ունեն: Դրանք սովորողից պահանջում են բացահայտել հասկացությունների միջև տրամաբանական և պատճառահետևանքային կապերը, համեմատել իրավական ու հասարակական երևույթները, տեսական դրույթները կիրառել կոնկրետ իրավիճակների նկատմամբ: Առանձնակի կարևորություն է տրվել նաև սեփական դիրքորոշումը հիմնավորելու և միտքը հետևողականորեն շարադրելու կարողությանը: Այս մոտեցումը գիտելիքի վերարտադրությունը կապում է դրա իմաստավորման ու կիրառման հետ՝ սովորողին մղելով գնահատելու նաև իր պատասխանի հիմնավորվածությունը:

Շարադրվող առաջադրանքներին կից ներկայացված ակնկալվող պատասխաններն ունեն ուղենշային նշանակություն: Դրանք առանձնացնում են պատասխանի պարտադիր բովանդակային տարրերը և օգնում հասկանալու, թե ինչ պետք է ներառի լիարժեք անդրադարձը տվյալ հարցին: Միաժամանակ դրանք չեն սահմանափակում պատասխանը մեկ ձևակերպմամբ և չեն բացառում այլընտրանքային մոտեցումներ, եթե վերջիններս բովանդակապես ճիշտ են և պատշաճ հիմնավորված: Այս սկզբունքը կարևոր է նաև գնահատման համար. ուշադրության կենտրոնում պետք է լինեն պատասխանի բովանդակությունն ու փաստարկվածությունը, ոչ թե առաջարկվող օրինակի բառացի վերարտադրությունը:

Կրթական չափորոշիչների արդիականացումը պահանջում է վերանայել նաև գիտելիքների և կարողությունների գնահատման մոտեցումները: Ժամանակակից կրթության նպատակն է գիտելիքի յուրացման հետ մեկտեղ զարգացնել քննադատական մտածողությունը, վերլուծելու, փաստարկելու և սովորածը գործնականում կիրառելու կարողությունը: Գնահատման գործիքակազմը ևս պետք է ուղղված լինի այս արդյունքների բացահայտմանը: Միայն անգիր սովորած տեղեկությունների ստուգումը չի կարող լիարժեք պատկեր տալ սովորողի պատրաստվածության մասին և արտացոլել այն արդյունքները, որոնց ձգտում է արդի կրթական համակարգը: Շտեմարանի առջև դրված հիմնական խնդիրներից մեկն էլ գնահատման նոր կարողունակությունների վրա հիմնված մոտեցման ներդրմանն ու կիրառմանը նպաստելն է:

Իրավագիտական կրթությունը ենթադրում է ինչպես մասնագիտական գիտելիքների և հմտությունների ձեռքբերում, այնպես էլ իրավագիտակցության ու իրավական մշակույթի ձևավորում: Վերջիններս առանցքային նշանակություն ունեն իրավական պետության կայացման համար: Այս մշակույթի հիմքերը դրվում են դեռևս դպրոցում, երբ սովորողը սկսում է հասկանալ պետության ու իրավունքի դերը, մարդու իրավունքների, ազատությունների և պատասխանատվության բովանդակությունը: Իրավունքի մասին գիտելիքն այս փուլում կարևոր է և՛ մասնագիտական կողմնորոշման, և՛ պատասխանատու քաղաքացիական վարքագծի ձևավորման համար:

Բուհական դասավանդման փորձը վկայում է, որ առաջին կուրսի ուսանողների դժվարությունները հաճախ պայմանավորված են ոչ այնքան փաստական գիտելիքների պակասով, որքան իրավական մտածողության տարրական հմտությունների և հիմնական հասկացությունների անբավարար ընկալմամբ ու յուրացմամբ: Փաստական տեղեկությունների առկայությունն ինքնին դեռ չի նշանակում, որ ուսանողը կարողանում է տարբերակել իրավական երևույթները, տեսնել դրանց կապերը կամ հիմնավորել իր եզրահանգումը: Շտեմարանի վերլուծական ուղղվածությունը միտ-

ված է հենց այս բացը լրացնելուն և իրավագիտական առարկաների հետագա ուսումնասիրության համար ամուր հիմք ստեղծելուն:

Արժևորում ենք հեղինակների կատարած մանրակրկիտ և համակարգված աշխատանքը: Առաջադրանքները կազմվել են դպրոցական դասագրքերի բովանդակության խոր ուսումնասիրության և համադրման հիման վրա՝ հաշվի առնելով բուհական իրավագիտական կրթության սկզբնական փուլում անհրաժեշտ գիտելիքների ու կարողությունների շրջանակը: Արդյունքում ստեղծվել է ուսումնական գործիք, որը համահունչ է դպրոցական դասընթացի բովանդակությանը և նպաստում է բուհական ուսուցման համար անհրաժեշտ նախապատրաստությանը:

Համոզված ենք, որ շտեմարանն օգտակար կլինի «Հասարակագիտություն» դպրոցական դասընթացի ուսուցիչների ու սովորողների, իրավագիտական կրթություն ստանալու ձգտում ունեցող դիմորդների և իրավագիտության ֆակուլտետների դասախոսների համար: Ակնկալում ենք, որ այն կծառայի գիտելիքների ու կարողությունների գնահատմանը, կնպաստի իրավական մտածողության զարգացմանը և կսատարի ապագա իրավաբանների մասնագիտական կայացման առաջին քայլերին:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
դեկան, իրավ. գիտ. դոկտոր պրոֆեսոր ***Հ. Մ. Խաչիկյան***

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ 7
2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 29
3. ԻՐԱՎՈՒՆՔ, ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 53
4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 69
5. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐ 86
6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ 109

Թեմա 1

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏՐՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Պետության հատկանիշները և էությունը

1. Որո՞նք են ժամանակակից պետության՝ այլ պետությունների կողմից ճանաչվելու հատկանիշները.

ա) մշտական բնակչություն, սահմանված տարածք, հանրային իշխանություն, այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու իրավասություն,
բ) մշտական բանակ, պետական դրոշ, օրհներգ, մայրաքաղաք,
գ) ազգային արժույթ, պետական լեզու, կրոն, սահմանադրություն,
դ) ազգային դրոշ, զինանշան, օրհներգ և ազգային տոներ:

2. Ո՞վ է պետության քաղաքացին.

ա) տվյալ երկրում ժամանակավոր բնակվող ցանկացած անձ,
բ) տվյալ երկիր այցելած ցանկացած զբոսաշրջիկ,
գ) հասարակության անդամ, որն իրավաբանորեն կապված է պետությանը՝ ունենալով փոխադարձ իրավունքներ և պարտականություններ,
դ) պետական պաշտոնյա, որն աշխատում է կառավարական մարմիններում:

3. «Մշտական բնակչություն» ասելով՝ հասկանում ենք.

ա) տվյալ պետության հետ իրավաբանորեն մշտապես փոխկապակցված մարդկանց ամբողջությունը,
բ) երկիր այցելած զբոսաշրջիկներին ու կարճ ժամանակով բնակվողներին,
գ) միայն մայրաքաղաքում ապրող մարդկանց,
դ) միայն տվյալ երկրի չափահաս, աշխատունակ բնակչությանը:

4. Ինչո՞ւ է պետությանն անհրաժեշտ սահմանված տարածք.

ա) որպեսզի ավելի շատ բնական պաշարներ ունենա,
բ) որպեսզի կարողանա ավելի մեծ բանակ պահել,
գ) որովհետև մարդիկ պետք է ապրեն որոշակի սահմաններով ամրագրված տարածքի վրա,
դ) որպեսզի հարևան պետություններից տարբերվի իր դրոշով և զինանշանով:

5. Ի՞նչ է նշանակում պետության ինքնիշխանությունը.

ա) պետությունն ունի մեկ ղեկավար՝ միապետ,
բ) պետությունն անկախ է այն միջազգային կազմակերպություններից, որոնց անդամակցում է,
գ) պետությունը կառավարվում է ժողովրդի ընտրած խորհրդարանի կողմից,
դ) պետության իշխանությունն իր տարածքում գերակա է մյուս բոլոր իշխանություններից, իսկ արտաքին հարաբերություններում անկախ է այլ պետություններից:

6. Ո՞ր միջազգային պայմանագրով է պետությունների ինքնիշխանության գաղափարն առաջին անգամ իրավաբանորեն ամրագրվել.

ա) Վերսալյան պայմանագրով,
բ) Սևրի պայմանագրով,
գ) Վեստֆալյան պայմանագրով,
դ) Լոզանի պայմանագրով:

7. Հին Հռոմում Ցիցերոնը պետությունը բնութագրեց որպես res publica, այսինքն.

ա) միապետի սեփականություն, որի բնակիչները իր հպատակներն են,
բ) ընդհանուրի գործ, ընդհանուրի սեփականություն, որտեղ պետք է իշխի իրավունքը,
գ) աստվածների բնակավայր՝ ստեղծված գերագույն աստծո կողմից,
դ) ռազմական հզորության վրա հիմնված համաշխարհային կայսրություն:

8. «Պետությունը ես եմ» հայտնի արտահայտությունը վերագրվում է.

ա) Հռոմի սենատոր Ցիցերոնին,
բ) Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս (Լուի) 14-րդին,
գ) հույն իմաստասեր Պլատոնին,
դ) Հռոմի կայսր Հուլիոս Կեսարին:

9. Լուսավորական շարժման և Ֆրանսիական մեծ հեղափոխության շնորհիվ պետությունները սկսեցին դիտարկվել որպես.

ա) հասարակության անդամների համաձայնությամբ ձևավորված աշխարհիկ քաղաքական կազմակերպություններ,
բ) Աստծո կամքով ձևավորված կրոնական կառույցներ,
գ) միապետի անձնական սեփականություն,
դ) առանձին ընտանիքների սեփականություն հանդես եկող տնտեսական միավորներ:

10. Ժամանակակից պետություններում պետական իշխանությունը սովորաբար ունի.

ա) մեկ ճյուղ, որ ներառում է նաև իշխանության բոլոր ճյուղերը,
բ) երեք ճյուղ՝ օրենսդիր, գործադիր և դատական,
գ) երկու ճյուղ՝ օրենսդիր և գործադիր, որը ներառում է դատականը,
դ) չորս ճյուղ՝ օրենսդիր, գործադիր, դատական և վերահսկող:

11. Իշխանության ո՞ր ճյուղին են վերապահված պետական բյուջեի հաստատումը և միջազգային պայմանագրերի վավերացումը.

ա) գործադիր իշխանությանը,
բ) օրենսդիր իշխանությանը,
գ) դատական իշխանությանը,
դ) օրենսդիր և գործադիր իշխանություններին՝ համատեղ:

12. Ըստ ՀՀ Սահմանադրության՝ հանրային իշխանությունը.

ա) սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով,
բ) անսահմանափակ է,
գ) սահմանափակված է միայն միջազգային կազմակերպությունների իրավասությամբ,
դ) սահմանափակված է միայն նախագահի որոշումներով:

13. Ստորև թվարկվածներից ո՞ր օրինակն է հանրային իշխանության դրսևորում.

ա) կառավարությունը որոշում է նոր հարկեր սահմանել,
բ) ուսուցիչը որոշում է, որ դասարանում պետք է լռություն պահպանել,
գ) ծնողները որոշում են, թե որ ժամին պետք է երեխան բակում խաղա,
դ) հարևանները որոշում են, թե ով կարող է մտնել իրենց բակ:

14. Ինչն է պետության առաջացման բնական նախադրյալը՝ նրա գոյության նյութական և սոցիալական հիմքը.

ա) հանրային իշխանության ապարատը,
բ) տարածքը և դրա վրա ապրող բնակչությունը,
գ) հասարակական կյանքի կարգավորումն իրավական նորմերով,
դ) պետական խորհրդանիշների ամբողջությունը:

15. Ինչո՞վ է բնութագրվում պետության ինքնիշխանությունը.

ա) ազատ, պարբերական և այլընտրանքային ընտրություններով,
բ) հասարակությունից առանձնացված կառավարման ապարատի առկայությամբ,
գ) միջազգային կազմակերպություններին անդամակցելով,
դ) երկրի ներսում պետական իշխանության գերակայությամբ և արտաքին հարաբերություններում անկախությամբ:

Պետության գործառույթները

16. Որո՞նք են պետության գործառույթները.

ա) պետության խորհրդանիշները,
բ) պետության սահմանները,
գ) պետության պատմական սահմանները,
դ) պետության գործունեության հիմնական ուղղությունները:

17. Ո՞ր փաստաթղթում են սահմանված Հայաստանի Հանրապետության նպատակները.

ա) ՀՀ զինանշանի մասին օրենքում,
բ) Անկախության հռչակագրում,
գ) ՀՀ քաղաքացիական օրենսգրքում,
դ) ՀՀ քրեական օրենսգրքում:

18. Ըստ ուղղվածության՝ պետության գործառույթները բաժանվում են.

ա) մշտականի և ժամանակավորի,
բ) համապետականի և տեղականի,
գ) ներքինի և արտաքինի,
դ) օրենսդիրի և գործադիրի:

19. Քաղաքացիներին անձնագրեր տալը, հաշվառելը, ոստիկանական ծառայություն իրականացնելը պետության ո՞ր գործառույթի օրինակ են.

ա) արտաքին գործառույթի,
բ) ներքին գործառույթի,
գ) ժամանակավոր գործառույթի,
դ) միաժամանակ համապետական և տեղական գործառույթների:

20. Երկրի պաշտպանությունը, դիվանագիտական հարաբերությունները և արտաքին առևտուրը վերաբերում են պետության.

ա) ներքին գործառույթներին,
բ) տեղական գործառույթներին,
գ) արտաքին գործառույթներին,
դ) ժամանակավոր գործառույթներին:

21. Ստորև թվարկվածներից ո՞րն է պետության ժամանակավոր գործառույթի օրինակ.

ա) կրթության կազմակերպումը,
բ) երկրաշարժից հետո տուժածներին ֆինանսական աջակցությունը,
գ) հարկերի հավաքումը,
դ) ազգային անվտանգության մշտական ապահովումը:

22. Կրթության համակարգի կառավարումը, երբ ընդունվում է կրթության մասին օրենք ողջ երկրի համար, պետության ո՞ր գործառույթի օրինակ է.

ա) տեղական,
բ) ժամանակավոր,
գ) արտաքին,
դ) համապետական գործառույթի:

23. Քաղաքի կամ գյուղի աղբահանության կազմակերպումը, որը կախված է տվյալ համայնքի կարիքներից, պետության ո՞ր գործառույթի օրինակ է.

ա) համապետական,
բ) արտաքին,
գ) տեղական,
դ) ժամանակավոր գործառույթի:

24. «Պետության գործառույթների շրջանակը կախված է տվյալ պահին հասարակության առջև ծառացած խնդիրներից» միտքը նշանակում է.

ա) պետության խնդիրներն ու գործառույթները նույնական են,
բ) պետության խնդիրները կապ չունեն նրա գործառույթների հետ,
գ) պետության խնդիրները ձևավորվում են գործառույթներից անկախ, պատահականորեն,
դ) պետության խնդիրն այն է, ինչը լուծում է պահանջում, իսկ գործառույթն այդ լուծմանն ուղղված գործունեությունն է:

25. Ստորև թվարկվածներից ո՞րը պետության արտաքին գործառույթ չէ.

ա) երկրի պաշտպանության գործառույթը,
բ) դիվանագիտական (արտաքին) հարաբերությունների գործառույթը,
գ) միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման գործառույթը,
դ) սոցիալ-տնտեսական գործառույթը:

Պետության ձևը

26. Պետության ձևը ներառում է.

ա) միայն կառավարման ձևը,
բ) միայն տարածքային կառուցվածքը,
գ) կառավարման ձևը, տարածքային կառուցվածքն ու պետաիրավական ռեժիմը,
դ) միայն կառավարման ձևն ու պետաիրավական ռեժիմը՝ առանց տարածքային կառուցվածքի:

27. Ըստ Արիստոտելի՝ պետության ճիշտ ձևերում գերակայում է.

ա) մասնավոր և խմբային շահը,
բ) միապետի անձնական շահը,
գ) ուժեղների իշխանությունը թույլերի նկատմամբ,
դ) հանրային շահը և ընդհանուր բարօրությունը:

28. Ըստ Արիստոտելի դասակարգման՝ պետության սխալ ձև է.

ա) արիստոկրատիան,
բ) օլիգարխիան,
գ) պոլիտիան,
դ) թագավորությունը (միապետությունը):

29. Ըստ Արիստոտելի՝ ամբոխավարություն (օխլոկրատիա) է համարվում.

ա) պետության ճիշտ ձևը,
բ) միապետության տարատեսակը,
գ) ժողովրդավարության վատագույն ձևը,
դ) արիստոկրատիայի բարձրագույն դրսևորումը:

30. Կառավարման ձևի տեսանկյունից պետությունները լինում են.

ա) ունիտար և դաշնային,

բ) ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական,

գ) կենտրոնացված և ապակենտրոնացված,

դ) միապետություն և հանրապետություն:

31. Բացարձակ միապետությունում իշխանությունը.

ա) ամբողջությամբ կենտրոնացած է ժառանգաբար իշխանություն ստացող մեկ անձի ձեռքում,

բ) բաժանված է խորհրդարանի և միապետի միջև,

գ) պատկանում է ընտրված նախագահին,

դ) պատկանում է ազնվականների խորհրդին:

32. Ստորև թվարկվածներից ներկայումս գործող բացարձակ միապետության օրինակ է.

ա) Մեծ Բրիտանիան,

բ) Գերմանիան,

գ) Ֆրանսիան,

դ) Սաուդյան Արաբիան:

33. Խորհրդարանական սահմանադրական միապետությունում միապետը.

ա) իրականացնում է բարձրագույն օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները,

բ) ձևավորում է կառավարությունը և միանձնյա ղեկավարում այն,

գ) նշանակում է դատավորներին և միանձնյա վավերացնում բոլոր օրենքները,

դ) թագավորում է, բայց չի կառավարում. հիմնականում ունի արարողակարգային գործառույթներ:

34. Ո՞ր հանրապետությունում է կառավարությունը պարտադիր ձևավորվում խորհրդարանի կողմից և հաշվետու է նրան, իսկ նախագահը հիմնականում ունի արարողակարգային դեր.

ա) խորհրդարանական,

բ) նախագահական,

գ) խառը,

դ) դաշնային հանրապետությունում:

35. 2015 թ. սահմանադրական փոփոխություններից հետո Հայաստանի Հանրապետությունը կառավարման ձևով դարձավ.

ա) խորհրդարանական հանրապետություն,

բ) նախագահական հանրապետություն,

գ) բացարձակ միապետություն,

դ) խառը (կիսանախագահական) հանրապետություն:

36. Պետաիրավական կամ պետաքաղաքական վարչաձևի (ռեժիմի) ամենաընդհանրական բաժանումն է.

ա) միապետություն և հանրապետություն,
բ) ունիտար և դաշնային,
գ) ավտորիտար և տոտալիտար,
դ) ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական:

37. Ինչպիսի՞ կապ կա պետաիրավական ռեժիմի և կառավարման ձևի միջև.

ա) դրանք միշտ համընկնում են,
բ) միապետությունը միշտ ոչ ժողովրդավարական է,
գ) ուղղակի կապ չկա. պարտադիր չէ, որ մեկը մյուսի վրա ազդի,
դ) ռեժիմը միշտ որոշում է կառավարման ձևը:

38. Ունիտար (պարզ) պետությունը կազմված է.

ա) պետական կազմավորման կարգավիճակ ունեցող ինքնուրույն սուբյեկտներից,
բ) լրիվ ինքնիշխան պետությունների միությունից,
գ) պետական կազմավորման կարգավիճակ չունեցող վարչատարածքային միավորներից,
դ) որոշակի նպատակների շուրջ միավորված ինքնիշխան պետություններից:

39. Համադաշնությունը (կոնֆեդերացիան).

ա) մեկ ինքնիշխան պետություն է՝ մարզերի բաժանված,
բ) որոշակի նպատակների համար միավորված լրիվ ինքնիշխան պետությունների միություն է,
գ) բացարձակ միապետություն է,
դ) մեկ կենտրոնական իշխանության ենթակա վարչատարածքային միավորներից բաղկացած միություն է:

40. Ստորև թվարկվածներից ո՞րը պետաքաղաքական վարչաձևի հատկանիշ չէ.

ա) անմիջական ժողովրդաիշխանության իրականացման աստիճանը,
բ) մարդու իրավունքների իրական լինելու և երաշխավորվածության աստիճանը,
գ) պետական կառավարման ձևը (հանրապետական և միապետական),
դ) պետական որոշումներ ընդունելիս փոքրամասնության շահերը հաշվի առնելու աստիճանը:

41. Ստորև թվարկվածներից ո՞րն է պետական կառավարման ձևի բնութագիրը.

ա) պետության և նրա տարածքային բաղկացուցիչ մասերի փոխհարաբերության բնույթը,
բ) պետական իշխանության տարածքային կազմակերպումը, ներքին բաժանումը մասերի,
գ) պետական իշխանության իրականացման մեթոդներն ու եղանակները (ժողովրդավարական կամ ոչ),
դ) պետական մարմինների ձևավորման կարգը, դրանց փոխգործակցությունը միմյանց միջև և բնակչության հետ:

42. Ստորև թվարկվածներից ո՞րը սահմանափակ միապետության տարատեսակ չէ.

ա) վաղ ավատատիրական միապետությունը,
բ) հին արևելյան միահեծանությունը (բացարձակ միապետությունը),
գ) դասային–ներկայացուցչական միապետությունը,
դ) սահմանադրական միապետությունը:

43. Որո՞նք են պետության տարածքային կառուցվածքի ձևի տեսակները.

ա) խորհրդարանական և նախագահական հանրապետությունները,
բ) ունիտար (պարզ) և դաշնային (բարդ) պետությունները,
գ) դուալիստական և խորհրդարանական միապետությունները,
դ) ժողովրդավարական և ավտորիտար պետությունները:

44. Ստորև թվարկվածներից ո՞րը պետական կառավարման ձև չէ.

ա) դաշնային (ֆեդերատիվ) պետությունը,
բ) նախագահական հանրապետությունը,
գ) խորհրդարանական հանրապետությունը,
դ) կիսանախագահական (խառը) հանրապետությունը:

45. Նախագահական հանրապետությունում գործադիր իշխանությունը (կառավարությունը).

ա) ձևավորվում է նախագահի կողմից,
բ) ձևավորվում է խորհրդարանի կողմից,
գ) ձևավորվում է դատարանի կողմից,
դ) ձևավորվում է ժողովրդի կողմից ուղղակի ընտրություններով:

46. Ո՞րն է ներկայումս Հայաստանի Հանրապետության կառավարման ձևը.

ա) նախագահական հանրապետությունը,
բ) դուալիստական միապետությունը,
գ) խորհրդարանական հանրապետությունը,
դ) խառը (կիսանախագահական) հանրապետությունը:

Ժողովրդավարություն և ընտրություններ

47. Ստորև թվարկվածներից ո՞րը ժողովրդավարության բնութագիր չէ.

ա) ժողովրդավարությունը ենթադրում է քաղաքական բազմազանություն,
բ) ժողովրդավարությունը ենթադրում է տնտեսական բազմազանություն,
գ) ժողովրդավարությունը ենթադրում է ամենաթողություն,
դ) բոլոր պատասխանները սխալ են:

48. Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ ՀՀ-ում իշխանությունը պատկանում է.

ա) Հայաստանի ժողովրդին,
բ) Հայաստանի պետությանը,

գ) հասարակական կազմակերպություններին,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

49. Ստորև թվարկվածներից ո՞րն է լավագույնս արտացոլում ժողովրդաիշխանության իրականացման ձևերը.

ա) ներկայացուցչական և անմիջական ժողովրդաիշխանությունը,
բ) միայն ներկայացուցչական (անուղղակի) ժողովրդաիշխանությունը,
գ) միայն անմիջական (ուղղակի) ժողովրդաիշխանությունը,
դ) բոլոր պատասխանները սխալ են:

50. Ստորև թվարկվածներից ո՞րն է բնութագրում ժողովրդաիշխանության ներկայացուցչական ձևը.

ա) ժողովուրդը մասնակցում է հանրաքվեներին,
բ) ժողովուրդը կարող է ձեռնարկել ժողովրդական օրենսդրական նախաձեռնություն,
գ) ժողովուրդը որոշումների ընդունումն իրականացնում է իր առջև պատասխանատու մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

51. Ուղղակի ընտրությունը որպես ընտրական սկզբունք ենթադրում է.

ա) ընտրողն ընտրում է անմիջապես, այլ ոչ թե ընտրիչների միջոցով,
բ) ընտրողն ընտրում է ընտրիչների միջոցով,
գ) ընտրողները կարող են ընտրել լիազորի միջոցով,
դ) բոլոր պատասխանները սխալ են:

52. Ստորև բերված դատողություններից ո՞րն է բնութագրում ընտրությունների ազատության սկզբունքը.

ա) ընտրողն ինքն է կատարում ընտրությունը՝ ելնելով իր շահերից,
բ) ընտրական հանձնաժողովներն անկախ են պետական մարմիններից,
գ) ընտրությունները պարտադիր են և պարբերական,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

53. Ստորև թվարկվածներից ո՞րը «հավասար ընտրական իրավունք» սկզբունքի բովանդակային դրույթ չէ.

ա) ընտրությունները կազմակերպվում են «մեկ քաղաքացի, մեկ ձայն» սկզբունքով,
բ) նույն անձը կարող է ընդգրկվել միայն մեկ համայնքի ընտրողների ցուցակում,
գ) նույն անձը կարող է ընդգրկվել միայն երկու համայնքի ընտրողների ցուցակում մեկ անգամ,
դ) բոլոր պատասխանները սխալ են:

54. Ժողովրդաիշխանության ո՞ր գործընթացն է նկարագրվում հետևյալ մտքում. «Այն թույլ է տալիս քաղաքակիրթ կերպով, առանց ցնցումների և հեղափոխության պայքարել իշխանության համար, օրինական ճանապարհով փոխել կառավարողներին».

ա) համընդհանուր ընտրություններ,
բ) համաժողովրդական հանրաքվե,
գ) ժողովրդական օրենսդրական նախաձեռնություն,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

55. Ստորև թվարկվածներից ո՞րը ժողովրդավարության բնութագիր չէ.

ա) ազատ և մրցակցային ընտրությունները,
բ) դասակարգային գերիշխանությունը,
գ) մեծամասնության իշխանությունը փոքրամասնության իրավունքների պահպանմամբ,
դ) բոլոր պատասխանները սխալ են:

56. Ժողովրդավարության համակարգում որոշումների ընդունումը մեծամասնության կամքով, փոքրամասնության իրավունքների պարտադիր պահպանմամբ.

ա) հակաժողովրդավարական կարգ է,
բ) իսկական ժողովրդավարական կարգ է,
գ) միշտ վտանգում է փոքրամասնության շահերը,
դ) բոլոր պատասխանները սխալ են:

Պետություն և քաղաքացի

57. Ի տարբերություն միջնադարյան հպատակների՝ ժամանակակից պետության քաղաքացիներն ունեն.

ա) փոխադարձ իրավունքներ և պարտականություններ իրենց պետության նկատմամբ,
բ) միայն պարտականություններ պետության առջև,
գ) միայն իրավունքներ՝ առանց որևէ պարտավորության,
դ) միայն ընտրություններին մասնակցելու իրավունք՝ առանց այլ իրավունքների:

58. Ինչո՞ւ մարդիկ ստեղծեցին պետությունները.

ա) որպեսզի ավելի շատ հարկ վճարեն,
բ) որպեսզի սահմանափակեն իրենց ազատությունը,
գ) որպեսզի մեկ անձ կարողանա անսահմանափակ իշխանություն ունենալ,
դ) որպեսզի ավելի անվտանգ ու պաշտպանված զգան, և երաշխավորվի իրենց իրավունքների կենսագործումը:

59. Իրավագիտակից քաղաքացին իրավաչափ վարքագիծ է դրսևորում.

ա) քանի որ վախենում է պատժից,
բ) միայն այն դեպքում, երբ գիտի, որ իրեն հետևում են,
գ) այն համոզմունքից ելնելով, որ դա անհրաժեշտ է իր, հանրության և պետականության համար,
դ) միայն այն ժամանակ, երբ դա անձնապես ձեռնտու է իրեն:

60. Ստորև թվարկվածներից ո՞րն է իրավագիտակից քաղաքացու վարքագծի օրինակ.

ա) սոցիալական ցանցերում ապատեղեկատվության տարածումը,
բ) ընտրություններին ակտիվ մասնակցությունը և հարկերի վճարումը,
գ) երթևեկության կանոններին չհետևելը,
դ) հասարակական վայրերում աղբ թափելը:

61. Ինչո՞ւ է իրավագիտակից քաղաքացին վճարում հարկեր.

ա) որովհետև գիտակցում է, որ դրանցից են գոյանում կենսաթոշակների, դպրոցների, բանակի ֆինանսավորման միջոցները,
բ) որովհետև վախենում է տուգանվելուց,
գ) որովհետև օրենքն է պարտադրում,
դ) որպեսզի պետությունը հարստանա քաղաքացու հաշվին:

62. Ստորև թվարկվածներից ո՞րը պետության՝ իր պարտականություններից շեղվելու դրսևորում է.

ա) քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը,
բ) անվճար կրթության ապահովումը,
գ) կոռուպցիան և մի խումբ անձանց շահերին հանրային իշխանության ծառայեցումը,
դ) հասարակական կարգի և անվտանգության ապահովումը:

Կոռուպցիա և թրաֆիքինգ

63. Ի՞նչ է կոռուպցիան.

ա) պետական ծառայողի օրինական աշխատավարձ,
բ) հարկերի օրինական վճարում,
գ) պետական մարմիններին ուղղված օրինական բողոք,
դ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումը անձնական օգուտ ստանալու նպատակով:

64. Կոռուպցիայի տեսակ չէ.

ա) աշխատավարձ ու հավելավճար ստանալը,
բ) նեպոտիզմն ու ֆավորիտիզմը,
գ) կաշառք տալը և վերցնելը,
դ) պաշտոնեական դիրքն անձնական շահի համար չարաշահելը:

65. Ի՞նչ է նեպոտիզմը.

ա) պաշտոնի նշանակելիս բարեկամներին ու ընկերներին նախապատվություն տալը՝ առանց նրանց արժանիքները հաշվի առնելու,
բ) կաշառք վերցնելը,
գ) մարդկանց շահագործումը,
դ) պետական գույքի օրինական և թափանցիկ կառավարումը:

66. Ֆավորիտիզմն այն դեպքն է, երբ չարդարացված նախապատվություն է ցուցաբերվում.

ա) ամենաարժանավոր մասնագետներին,
բ) բոլոր քաղաքացիներին հավասարապես,
գ) իշխանություն ունեցող մարդուն հաճելի, կամակատար մարդկանց,
դ) մրցույթով ընտրված ամենաարժանավոր թեկնածուներին:

67. Ստորև թվարկվածներից ո՞րն է կոռուպցիայի տնտեսական հետևանք.

ա) հարկերի մուտքի ավելացումը պետբյուջե,
բ) ստվերային տնտեսության աճը և արտասահմանյան ներդրողների վստահության նվազումը,
գ) առողջ տնտեսական մրցակցության ամրապնդումը,
դ) օտարերկրյա ներդրումների ծավալի աճը:

68. Ի՞նչ է թրաֆիքինգը.

ա) շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը կամ ստանալը ուժի սպառնալիքով, խաբեությամբ կամ հարկադրանքով,
բ) մարդկանց աշխատանքի ընդունումը նվազագույն աշխատավարձով,
գ) զբոսաշրջության կազմակերպումը այլ պետություններում,
դ) աշխատուժի օրինական միգրացիան այլ երկիր:

69. Ստորև թվարկվածներից ո՞րը թրաֆիքինգի նպատակ կարող է լինել.

ա) այլ պետությունում աշխատանքը,
բ) հարկադիր աշխատանքը, սեռական շահագործումը կամ մարմնի մասեր կորզելը,
գ) վճարովի կրթություն ստանալը,
դ) օրինական զբոսաշրջությունը և հանգիստը:

Ընտրովի առաջադրանքների պատասխանների բանալի.

1–ա	**2–գ**	**3–ա**	**4–գ**	**5–դ**	**6–գ**
7–բ	**8–բ**	**9–ա**	**10–բ**	**11–բ**	**12–ա**
13–ա	**14–բ**	**15–դ**	**16–դ**	**17–բ**	**18–գ**
19–բ	**20–գ**	**21–բ**	**22–դ**	**23–գ**	**24–դ**
25–դ	**26–գ**	**27–դ**	**28–բ**	**29–գ**	**30–դ**
31–ա	**32–դ**	**33–դ**	**34–ա**	**35–ա**	**36–դ**
37–գ	**38–գ**	**39–բ**	**40–գ**	**41–դ**	**42–բ**
43–բ	**44–ա**	**45–ա**	**46–գ**	**47–գ**	**48–ա**
49–ա	**50–գ**	**51–ա**	**52–ա**	**53–գ**	**54–ա**
55–բ	**56–բ**	**57–ա**	**58–դ**	**59–գ**	**60–բ**
61–ա	**62–գ**	**63–դ**	**64–ա**	**65–ա**	**66–գ**
67–բ	**68–ա**	**69–բ**			

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

70. Համապատասխանեցրե՛ք պետության ձևի բաղադրիչն իր բնութագրին.

ա) Կառավարման ձև	Ա. Ժողովրդավարական կամ ոչ ժողովրդավարական
բ) Տարածքային կառուցվածք	Բ. Միապետություն կամ հանրապետություն
գ) Պետաիրավական ռեժիմ	Գ. Ունիտար կամ դաշնային

Պատասխան՝ **ա–Բ, բ–Գ, գ–Ա**

71. Համապատասխանեցրե՛ք իշխանության ճյուղը նրա գործառույթին.

ա) Օրենսդիր	Ա. Օրենքների գործնական կիրառման ապահովում, պետական քաղաքականության իրականացում
բ) Գործադիր	Բ. Օրենքների ընդունում, պետական բյուջեի հաստատում
գ) Դատական	Գ. Օրենքների մեկնաբանություն, վեճերի վերջնական լուծում

Պատասխան՝ **ա–Բ, բ–Ա, գ–Գ**

72. Համապատասխանեցրե՛ք կոռուպցիայի տեսակն իր բնութագրին.

ա) Կաշառք	Ա. Բարեկամներին ու ընկերներին պաշտոնի նշանակելը՝ առանց արժանիքները հաշվի առնելու
բ) Նեպոտիզմ	Բ. Գույքային առավելության դիմաց լիազորությունների չարաշահումը
գ) Ֆավորիտիզմ	Գ. Իշխանավորին հաճելի մարդկանց չարդարացված արտոնություն տալը

Պատասխան՝ **ա–Բ, բ–Ա, գ–Գ**

73. Համապատասխանեցրե՛ք հասկացությունն իր բնութագրին.

ա) Ինքնիշխան պետություն	Ա. Հասարակության ընդհանուր, հավաքական շահը
բ) Հանրային շահ	Բ. Իր տարածքում գերակա և արտաքին հարաբերություններում անկախ պետությունը
գ) Քաղաքացի	Գ. Շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելն ու տեղափոխելը
դ) Թրաֆիքինգ	Դ. Պետության հետ իրավաբանորեն փոխկապակցված անձը՝ փոխադարձ իրավունքներով

Պատասխան՝ **ա–Բ, բ–Ա, գ–Դ, դ–Գ**

74. Համապատասխանեցրե՛ք ընտրական սկզբունքն իր բնութագրին.

ա) Համընդհանուր ընտրություններ	Ա. Քվեարկությունը կազմակերպվում է այնպես, որ ընտրողների կամքը մնա գաղտնի
բ) Հավասար ընտրական իրավունք	Բ. ՀՀ 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի ունի ընտրելու, իսկ Սահմանադրությամբ սահմանված տարիքին հասնելու դեպքում՝ ընտրվելու իրավունք
գ) Ուղղակի ընտրություններ	Գ. Ընտրողներն ընտրում են անմիջապես, այլ ոչ թե ընտրիչների միջոցով. արգելվում է լիազորված քվեարկությունը
դ) Գաղտնի քվեարկություն	Դ. Ոչ ոք իրավունք չունի ընտրողին պարտադրելու կամ արգելելու մասնակցել ընտրություններին
ե) Կամավոր ընտրություններ	Ե. Բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով, և յուրաքանչյուր ընտրողի ձայնն ունի նույն կշիռը

Պատասխան՝ **ա–Բ, բ–Ե, գ–Գ, դ–Ա, ե–Դ**

75. Համապատասխանեցրե՛ք հասկացությունն իր բնութագրին.

ա) Սոցիալական պետություն	Ա. Իշխանությունը սահմանափակված է. պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավազոր են կատարելու միայն Սահմանադրությամբ և օրենքներով թույլատրված գործողություններ
բ) Իրավական պետություն	Բ. Ժողովրդի կողմից ընտրվող ներկայացուցչական մարմին, որը որոշում է հասարակության և պետության զարգացման ռազմավարությունը՝ օրենքներ ընդունելով
գ) Օրենսդիր իշխանություն	Գ. Ձգտում է բնակչության համար ապահովել արժանապատիվ ու անվտանգ գոյության պայմաններ, աշխատանք, մոտավորապես միատեսակ կենսական հնարավորություններ
դ) Գործադիր իշխանություն	Դ. Անկախ մարմիններ, որոնք զբաղվում են իրավունքի խախտումների վերաբերյալ վեճերի լուծմամբ, արդարադատության իրականացմամբ
ե) Դատական իշխանություն	Ե. Կազմավորվում է ներկայացուցչական մարմնի կողմից և զբաղվում է օրենքների կենսագործմամբ, ընթացիկ կառավարմամբ

Պատասխան՝ **ա–Գ, բ–Ա, գ–Բ, դ–Ե, ե–Դ**

ԼՐԱՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Լրացրե՛ք բաց թողնված բառը կամ բառակապակցությունը:

76. Պետությունն այն _____ կազմակերպությունն է, որն ունի տարածք, մշտական բնակչություն և հանրային իշխանություն:
Պատասխան՝ **քաղաքական**

77. Պետությունն _____ է, երբ նրա իշխանությունն իր տարածքում գերակա է մյուս բոլոր իշխանություններից, իսկ արտաքին հարաբերություններում անկախ է այլ պետություններից:
Պատասխան՝ **ինքնիշխան**

78. Ժամանակակից պետություններում պետական իշխանությունն ունի երեք ճյուղ՝ օրենսդիր, _____ և դատական:
Պատասխան՝ **գործադիր**

79. Ըստ ՀՀ Սահմանադրության՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական _____ և ազատություններով:
Պատասխան՝ **իրավունքներով**

80. Պետության կառավարման երկու հիմնական ձևերն են միապետությունն ու _____ :
Պատասխան՝ **հանրապետությունը**

81. Այն միապետությունը, որտեղ միապետը թագավորում է, բայց չի կառավարում և ունի հիմնականում արարողակարգային գործառույթներ, կոչվում է _____ միապետություն:
Պատասխան՝ **խորհրդարանական**

82. Ըստ տարածքային կառուցվածքի՝ Հայաստանի Հանրապետությունը _____ (պարզ) պետություն է:
Պատասխան՝ **ունիտար**

83. Ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն անձնական օգուտ ստանալու նպատակով կոչվում է _____ :
Պատասխան՝ **կոռուպցիա**

84. Պաշտոնի նշանակելիս բարեկամներին ու ընկերներին առանց արժանիքների նախապատվություն տալը կոչվում է _____ :
Պատասխան՝ **նեպոտիզմ**

85. Մարդկանց թրաֆիքինգը բաղկացած է երեք տարրից՝ գործողություն, միջոց և _____ :
Պատասխան՝ **նպատակ**

ՇԱՐԱԴՐՎՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Պետության հատկանիշները և էությունը

86. Ի՞նչ է պետությունը: Թվարկե՛ք ժամանակակից պետության՝ որպես այդպիսին ճանաչվելու հատկանիշները:

Ակնկալվող պատասխան. Պետությունը հասարակության քաղաքական կազմակերպությունն է, որն ունի տարածք, այդ տարածքի վրա ապրող մշտական բնակչություն, այդ բնակչության կյանքը կազմակերպելու համար հանրային իշխանություն և այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու հնարավորություն: Ժամանակակից պետությունն այդպիսին ճանաչվելու համար պետք է ունենա մշտական բնակչություն, սահմանված տարածք, կառավարություն (հանրային իշխանություն) և այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու իրավասություն:

87. Ինչպե՞ս է պատմության ընթացքում փոխվել մարդկանց՝ պետության ընկալումը: Բերե՛ք օրինակներ:

Ակնկալվող պատասխան. Տարբեր ժողովուրդներ պետությունն ընկալել են ըստ իրենց մշակույթի, պատմական փորձի ու կրոնական համոզմունքների: Հին Արևելքում (օրինակ՝ Ուրուկում) պետությունն աստվածների կողմից արքային հանձնված քաղաքն էր, որտեղ գերիշխում էին բացարձակ միապետությունները: Հին Հռոմում Ցիցերոնը պետությունը համարեց «ընդհանուրի գործ»: Միջնադարյան Եվրոպայում այն ավատատերերի վասալական աստիճանակարգություն էր, իսկ բացարձակ միապետություններում նույնանում էր միապետի հետ: Լուսավորականության ու Ֆրանսիական մեծ հեղափոխության շնորհիվ պետությունը սկսեց դիտարկվել որպես աշխարհիկ, հասարակական համաձայնությամբ ձևավորված քաղաքական կազմակերպություն:

88. Ի՞նչ է պետության ինքնիշխանությունը, և ինչպե՞ս է այն ամրագրվել պատմականորեն:

Ակնկալվող պատասխան. Պետությունն ինքնիշխան է, երբ նրա իշխանությունն իր տարածքում գերակա է մյուս բոլոր հնարավոր իշխանություններից (տեղական, կրոնական, անձնական և այլն), իսկ արտաքին հարաբերություններում անկախ է այլ պետություններից: Առաջին անգամ պետական ինքնիշխանության մասին խոսել է ֆրանսիացի իրավաբան Ժան Բոդենը 16–րդ դարում, իսկ 17–րդ դարում՝ 30–ամյա պատերազմից հետո կնքված Վեստֆալյան պայմանագրով այդ գաղափարն ամրագրվեց իրավաբանորեն: ՀՀ Սահմանադրության 1–ին հոդվածով Հայաստանը հռչակվում է ինքնիշխան հանրապետություն:

89. Ներկայացրե՛ք պետական իշխանության երեք ճյուղերը և դրանց գործառույթները:

Ակնկալվող պատասխան. Օրենսդիր ճյուղին վերապահված է օրենքների ընդունումը, պետական բյուջեի հաստատումը, կառավարության գործունեության վերահսկողությունն ու միջազգային պայմանագրերի վավերացումը: Գործադիր ճյուղն ապահո-

վում է օրենքների գործնական կիրառումը, մշակում և իրականացնում է պետական քաղաքականությունը, պահպանում է հասարակարգը, պաշտպանում երկիրն արտաքին սպառնալիքներից: Դատական ճյուղին վերապահված է օրենքների մեկնաբանությունը, քաղաքացիների, կազմակերպությունների և իշխանության մարմինների միջև վեճերի վերջնական լուծումը և օրենքի խախտումը որոշելը:

90. Ի՞նչ է նշանակում՝ հանրային իշխանությունն անսահմանափակ չէ: Բերե՛ք օրինակ:

Ակնկալվող պատասխան. ՀՀ Սահմանադրության համաձայն՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Սա նշանակում է, որ եթե անգամ ամբողջ հանրությունը (ցույցի կամ հանրաքվեի միջոցով) կամ պետական մարմինները որոշեն, օրինակ, անձին հրապարակում խոշտանգել, դա անթույլատրելի է, քանի որ խոշտանգման չենթարկվելու իրավունքը հիմնական իրավունքներից է, իսկ մարդը մեղավոր է համարվում ոչ թե հանրության կարծիքով, այլ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

91. Ինչո՞ւ է հնարավոր, որ մի պետություն ճանաչված լինի որոշ պետությունների կողմից, իսկ որոշ պետությունների կողմից՝ ոչ: Բերե՛ք օրինակ:

Ակնկալվող պատասխան. Պետությունների ճանաչումը կախված է քաղաքական հարաբերություններից ու շահերից: Երբ մի պետություն ճանաչում է մյուսին, նրանք կարող են կնքել միջազգային պայմանագրեր ու մասնակցել միջազգային հարաբերություններին, հակառակ դեպքում՝ ոչ: Օրինակ՝ Կոսովոն ԱՄՆ-ի համար պետություն է, քանի որ վերջինս ճանաչել է այն, մինչդեռ Ռուսաստանը չի ճանաչել Կոսովոն: Հակառակ տրամաբանությամբ՝ Ռուսաստանը ճանաչել է Աբխազիան ու Հարավային Օսիան, իսկ ԱՄՆ–ն՝ ոչ: Պակիստանը Արցախի հակամարտության պատճառով չէր ճանաչում Հայաստանը:

Պետության գործառույթները

92. Ի՞նչ են պետության գործառույթները, և ինչո՞վ են դրանք պայմանավորված:

Ակնկալվող պատասխան. Պետության գործառույթները նրա գործունեության հիմնական ուղղություններն են՝ ինչով է զբաղված պետությունը, ինչ նպատակներ է հետապնդում և ինչ խնդիրներ լուծում: Դրանք անքակտելիորեն կապված են պետության նպատակների ու խնդիրների հետ և քարացած չեն. կախված են պատմական դարաշրջանից, պետության առջև ծառացած մարտահրավերներից ու հանրության կողմից դրվող նպատակներից: Օրինակ՝ ստրկատիրական Ասորեստանը սոցիալական պաշտպանության գործառույթ չուներ, մինչդեռ ժամանակակից պետություններն իրականացնում են սոցիալական ապահովության ծրագրեր:

93. Ինչպե՞ս են դասակարգվում պետության գործառույթներն ըստ ուղղվածության, ժամանակի և տարածքի: Բերե՛ք օրինակներ:

Ակնկալվող պատասխան. Ըստ ուղղվածության՝ գործառույթները լինում են ներքին

(պետության ներսում հարաբերությունների կարգավորում, օրինակ՝ ոստիկանական ծառայություն, անձնագրեր տալը) և արտաքին (երկրի պաշտպանություն, դիվանագիտություն, արտաքին առևտուր): Ըստ ժամանակի՝ մշտական (օրինակ՝ կրթության ապահովում) և ժամանակավոր (օրինակ՝ երկրաշարժից հետո տուժածներին օգնություն): Ըստ տարածքի՝ համապետական (ողջ երկիրը՝ կրթության համակարգի կառավարում) և տեղական (կոնկրետ համայնք՝ աղբահանության կազմակերպում):

94. Ինչ է նշանակում՝ պետությունը պետք է գործի մշտապես:

Ակնկալվող պատասխան. Ցանկացած պետություն պետք է գործի մշտապես, քանի որ պետության անգործությունը հավասարազոր է և՛ պետության, և՛ հասարակության կործանմանը: Հանրային իշխանության բացակայությունը կամ ոչ արդյունավետությունը վաղ թե ուշ հանգեցնում է պետության ու հասարակության կազմաքանդմանը, ուստի պետությունը պարտավոր է շարունակաբար իրականացնել իր գործառույթները՝ հասարակության բնականոն համակեցությունն ապահովելու համար:

95. Բերե՛ք պետության հիմնական գործառույթի ոլորտների օրինակներ և բացատրե՛ք դրանց նպատակը:

Ակնկալվող պատասխան. Պետության հիմնական գործառույթի ոլորտներից են՝ օրենքի ապահովումը (հասարակության կյանքը կարգավորող օրենքների ընդունում ու կիրառում), ազգային անվտանգությունը (տարածքային ամբողջականության ու քաղաքացիների պաշտպանություն), սոցիալական պաշտպանությունը (երեխաների, ծերերի, հաշմանդամություն ունեցողների խնամք), տնտեսական կառավարումը, կրթությունը, առողջապահությունը, արտաքին հարաբերությունները և շրջակա միջավայրի պաշտպանությունը: Դրանք բոլորն ուղղված են հասարակության բարեկեցության ապահովմանը:

Պետության ձևը

96. Ինչ է պետության ձևը, և ինչ բաղադրիչներ է այն ներառում:

Ակնկալվող պատասխան. Պետության ձևն արտահայտում է քաղաքական իշխանության ձևավորման, պետական մարմինների կազմավորման, դրանց փոխգործակցության ու տարածքի կառուցվածքային առանձնահատկությունները: Այն ներառում է երեք բաղադրիչ՝ (1) կառավարման ձևը, (2) պետության տարածքային կառուցվածքի ձևը և (3) պետաիրավական ռեժիմը (վարչակարգը): Պետության ձևը քարացած չէ և փոփոխվում է հասարակության պատմական փորձի, տնտեսական ու տեխնոլոգիական զարգացումների հետ:

97. Ինչպե՞ս է Արիստոտելը դասակարգել պետության ձևերը:

Ակնկալվող պատասխան. Արիստոտելն առանձնացրել է ճիշտ և սխալ պետության ձևեր: Ճիշտ ձևերում գերակայում են հանրային շահն ու ընդհանուր բարօրությունը՝ թագավորություն (իշխում է մեկ անձ), արիստոկրատիա (իշխում են լավագույնները՝ ազնվականները) և պոլիտիա (իշխում են լավագույնները՝ մեծամասնության կամքով): Սխալ ձևերում գերակայում է մասնավոր կամ խմբային շահը՝ բռնապետություն (մեկ

անձի իշխանություն հանուն իր շահի), օլիգարխիա (հարուստների իշխանություն) և ամբոխավարություն (ամբոխի իշխանություն՝ առանց գիտելիքի ու առաքինության):

98. Ներկայացրե՛ք միապետության տեսակները:

Ակնկալվող պատասխան. Միապետությունները լինում են բացարձակ և սահմանափակ: Բացարձակ միապետությունում իշխանությունն ամբողջությամբ կենտրոնացած է ժառանգաբար իշխանություն ստացող մեկ անձի ձեռքում, որն իրականացնում է բարձրագույն օրենսդիր, գործադիր և դատական գործառույթները (օրինակ՝ Սաուդյան Արաբիա): Սահմանափակ միապետություններն են՝ վաղ ավատատիրական, դասային–ներկայացուցչական և սահմանադրական: Սահմանադրական միապետությունները լինում են դուալիստական (միապետն ու խորհրդարանը բաժանում են իշխանությունը) և խորհրդարանական (միապետը թագավորում է, բայց չի կառավարում, օրինակ՝ Մեծ Բրիտանիա):

99. Ներկայացրե՛ք հանրապետության տեսակները՝ նշելով Հայաստանի օրինակը:

Ակնկալվող պատասխան. Հանրապետությունները լինում են նախագահական, խորհրդարանական և խառը: Նախագահականում նախագահն է ձևավորում կառավարությունն ու ունի լայն լիազորություններ (օրինակ՝ ԱՄՆ, Հայաստանը մինչև 2005 թ.): Խորհրդարանականում կառավարությունը ձևավորվում է խորհրդարանի կողմից և հաշվետու է նրան, իսկ նախագահն ունի արարողակարգային դեր (օրինակ՝ Գերմանիա, Հայաստանը՝ 2015 թ. սահմանադրական փոփոխություններից հետո): Խառը (կիսանախագահական) տարբերակում և՛ նախագահը, և՛ խորհրդարանն ակտիվ ներգրավված են (օրինակ՝ Ֆրանսիա, Հայաստանը՝ 2005–2015 թթ.):

100. Ի՞նչ է պետաիրավական կամ պետաքաղաքական վարչաձևը (ռեժիմը), և ինչպիսի՞ կապ ունի այն կառավարման ձևի հետ:

Ակնկալվող պատասխան. Պետաիրավական ռեժիմը (վարչակարգ, վարչաձև) վերաբերում է պետական իշխանության իրականացման միջոցներին, մեթոդներին ու եղանակներին: Ամենաընդհանրական բաժանումը ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական ռեժիմների տարբերակումն է: Պետաիրավական ռեժիմն ուղղակի կապ չունի կառավարման ձևի հետ. պարտադիր չէ, որ մեկը մյուսի վրա ազդի: Օրինակ՝ Մեծ Բրիտանիան ու Ճապոնիան կառավարման ձևով միապետություններ են, բայց պետաիրավական ռեժիմով՝ ժողովրդավարական:

101. Ներկայացրե՛ք պետության տարածքային կառուցվածքի տեսակները՝ նշելով Հայաստանի օրինակը:

Ակնկալվող պատասխան. Ըստ տարածքային կառուցվածքի՝ պետությունները լինում են պարզ (ունիտար) և բարդ: Ունիտար պետությունը կազմված է պետական կազմավորման կարգավիճակ չունեցող վարչատարածքային միավորներից, որոնք ենթարկվում են կենտրոնական իշխանությանը. օրինակ՝ Հայաստանը կազմված է մարզերից և Երևան քաղաքից (մարզպետները նշանակվում են կառավարության կողմից): Բարդ

պետությունները լինում են դաշնային (ֆեդերատիվ)՝ հարաբերական ինքնուրույնություն ունեցող սուբյեկտներով (օրինակ՝ ԱՄՆ նահանգներ, Գերմանիայի հողեր), և համադաշնային (կոնֆեդերատիվ)՝ լրիվ ինքնիշխան պետությունների միություն որոշակի նպատակների համար:

Ժողովրդավարություն և ընտրություններ

102. Ներկայացրե՛ք ժողովրդավարական ընտրությունների սկզբունքները հետևյալ սխեմայով՝ համընդհանուր ընտրություններ, հավասար ընտրական իրավունք, ուղղակի ընտրություններ, գաղտնի քվեարկություն:

Ակնկալվող պատասխան. Ժողովրդավարական ընտրություններն իրականացվում են մի շարք սկզբունքներով: Համընդհանուր ընտրություններ. ՀՀ 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի ունի ընտրելու, իսկ Սահմանադրությամբ սահմանված տարիքին հասնելու դեպքում՝ ընտրվելու իրավունք՝ անկախ սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, դավանանքից և այլ հանգամանքներից: Հավասար ընտրական իրավունք. բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով՝ «մեկ քաղաքացի՝ մեկ ձայն» սկզբունքով, և յուրաքանչյուր ընտրողի ձայնն ունի նույն կշիռը: Ուղղակի ընտրություններ. ընտրողներն ընտրում են անմիջապես, այլ ոչ թե ընտրիչների կամ լիազորների միջոցով: Գաղտնի քվեարկություն. քվեարկությունը կազմակերպվում է այնպես, որ ընտրողի կամքը մնա գաղտնի, և նա առանց որևէ մեկի վերահսկողության կատարի իր ընտրությունը:

103. Ներկայացրե՛ք ժողովրդավարության սկզբունքները հետևյալ սխեմայով՝ ազատություն և իրավահավասարություն, որոշումների ընդունում՝ մեծամասնության կամքով փոքրամասնության իրավունքների պարտադիր պահպանմամբ, հրապարակայնություն և թափանցիկություն, բազմազանություն և մրցակցություն:

Ակնկալվող պատասխան. Ժողովրդավարությունը հենվում է մի քանի հիմնարար սկզբունքների վրա: Ազատություն և իրավահավասարություն. բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով, և պետությունը երաշխավորում է նրանց հավասարությունն օրենքի առջև: Որոշումների ընդունում՝ մեծամասնության կամքով փոքրամասնության իրավունքների պարտադիր պահպանմամբ. հանրային որոշումներն ընդունվում են մեծամասնության կամքով, սակայն դա չի կարող ոտնահարել փոքրամասնության հիմնական իրավունքները: Հրապարակայնություն և թափանցիկություն. իշխանության գործունեությունը բաց է ու ենթակա հանրային վերահսկողության, ինչը քաղաքացիներին հնարավորություն է տալիս տեղեկացված լինելու և մասնակցելու կառավարմանը: Բազմազանություն և մրցակցություն. ապահովվում են քաղաքական ու գաղափարական բազմակարծությունը, բազմակուսակցականությունը և իշխանության համար օրինական, ազատ մրցակցությունը:

Պետություն և քաղաքացի

104. Ինչպե՞ս են փոխկապակցված պետությունը և քաղաքացին:

Ակնկալվող պատասխան. Քաղաքացիներն այն մարդիկ են, որոնք հատուկ իրավաբանական կապով փոխկապակցված են կոնկրետ պետության հետ և ունեն փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ: Պետությունն ապահովում է կրթություն, առողջապահություն, անվտանգություն, ստեղծում է քաղաքացիների իրավունքները պաշտպանող օրենքներ ու ֆինանսավորում հասարակական նախագծեր: Իր հերթին քաղաքացին օգտվում է այդ ծառայություններից, պարտավոր է հարգել օրենքները, վճարել հարկերն ու մասնակցել հանրային կյանքին (օրինակ՝ ընտրություններին): Ի տարբերություն միջնադարյան հպատակների, որ ունեին միայն պարտականություններ, ժամանակակից քաղաքացիներն ունեն փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ:

105. Ի՞նչ է նշանակում իրավագիտակից քաղաքացի լինելը:

Ակնկալվող պատասխան. Իրավագիտակից քաղաքացին գիտակցում է իր իրավունքներն ու պարտականությունները և դրանց ազդեցությունը հասարակության վրա: Նա պատասխանատու կերպով մասնակցում է հանրային ու քաղաքական կյանքին (ընտրություններ, պետության պաշտպանություն), դրսևորում է օրենքին համապատասխան վարքագիծ, վճարում է հարկերը: Ընդ որում՝ նա իրավաչափ վարքագիծ է դրսևորում ոչ թե պատժի վախից, այլ այն համոզմունքից ելնելով, որ դա անհրաժեշտ է իր, շրջապատի, հանրության ու պետականության համար:

106. Ինչո՞ւ է քաղաքացու համար կարևոր հարկեր վճարելը: Բացատրե՛ք:

Ակնկալվող պատասխան. Իրավագիտակից քաղաքացին վճարում է հարկերը, քանի որ գիտակցում է, որ իր վճարած հարկերից են գոյանում այն միջոցները, որոնք հետագայում ուղղվում են տարեցներին կենսաթոշակ վճարելուն, դպրոցներ կառուցելուն, ուսուցիչների ու հանրային ծառայողների վարձատրությանը, բանակի հզորացմանը: Այդպիսով զարգանում է այն պետությունը, որտեղ նույն քաղաքացին կառուցում է իր ապագան: Հարկերից խուսափելը (այդ թվում՝ կոռուպցիայի միջոցով) նվազեցնում է պետբյուջեի մուտքերն ու վնասում ողջ հասարակությանը:

Կոռուպցիա և թրաֆիքինգ

107. Ի՞նչ է կոռուպցիան, և որո՞նք են դրա տեսակները:

Ակնկալվող պատասխան. Կոռուպցիան ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է անձնական օգուտ ստանալու նպատակով. այն սոցիալական, քաղաքական, տնտեսական, իրավական ու բարոյական հիմնախնդիր է, որը վնասում է անհատի, հասարակության ու պետության շահերը: Հիմնական տեսակներն են՝ կաշառք տալն ու վերցնելը (ամենատարածվածը՝ գույքային առավելության դիմաց լիազորությունների չարաշահումը), նեպոտիզմը (բարեկամներին ու ընկերներին առանց արժանիքների պաշտոնի նշանակելը) և ֆավորիտիզմը (իշխանավորին հաճելի մարդկանց չարդարացված արտոնություն տալը):

108. Որո՞նք են կոռուպցիայի պատճառներն ու հետևանքները:

Ակնկալվող պատասխան. Կոռուպցիայի հիմնական պատճառները մարդկային եսասիրությունն ու ագահությունն են. դրանց նպաստում են սպառողական պահանջների աճը, մշակույթն ու մտածելակերպը, կրթության ու հասարակական գիտակցության ցածր մակարդակը, թույլ տնտեսությունը, գործազրկությունը, պետբյուջեի վատ տնօրինումն ու վերահսկողության թուլությունը: Հետևանքներից են հարկերի մուտքերի նվազումը, ստվերային տնտեսության աճը, ներդրողների վստահության անկումը, տնտեսական աճի դանդաղումը, հանրային ծառայությունների որակի իջեցումը, սոցիալական լարվածության աճը, ժողովրդավարությանը սպառնացող վտանգը և կազմակերպված հանցագործության աճը: Տևական կոռուպցիան պետությունների կործանման հիմնական պատճառներից է եղել:

109. Ինչ է թրաֆիքինգը, և որ երեք տարրերից է այն բաղկացած:

Ակնկալվող պատասխան. Թրաֆիքինգը շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելն է, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը ուժի սպառնալիքով, հարկադրանքով, առևանգմամբ, խարդախությամբ կամ խաբեությամբ (ժամանակակից ստրկավաճառություն): Այն բաղկացած է երեք տարրից՝ գործողություն (մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, թաքցնելը), միջոց (ուժի սպառնալիք, հարկադրանք, առևանգում, խաբեություն, վիճակի խոցելիության չարաշահում) և նպատակ (շահագործում՝ սեռական շահագործում, հարկադիր աշխատանք, ստրկություն, մարմնի մասերի կորզում):

110. Ինչ միջոցներ են ձեռնարկում պետությունները թրաֆիքինգի դեմ պայքարելու համար:

Ակնկալվող պատասխան. Պետությունները մշակում և ընդունում են քաղաքականություն և ծրագրեր, որոնք ներառում են՝ հետազոտությունների ու տեղեկատվական հանդիպումների անցկացումը (այդ թվում՝ ԶԼՄ–ներում), սոցիալ–տնտեսական նախաձեռնությունների իրականացումը՝ ուղղված մարդկանց առևտրի կանխարգելմանը, այնպիսի գործոնների ազդեցության մեղմացումը, ինչպիսիք են չքավորությունը, զարգացման ցածր մակարդակն ու հավասար հնարավորությունների բացակայությունը, ինչպես նաև կրթության, մշակույթի ու սոցիալական բնագավառներում օրենսդրական միջոցների ընդունումը՝ հատկապես կանանց ու երեխաների շահագործման պահանջարկը կրճատելու համար:

Թեմա 2

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԸՆՏՐՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Քաղաքացիական հասարակության հասկացությունը, բաղադրիչներն ու գործառույթները

1. Ի՞նչ է քաղաքացիական հասարակությունը.

ա) պետական իշխանության մարմինների համակարգ,
բ) հանրային կյանքի կազմակերպման ձև, որտեղ կենտրոնական արժեքը մարդ-քաղաքացին է,
գ) միայն առևտրային ընկերությունների միավորում,
դ) բանակի և իրավապահ մարմինների ամբողջություն:

2. Ո՞վ է քաղաքացիական հասարակության կենտրոնական արժեքը, հիմնական գործող սուբյեկտը և վերջնական նպատակը.

ա) պետության գլուխը,
բ) օրենսդիր մարմինը,
գ) մարդ-քաղաքացին՝ իր շահերով, պահանջմունքներով ու իրավունքներով,
դ) խոշոր ձեռնարկատերը:

3. Ինչպիսի՞ կազմակերպություն է հասարակական կազմակերպությունը.

ա) շահույթ հետապնդող առևտրային ընկերություն,
բ) պետական կառավարման մարմին,
գ) շահույթ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող կազմակերպություն,
դ) միջազգային ռազմական դաշինք:

4. Ինչի՞ հիմքն է քաղաքացիական հասարակությունը.

ա) ավտորիտար պետության,
բ) իրավական պետության,
գ) պլանային տնտեսության,
դ) միապետության:

5. Ինչ սկզբունքով են ձևավորվում քաղաքացիական հասարակության կառույցները.

ա) պարտադրանքի,
բ) ժառանգության,
գ) կամավորության,
դ) վիճակահանության:

6. Ինչպիսի՞ պայմաններում կարող է իրավական պետությունը զարգանալ և արդյունավետ իրականացնել իր գործառույթները.

ա) միայն քաղաքացիական հասարակության առկայության պայմաններում,
բ) միայն ուժեղ բանակի առկայության դեպքում,
գ) միայն մեկ կուսակցության իշխանության դեպքում,
դ) առանց քաղաքացիների մասնակցության:

7. Հետևյալներից ո՞րը քաղաքացիական հասարակության կառույց չէ.

ա) իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը,
բ) բնապահպանական խումբը,
գ) մարզական ակումբը,
դ) կառավարությունը:

8. Ի՞նչ է անում քաղաքացիական հասարակությունը իրավական պետության նկատմամբ.

ա) փոխարինում է պետական մարմիններին,
բ) վերահսկում է, որ պետական կառույցները գործեն ըստ օրենքի,
գ) սահմանում է հարկերը,
դ) նշանակում է դատավորներին:

9. Ի՞նչ են ներկայացնում մասնագիտական միավորումներն ու արհմիությունները.

ա) պետական պաշտոնյաների անձնական շահերը,
բ) տարբեր մասնագիտությունների աշխատողների շահերը,
գ) միայն արտասահմանյան ընկերությունների շահերը,
դ) քաղաքական կուսակցությունների ֆինանսական շահերը:

10. Հասարակական վերահսկողություն իրականացնելիս քաղաքացիական հասարակությունը.

ա) ընդունում է օրենքներ,
բ) կանխում է կոռուպցիան և ապահովում պետական որոշումների թափանցիկությունը,
գ) ղեկավարում է գործադիր իշխանությունը,
դ) վճռում է դատական գործերը:

11. Ո՞րն է կրթական և մշակութային հաստատությունների դերը քաղաքացիական հասարակությունում.

ա) շահույթ ստանալ և բաշխել,
բ) նպաստել կրթության զարգացմանը և երիտասարդության հասարակական ակտիվացմանը,
գ) վերահսկել բանակը,
դ) սահմանել դատական պատիժները:

Քաղաքացիություն և քաղաքացիականություն

12. Ո՞ւմ կարգավիճակն է բնութագրում հետևյալ դրույթը. «Նրանք չեն զրկվում քաղաքական իրավունքներից, ունեն դիվանագիտական պաշտպանության իրավունք».

ա) երկքաղաքացիների և քաղաքացիություն չունեցողների,
բ) օտարերկրացիների (այլ պետության քաղաքացիների),
գ) քաղաքացիների և օտարերկրացիների,
դ) զբոսաշրջիկների:

13. Ո՞ր սկզբունքն է բնութագրում հետևյալ դրույթը. «Նորածնի քաղաքացիությունը որոշվում է ծնողների քաղաքացիությամբ և կախված չէ ծննդյան վայրից».

ա) քաղաքացիության «արյան սկզբունքը»,
բ) քաղաքացիության «հողի սկզբունքը»,
գ) քաղաքացիության տարածքային սկզբունքը,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

14. Սահմանադրությունն ու օրենքներն ամբողջ ծավալով, բոլոր իրավունքները, ազատություններն ու պարտականությունները վերապահում են.

ա) երկքաղաքացիներին և քաղաքացիություն չունեցողներին,
բ) միայն քաղաքացիներին,
գ) քաղաքացիներին և օտարերկրացիներին,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

15. Ո՞ր դրույթն է իրավաբանորեն ճիշտ.

ա) Հայաստանի քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի քաղաքացի չէ,
բ) Հայաստանի քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի քաղաքացի է, եթե ծնվել է Հայաստանում,
գ) Հայաստանի քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի քաղաքացի է՝ անկախ ծնվելու վայրից,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

16. Ո՞ր սկզբունքն է բնութագրում հետևյալ դրույթը. «Երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծննդյան վայրով և կախված չէ ծնողների քաղաքացիությունից».

ա) քաղաքացիության «արյան սկզբունքը»,
բ) քաղաքացիության «ազգային սկզբունքը»,
գ) քաղաքացիության տարածքային («հողի») սկզբունքը,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

17. Ո՞ր դրույթն է իրավաբանորեն ճիշտ.

ա) այլ պետության քաղաքացին ՀՀ-ում կարող է ամուսնանալ օրենսդրությամբ սահմանված կարգով,
բ) այլ պետության քաղաքացին ՀՀ-ում չի կարող ամուսնանալ,

գ) այլ պետության քաղաքացին ՀՀ-ում կարող է միայն ամուսնալուծվել,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

18. Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիության որոշման ո՞ր սկզբունքն է օրենքով ամրագրված.

ա) «արյան սկզբունքը»,
բ) «հողի սկզբունքը»,
գ) «տարածքային սկզբունքը»,
դ) բոլոր սկզբունքները:

19. Ո՞ր իրավունքը չունի այլ երկրի քաղաքացին ՀՀ-ում.

ա) իր ազգային լեզուն, մշակույթը և սովորույթները պահպանելու իրավունք,
բ) հաղորդակցության գաղտնիության իրավունք,
գ) կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք,
դ) բոլոր իրավունքներն էլ ունի:

Քաղաքացիական մասնակցություն

20. Ի՞նչ է նշանակում քաղաքացիական մասնակցությունը.

ա) միայն հարկեր վճարելը,
բ) մարդկանց ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին և որոշումների կայացման գործընթացներին,
գ) պետական պաշտոն զբաղեցնելը,
դ) օրենքներից խուսափելը:

21. Հետևյալներից ո՞րն է քաղաքացիական մասնակցության դրսևորում.

ա) օրենքի խախտումը,
բ) ընտրություններին մասնակցելը և հանրային քննարկումներին ներգրավվելը,
գ) հարկերից խուսափելը,
դ) պետական գույքը վնասելը:

22. Քաղաքացիական մասնակցությունը համարվում է ակտիվ, եթե.

ա) անհատը հարմարվում է իր շրջապատի, խմբի կարծիքին ու գործողություններին,
բ) անհատը դրսևորում է նախաձեռնողական, բարեփոխիչ վարքագիծ,
գ) անհատը անվերապահորեն ենթարկվում է առանց սեփական դիրքորոշման,
դ) բոլոր պատասխանները սխալ են:

23. Ըստ հասարակական նշանակության աստիճանի՝ ո՞րն է քաղաքացիական մասնակցության տեսակ.

ա) անհրաժեշտ քաղաքացիական մասնակցություն,
բ) ակտիվ քաղաքացիական մասնակցություն,
գ) հոգևոր-մշակութային քաղաքացիական մասնակցություն,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

24. Քաղաքացիական մասնակցությունը հարմարվողական է, եթե.

ա) անհատը անվերապահորեն ենթարկվում է առանց սեփական դիրքորոշման,
բ) անհատը գործում է համոզմունքով և ակտիվորեն,
գ) անհատը գործում է ակտիվորեն, ցուցաբերում է նախաձեռնողական վարքագիծ,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

Հասարակական և քաղաքական կազմակերպություններ. կուսակցություններ

25. Ինչպե՞ս է արդի քաղաքացիական հասարակությունն ազդում քաղաքագետ-պրոֆեսիոնալի առաջնորդող դիրքերի վրա.

ա) չեզոքացնում է քաղաքագետ-պրոֆեսիոնալների առաջնորդող դիրքերը,
բ) ուժեղացնում է քաղաքագետ-պրոֆեսիոնալների առաջնորդող դիրքերը,
գ) չունի քաղաքագետ-պրոֆեսիոնալ առաջնորդների կարիք,
դ) բոլոր պատասխանները սխալ են:

26. Ո՞ր մտածողին է պատկանում հետևյալ միտքը. «Խորքի կանչին առաջնորդում է խորքը – ժողովուրդ և առաջնորդ գտնում են իրար, միանում, ամբողջանում էութենական մի միասնության մեջ».

ա) Գարեգին Նժդեհ,
բ) Ջոն Լոք,
գ) Ժան-Ժակ Ռուսո,
դ) բոլոր պատասխանները սխալ են:

27. Շարունակե՛ք միտքը. «Քաղաքական կազմակերպությունները ընդհանուր շահերի, գաղափարների և նպատակների հիման վրա ձևավորված ակտիվ ու կազմակերպված հասարակական միավորումներ են...».

ա) որոնք ձգտում են իրականացնել տնտեսական գործունեություն,
բ) որոնք ձգտում են տիրանալ պետական իշխանությանը,
գ) որոնք ձգտում են կազմակերպել երկրի պաշտպանությունը,
դ) բոլոր պատասխանները սխալ են:

28. Շարունակե՛ք միտքը. «Քաղաքացիական հասարակության քաղաքական համակարգը քաղաքական կազմակերպությունների ամբողջություն է, որոնք իրավունքի շրջանակներում և պետության միջոցով...».

ա) իրականացնում են քաղաքական իշխանությունը կամ պայքարում դրա համար,
բ) իրականացնում են օրենսդիր և դատական իշխանությունները,
գ) իրականացնում են կրթական գործունեություն հասարակության լուսավորության համար,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

29. Կուսակցություններ՝ որպես հասարակական կազմակերպություններ.

ա) կարող են ստեղծել և անդամագրվել միայն քաղաքացիները,
բ) կարող է ստեղծել և անդամագրվել յուրաքանչյուր ոք,
գ) կարող են ստեղծել և անդամագրվել քաղաքացիներն ու ոչ քաղաքացիները,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

30. Ինչի՞ն է վերաբերում հետևյալ միտքը. «Դրանք կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը, իսկ գործելակերպը չի կարող հակասել ժողովրդավարությանը».

ա) քաղաքական կուսակցություններին,
բ) ազատ և արդար ընտրություններին,
գ) բոլոր տեսակի հասարակական կազմակերպություններին,
դ) բոլոր պատասխանները սխալ են:

31. Ո՞ր մարմինն է որոշում կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին.

ա) ՀՀ նախագահը,
բ) ՀՀ Սահմանադրական դատարանը,
գ) ՀՀ Ազգային ժողովը,
դ) ՀՀ վարչապետը:

32. Ո՞վ կարող է դառնալ հասարակական կազմակերպության անդամ միայն սեփական դիմումի համաձայն.

ա) տասնչորս տարին լրացած անձը, եթե կանոնադրությունը դա թույլ է տալիս,
բ) տասնութ տարին լրացած անձը, եթե կանոնադրությունը դա թույլ է տալիս,
գ) կանոնադրությամբ սահմանված ցանկացած տարիքի անձը,
դ) բոլոր պատասխանները սխալ են:

Շահերի պաշտպանություն և բազմակարծություն

33. Ինչ է նշանակում շահերի պաշտպանություն.

ա) պետության կողմից քաղաքացիների պատժումը,
բ) մարդկանց, խմբերի կամ կազմակերպությունների պայքարը իրենց կամ ուրիշների իրավունքների պաշտպանության համար,
գ) միայն անձնական հարստության ավելացումը,
դ) օրենքների անտեսումը:

34. Ո՞րն է բերվածներից բնապահպանական շահերի պաշտպանության օրինակ.

ա) աշխատողները պահանջում են ավելի բարձր աշխատավարձ,
բ) կազմակերպությունը պայքարում է ծառահատման դեմ՝ կանխելու անտառներին հասցվող վնասը,
գ) ուսուցիչները պահանջում են էլեկտրոնային գրատախտակներ,
դ) կանանց պահանջում են հավասար իրավունքների ապահովում:

35. Ի՞նչ է բազմակարծությունը.

ա) միայն մեկ կարծիքի գերակայությունը,
բ) մարդկանց ազատությունը՝ արտահայտելու իրենց տարբեր կարծիքները,
գ) պետական գրաքննության առկայությունը,
դ) կարծիք չունենալը:

36. Ինչո՞ւ է բազմակարծությունն անհրաժեշտ.

ա) որպեսզի բոլորը միանման մտածեն,
բ) որպեսզի տարբեր շահերի ու կարծիքների տեր մարդիկ կարողանան արտահայտվել և լսելի լինել,
գ) որպեսզի սահմանափակվի խոսքի ազատությունը,
դ) որպեսզի պետությունը վերահսկի քաղաքացիներին:

37. Ե՞րբ է կայանում քաղաքացիական հասարակությունը.

ա) երբ կա միայն մեկ պաշտոնական կարծիք,
բ) երբ կա բազմակարծություն,
գ) երբ արգելվում են հանրահավաքները,
դ) երբ վերացվում են հասարակական կազմակերպությունները:

38. Շահերի պաշտպանությունը դրսևորվում է, երբ մարդիկ կամ խմբերը պաշտպանում են իրենց իրավունքները.

ա) պետության անմիջական հրահանգով,
բ) առանց պետության միջամտության,
գ) միայն դատարանի որոշմամբ,
դ) միայն արտասահմանյան օգնությամբ:

39. Հետևյալներից ո՞րն է անձնական տվյալների պաշտպանության օրինակ.

ա) աշխատավարձի բարձրացման պահանջը,
բ) կազմակերպությունների պայքարը՝ համացանցում քաղաքացիների անձնական տվյալների գաղտնիությունն ապահովելու համար,
գ) ծառահատման դեմ պայքարը,
դ) նոր դպրոցի կառուցումը:

40. Ինչպե՞ս են փոխկապակցված քաղաքացիական հասարակությունը, շահերի պաշտպանությունը և բազմակարծությունը.

ա) դրանք միմյանց հակասում են,
բ) ժողովրդավարական հասարակությունում մարդիկ ազատ են պաշտպանելու շահերը և արտահայտելու տարբեր կարծիքներ՝ պահպանելով երկխոսությունը,
գ) դրանք վերաբերում են միայն պետական մարմիններին,
դ) դրանք գործում են միայն արտակարգ դրության ժամանակ:

41. Արհմիությունների օրինակով աշխատանքի ոլորտի շահերի պաշտպանությունը դրսևորվում է, երբ աշխատողները պահանջում են.

ա) վերացնել բոլոր հարկերը,
բ) ավելի բարձր աշխատավարձ և ապահով աշխատանքային պայմաններ,
գ) փակել ձեռնարկությունը,
դ) արգելել մասնագիտական միությունները:

Զանգվածային լրատվության միջոցներ (ԶԼՄ)

42. Ի՞նչ է զանգվածային լրատվությունը.

ա) պետական գաղտնիքների պահպանումը,
բ) անսահմանափակ թվով անձանց համար հասանելի տեղեկատվության տարածումը,
գ) անձնական նամակագրությունը երկու մարդկանց միջև,
դ) գովազդի արտադրությունը:

43. Ո՞րն է զանգվածային լրատվության հիմնական նպատակը.

ա) սահմանափակել քաղաքացիների իրավունքները,
բ) ապահովել մարդու սահմանադրական իրավունքը՝ ազատորեն փնտրելու, ստանալու և տարածելու տեղեկություններ ու գաղափարներ,
գ) թաքցնել տեղեկությունները հանրությունից,
դ) միայն զվարճացնել հանդիսատեսին:

44. Ի՞նչ է մեդիագրագիտությունը.

ա) միայն գրել-կարդալ իմանալը,
բ) անհրաժեշտ բովանդակությունը գտնելու, քննադատորեն վերլուծելու, գնահատելու և ստեղծելու հմտությունների ամբողջությունը,
գ) համակարգիչ նորոգելու հմտությունը,
դ) օտար լեզու իմանալը:

45. Ի՞նչ է սոցիալական մեդիան.

ա) պետական թերթ,
բ) համացանցի միջոցով զանգվածային հաղորդակցության տեսակ,
գ) միայն տպագիր ամսագիր,
դ) ռադիոհեռարձակման տեսակ:

46. Երբ լրատվամիջոցը վերլուծում է տեղեկատվությունը՝ հանդես գալով որպես հասարակության շահի ներկայացուցիչ, դա ԶԼՄ-ի ո՞ր գործառույթն է.

ա) տեղեկատվություն հաղորդելու գործառույթն է,
բ) մեկնաբանելու գործառույթն է,
գ) վերահսկողություն իրականացնելու գործառույթն է,
դ) զվարճացնելու գործառույթն է:

47. Հետևյալներից ո՞րն է ԶԼՄ-ների բացասական ազդեցություն.

ա) թափանցիկության ապահովում,
բ) կեղծ տեղեկատվության (ապատեղեկատվության) տարածում,
գ) հասարակության տեղեկացում,
դ) ազատ խոսքի պահպանում:

48. Ի՞նչ են մանիպուլյացիան և քարոզչությունը ԶԼՄ-ների համատեքստում.

ա) օբյեկտիվ և ստուգված տեղեկատվության տրամադրում,
բ) կողմնակալ տեղեկատվության միջոցով հանրային կարծիքը ձևափոխելու փորձ՝ հօգուտ որոշակի շահերի,
գ) մեդիագրագիտության զարգացում,
դ) մամուլի ազատության երաշխավորում:

49. Մեդիագրագետ սպառողին տրվող ցուցումներից ո՞րն է ճիշտ.

ա) վստահել ցանկացած անանուն նյութի,
բ) ստուգել հեղինակին և տեղեկատվությունը համեմատել տարբեր աղբյուրների հետ,
գ) կասկածել միայն պաշտոնական աղբյուրներին,
դ) սենսացիոն վերնագրերը համարել ամենավստահելին:

50. Ինչո՞ւ պետք է կասկածել, երբ նյութի վերնագիրը սենսացիոն է, իսկ պատկերները՝ զգայական.

ա) քանի որ դա միշտ նշանակում է ճշմարիտ տեղեկություն,
բ) քանի որ դա կարող է վկայել նյութի անաչառության բացակայության մասին,
գ) քանի որ սենսացիոն վերնագրերն օրենքով արգելված են,
դ) քանի որ այդ նյութերն անվճար են:

51. Ո՞րը խոսքի ազատության իրավունքի չարաշահման արգելքի երաշխիք չէ.

ա) չի թույլատրվում հրապարակել պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ,
բ) հրապարակման ենթակա չեն պատերազմ, բռնություն, ազգային ու կրոնական թշնամանք հրահրող տեղեկությունները,
գ) չի թույլատրվում հրապարակել պետական գրաքննություն չանցած տեղեկատվությունը:

Հանրային քաղաքականություն

52. Ի՞նչ է հանրային քաղաքականությունը.

ա) միայն կուսակցությունների նախընտրական խոստումները,
բ) իշխանության մարմինների՝ հանրության հետ համաձայնեցված գործողությունները՝ քաղաքացիների իրավունքները պաշտպանելու և բարեկեցությանը նպաստելու համար,
գ) անհատների անձնական ծախսերի պլանավորումը,
դ) միայն արտաքին քաղաքականությունը:

53. Ովքե՞ր են միշտ ընդգրկված հանրային քաղաքականության գործընթացում.

ա) միայն դատարանները,
բ) իշխանություններն ու հանրությունը,
գ) միայն արտասահմանյան կազմակերպությունները,
դ) միայն մեկ անհատ:

54. Ո՞ր երեք ճյուղերին է վերապահված կենտրոնական դերը հանրային քաղաքականության գործընթացում.

ա) բանակ, ոստիկանություն, դատախազություն,
բ) օրենսդիր, գործադիր և դատական,
գ) կրթություն, առողջապահություն, մշակույթ,
դ) թերթ, ռադիո, հեռուստատեսություն:

55. Հետևյալներից ո՞րը հանրային քաղաքականության մասնակից չէ.

ա) քաղաքական կուսակցությունները,
բ) ԶԼՄ-ները,
գ) օտարերկրյա բանակը,
դ) շահագրգիռ խմբերն ու ՀԿ-ները:

56. Ի՞նչ են շահագրգիռ խմբերը.

ա) պետական դատարանները,
բ) որոշակի հիմնախնդրի նկատմամբ միևնույն հետաքրքրությունն ունեցող մարդկանց խմբերը,
գ) միայն օտարերկրյա ներդրողները,
դ) զինված ուժերի ստորաբաժանումները:

57. Ինչո՞վ է սկսվում հանրային քաղաքականության գործընթացը («Մուտք» քայլ).

ա) որոշման իրականացմամբ,
բ) հիմնախնդրի բացահայտմամբ, ուսումնասիրմամբ և քննարկմամբ,
գ) գնահատմամբ,
դ) հետադարձ կապով:

58. Հանրային քաղաքականության «Ելք» (արդյունք) քայլում ի՞նչ ձևերով է որոշում կայացվում.

ա) միայն բանավոր հրահանգներով,
բ) օրենքներով, ծրագրերով, որոշումներով, հրամաններով, կարգադրություններով և այլն,
գ) միայն սոցիալական ցանցերի գրառումներով,
դ) անձնական նամակներով:

59. Ո՞ր քայլն է հաջորդում որոշում կայացնելուն պատասխանատուների կողմից քաղաքականությունն իրագործելիս.

ա) Մուտք,
բ) Իրականացում,
գ) Որոշումների կայացում,
դ) Հետադարձ կապ:

60. Ի՞նչ է հանրային քաղաքականության «Հետադարձ կապ» քայլը.

ա) հիմնախնդրի առաջին բացահայտումը,
բ) տեսակետների փոխանակումը, քաղաքականություն վարողներին գնահատականներ հայտնելը՝ թերությունները շտկելու համար,
գ) օրենքի ընդունումը,
դ) ֆինանսավորման հատկացումը:

61. Ո՞վ կարող է լինել հանրային քաղաքականության գնահատողի դերում.

ա) միայն պետության ղեկավարը,
բ) ցանկացած մարդ, որը շահագրգռված է կամ առնչվում է այդ քաղաքականությանը,
գ) միայն դատավորները,
դ) միայն արտասահմանյան փորձագետները:

Հանրային բարիք

62. Ի՞նչ է բարիքը.

ա) միայն դրամական խնայողությունը,
բ) օգտակար այն ամենը, ինչը ծառայում է մարդկանց պահանջները բավարարելուն,
գ) միայն պետական սեփականությունը,
դ) անօգուտ իրերի ամբողջությունը:

63. Ինչո՞վ են բնութագրվում հանրային բարիքները.

ա) մրցակցային և բացառելի են,
բ) մրցակցային չեն և բացառելի չեն,
գ) միայն թանկարժեք են,
դ) հասանելի են միայն հարուստներին:

64. Հետևյալներից ո՞րն է հանրային բարիք.

ա) շոկոլադ,
բ) մաքուր օդ,
գ) անձնական համակարգիչ,
դ) բջջային հեռախոս:

65. Ո՞ր բարիքն է մրցակցային.

ա) փողոցների լուսավորությունը,

բ) ազգային պաշտպանության ծառայությունը,
գ) նոթատետրը, որի առկա քանակը չի բավարարում բոլոր գնորդներին,
դ) մաքուր օդը:

66. Ինչո՞ւ են գին ունեցող բոլոր բարիքները համարվում բացառելի.

ա) քանի որ դրանք անվճար են,
բ) քանի որ գինը հենց սահմանափակող գործոն է, և դրանք բոլորին հասանելի չեն,
գ) քանի որ դրանք պատկանում են պետությանը,
դ) քանի որ դրանք երբեք չեն սպառվում:

67. Ո՞ւմ ուսերին է դրված հանրային բարիքներ ստեղծելու հիմնական բեռը.

ա) առանձին քաղաքացիների,
բ) պետության,
գ) միայն մասնավոր ընկերությունների,
դ) միջազգային կազմակերպությունների:

Ընտրովի առաջադրանքների պատասխանների բանալի.

1 – բ	**2 – գ**	**3 – գ**	**4 – բ**	**5 – գ**	**6 – ա**
7 – դ	**8 – բ**	**9 – բ**	**10 – բ**	**11 – բ**	**12 – բ**
13 – ա	**14 – բ**	**15 – գ**	**16 – գ**	**17 – ա**	**18 – ա**
19 – գ	**20 – բ**	**21 – բ**	**22 – բ**	**23 – բ**	**24 – ա**
25 – բ	**26 – ա**	**27 – բ**	**28 – ա**	**29 – ա**	**30 – ա**
31 – բ	**32 – բ**	**33 – բ**	**34 – բ**	**35 – բ**	**36 – բ**
37 – բ	**38 – բ**	**39 – բ**	**40 – բ**	**41 – բ**	**42 – բ**
43 – բ	**44 – բ**	**45 – բ**	**46 – բ**	**47 – բ**	**48 – բ**
49 – բ	**50 – բ**	**51 – գ**	**52 – բ**	**53 – բ**	**54 – բ**
55 – գ	**56 – բ**	**57 – բ**	**58 – բ**	**59 – բ**	**60 – բ**
61 – բ	**62 – բ**	**63 – բ**	**64 – բ**	**65 – գ**	**66 – բ**
67 – բ					

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

68. Համապատասխանեցրե՛ք քաղաքացիական հասարակության բաղադրիչները և դրանց բնութագրերը.

Հասկացություն/դրույթ	**Բնութագիր**
ա. Հասարակական կազմակերպություններ (ՀԿ)	1. Ներկայացնում են տարբեր մասնագիտությունների աշխատողների շահերը
բ. Մասնագիտական միավորումներ և արհմիություններ	2. Ոչ առևտրային կառույցներ են՝ կապված մարդու իրավունքների, բնապահպանության և այլ ոլորտների հետ
գ. Կրթական և մշակութային հաստատություններ	3. Տեղեկացնում են հասարակությանն ու աջակցում ազատ խոսքին ու թափանցիկությանը
դ. Մեդիա (լրատվամիջոցներ)	4. Նպաստում են կրթության զարգացմանն ու երիտասարդության հասարակական ակտիվացմանը

Պատասխան՝ **ա–2, բ–1, գ–4, դ–3**

69. Համապատասխանեցրե՛ք ԶԼՄ-ների գործառույթները և դրանց բովանդակությունը.

Հասկացություն / դրույթ	**Բնութագիր**
ա. Տեղեկատվություն հաղորդելը	1. Իշխանության գործունեությունը վերահսկելու նպատակով որպես «հասարակական հսկիչ» հանդես գալը
բ. Մեկնաբանությունը	2. Կարևոր տեղեկատվության մատուցում հանրությանը
գ. Վերահսկողությունը	3. Հասարակության կարծիքի ձևավորում տարբեր հարցերի վերաբերյալ
դ. Հասարակական կարծիքի ձևավորումը	4. Տեղեկատվության մեկնաբանում որպես հասարակության շահերի ներկայացուցիչ

Պատասխան՝ **ա–2, բ–4, գ–1, դ–3**

70. Համապատասխանեցրե՛ք հանրային քաղաքականության քայլերը և դրանց բովանդակությունը.

Հասկացություն / դրույթ	**Բնութագիր**
ա. Մուտք	1. Պատասխանատուների կողմից ընդունված քաղաքականության իրագործում
բ. Ելք (արդյունք)	2. Հիմնախնդրի բացահայտում, ուսումնասիրում և քննարկում
գ. Իրականացում	3. Տեսակետների փոխանակում քաղաքականություն վարողների հետ
դ. Հետադարձ կապ	4. Որոշման ձևակերպում՝ օրենք, ծրագիր, հրաման և այլն

Պատասխան՝ **ա–2, բ–4, գ–1, դ–3**

71. Համապատասխանեցրե՛ք բարիքները և դրանց տեսակները.

Հասկացություն / դրույթ	**Բնութագիր**
ա. Շոկոլադ, հագուստ, բջջային հեռախոս	1. Հանրային բարիք
բ. Մաքուր օդ, փողոցների լուսավորություն	2. Բարիք (մրցակցային և բացառելի)
գ. Հանրային գրադարան, հանրակրթական դպրոց	3. Հանրային բարիք
դ. Անձնական համակարգիչ, հեծանիվ	4. Բարիք (մրցակցային և բացառելի)

Պատասխան՝ **ա–2, բ–1, գ–3, դ–4**

72. Համապատասխանեցրե՛ք առաջնորդի գործառույթները և դրանց նկարագրությունը.

Հասկացություն / դրույթ	**Բնութագիր**
ա. Արդարության և օրինականության երաշխավորի գործառույթ	1. Քաղաքական ինքնակազմակերպման կայուն ձևերի ստեղծում՝ տարբեր կազմակերպությունների ու բնակչության խմբերի հետ սերտ կապերի հիման վրա
բ. Միավորող գործառույթ	2. Քաղաքական կուրսի մշակում, որն արտացոլում է առաջադիմության միտումներն ու բնակչության խմբերի պահանջմունքները
գ. Կողմնորոշիչ գործառույթ	3. Անհրաժեշտ փոփոխությունների նախաձեռնում բնակչության շրջանում զարգացած խթանների ստեղծման օգնությամբ

Հասկացություն / դրույթ	Բնութագիր
դ. Հավաքագրման (մոբիլիզացնող) գործառույթ	4. Ամբողջ հասարակության ճանաչած արժեքների ու իդեալների հիմքի վրա տարբեր շահերի միավորում և համաձայնեցում
ե. Հաղորդակցային գործառույթ	5. Պայքար ընդդեմ բյուրոկրատիայի, ապօրինության, անհատի իրավունքների ու ազատությունների խախտումների

Պատասխան՝ **ա–5, բ–4, գ–2, դ–3, ե–1**

73. Համապատասխանեցրե՛ք հասկացությունները և դրանց սահմանումները (քաղաքացիության կարգավիճակներ).

Հասկացություն / դրույթ	Բնութագիր
ա. Քաղաքացիներ	1. Արտահայտում է պետության հետ մարդու քաղաքական ու իրավական կապը՝ կայունությամբ և կողմերի փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով
բ. Երկքաղաքացիներ	2. Կորցրել են իրենց պետության քաղաքացիությունը, բայց ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն. չունեն դիվանագիտական պաշտպանություն, օժտված են միայն մարդուն բնորոշ իրավունքներով
գ. Քաղաքացիություն	3. Չեն զրկվում քաղաքական իրավունքներից, ունեն դիվանագիտական պաշտպանության իրավունք. ձերբակալման դեպքում պարտավոր են 24 ժամում տեղյակ պահել իրենց պետության ներկայացուցչությանը
դ. Քաղաքացիություն չունեցողներ	4. Միաժամանակ Հայաստանի և մեկ այլ պետության քաղաքացի. իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով
ե. Այլ պետության քաղաքացիներ	5. Միայն նրանց են վերապահվում քաղաքական և մի շարք այլ իրավունքներ. չեն կարող հանձնվել օտար պետությանը՝ բացի միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերից

Պատասխան՝ **ա–5, բ–4, գ–1, դ–2, ե–3**

74. Համապատասխանեցրե՛ք հասկացությունները և դրանց սահմանումը (կազմակերպություններ և համակարգ).

Հասկացություն / դրույթ	**Բնութագիր**
ա. Ոչ քաղաքական կազմակերպություն	1. Անհատների միավորումից ստեղծված ոչ պետական, ինքնակառավարվող կառույց, որ քաղաքացիական հասարակության բաղադրատարր է և լուծում է հանրային բնույթի խնդիրներ
բ. Հասարակական կազմակերպություններ	2. Մշտապես փոփոխվող տեսական գիտելիք ու տարաբնույթ տեղեկություններ, այդ թվում՝ գործնական հմտություններ, առաջադիմության գրավական
գ. Տեղեկույթ	3. Ընդհանուր շահերի, գաղափարների ու նպատակների հիմքի վրա ձևավորված ակտիվ միավորում, որ ձգտում է տիրանալ պետական իշխանությանը կամ ազդել դրա վրա
դ. Քաղաքական համակարգ	4. Շահերի ընդհանրության հիմքով՝ հոգևոր կամ ոչ նյութական պահանջմունքներ բավարարելու նպատակով ստեղծված կամավոր միավորում
ե. Քաղաքական կազմակերպություն	5. Կազմակերպությունների ամբողջություն, որ իրավունքի շրջանակներում և պետության միջոցով իրականացնում է քաղաքական իշխանությունը կամ պայքարում դրա համար

Պատասխան՝ **ա–4, բ–1, գ–2, դ–5, ե–3**

ԼՐԱՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Լրացրե՛ք բաց թողնված բառը կամ բառակապակցությունը:

75. Քաղաքացիական հասարակությունն _____ պետության հիմքն է:
Պատասխան՝ ***իրավական***

76. Հասարակական կազմակերպությունը շահույթ _____ և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող կազմակերպություն է:
Պատասխան՝ ***չհետապնդող***

77. Քաղաքացիական հասարակության կառույցները ձևավորվում են _____ սկզբունքով:
Պատասխան՝ ***կամավորության***

78. _____ նշանակում է, որ մարդիկ ազատ են արտահայտելու իրենց տարբեր կարծիքները:
Պատասխան՝ ***Բազմակարծությունը***

79. Անհրաժեշտ բովանդակությունը գտնելու, քննադատորեն վերլուծելու և գնահատելու հմտությունների ամբողջությունը կոչվում է _____:
Պատասխան՝ ***մեդիագրագիտություն***

80. Ամեն տարի՝ մայիսի 3-ին, ՄԱԿ-ը նշում է _____ ազատության օրը:
Պատասխան՝ ***Մամուլի***

81. Հանրային քաղաքականության գործընթացում կենտրոնական դերը վերապահված է իշխանության երեք ճյուղերին՝ օրենսդիր, _____ և դատական:
Պատասխան՝ ***գործադիր***

82. _____ բարիքն այն է, ինչից օգտվում են բոլորը, և որևէ մեկին հնարավոր չէ արգելել օգտվել այդ բարիքից:
Պատասխան՝ ***Հանրային***

83. Հանրային բարիքներ ստեղծելու հիմնական բեռը դրված է _____ ուսերին:
Պատասխան՝ ***պետության***

84._____ Հայաստանում չունի ընտրական իրավունք, չի կարող անդամագրվել քաղաքական կազմակերպությանը կամ զբաղեցնել պաշտոններ, որոնց համար օրենքով պահանջվում է ՀՀ քաղաքացիություն:
Պատասխան՝ ***Այլ պետության (օտարերկրյա) քաղաքացին***

85. Քաղաքացիությունն արտահայտում է _____ հետ մարդու քաղաքական ու իրավական կապը, որը բնութագրվում է կայունությամբ ու կողմերի փոխադարձ իրավունքներով և պարտականություններով:
Պատասխան՝ ***պետության***

86. Երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին Հայաստանի քաղաքացի է, մյուսը՝ օտարերկրացի, երեխայի քաղաքացիությունը որոշվում է _____ գրավոր համաձայնությամբ:
Պատասխան՝ ***ծնողների***

87. Բնական իրավունքի տեսությունը _____ համարում է հասարակական դաշինքի հիման վրա ստեղծված կազմակերպություն, որը պետք է ծառայի մարդուն և պաշտպանի նրա իրավունքները:
Պատասխան՝ ***պետությունը***

88. Ըստ քաղաքացիության առկայության չափանիշների՝ գոյություն ունեն մարդկանց հետևյալ իրավական կարգավիճակները՝ _____, այլ պետության քաղաքացիներ, երկքաղաքացիներ, քաղաքացիություն չունեցողներ:
Պատասխան՝ ***քաղաքացիներ***

89. Սահմանադրությունն ու օրենքներն ամբողջ ծավալով բոլոր իրավունքները, ազատություններն ու պարտականությունները վերապահում են միայն _____:
Պատասխան՝ ***քաղաքացիներին***

90. Ժողովրդավարությունը գաղափարական, քաղաքական, հոգևոր-մշակութային բազմազանության դրսևորում է, սակայն ոչ _____:
Պատասխան՝ ***ամենաթողության (անսահմանափակ ազատության)***

91. Քաղաքական (պետական) այն գործիչը, որ մշտական ու վճռական ազդեցություն է թողնում հասարակության, պետության, կազմակերպության վրա, կոչվում է _____:
Պատասխան՝ ***առաջնորդ***

92. Քաղաքացիական հասարակությունն իրավական, ազատական-ժողովրդավարական, ինքնակառավարվող, բազմակարծիք, բաց հասարակություն է՝ կազմված ազատ անհատներից, որոնք իրականացնում են իրենց շահերը բոլորի համար հավասար և ընդհանուր _____ շրջանակներում:
Պատասխան՝ ***օրենքի***

93. Ընտրողները պատգամավորին և տեղական ինքնակառավարման մարմիններին ընտրում են անմիջականորեն, այլ ոչ թե _____ միջոցով:
Պատասխան՝ ***միջնորդների (ընտրիչների)***

94. _____ հանրաքվեով կամ պետության օրենսդիր մարմնի կողմից ընդունված, հասարակական առավել կարևոր հարաբերությունները կարգավորող իրավական ակտ է, որում ամրագրվում են բոլորի համար պարտադիր ու միատեսակ իրավական կանոններ:
Պատասխան՝ ***Օրենքը***

95. Իրավական է այն պետությունը, որի իշխանությունը սահմանափակված է, և որում պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավազոր են կատարելու միայն _____ թույլատրված գործողություններ:
Պատասխան՝ ***օրենքով***

ՇԱՐԱԴՐՎՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Քաղաքացիական հասարակության հասկացությունը, բաղադրիչներն ու գործառույթները

96. Ի՞նչ է քաղաքացիական հասարակությունը, և ո՞վ է նրա կենտրոնական սուբյեկտը:

Ակնկալվող պատասխան. Քաղաքացիական հասարակությունը հանրային կյանքի կազմակերպման ձև է, որտեղ կենտրոնական արժեքը, հիմնական գործող սուբյեկտը և վերջնական նպատակը մարդ–քաղաքացին է՝ իր շահերով, պահանջմունքներով ու իրավունքներով: Այն ձևավորվում է կամավորության սկզբունքով և ներկայացնում ոչ պետական կառույցների լայն ցանց:

97. Ինչպե՞ս են փոխկապակցված քաղաքացիական հասարակությունը և իրավական պետությունը:

Ակնկալվող պատասխան. Քաղաքացիական հասարակությունն իրավական պետության հիմքն է. այն օգնում է ձևավորելու իրավական պետություն, վերահսկում է պետական կառույցների գործունեությունը, պահանջում է արդարություն և նպաստում օրենքների բարելավմանը: Իր հերթին իրավական պետությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում քաղաքացիական հասարակության ձևավորման համար՝ քաղաքացիներին պաշտպանելով օրենքով և ապահովելով նրանց ազատությունը:

98. Թվարկե՛ք և բնութագրե՛ք քաղաքացիական հասարակության բաղադրիչներից մի քանիսը:

Ակնկալվող պատասխան. Բաղադրիչներից են՝ հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ներ՝ ոչ առևտրային, տարբեր շահեր ներկայացնող), մասնագիտական միավորումներն ու արհմիությունները, կրթական և մշակութային հաստատությունները, մեդիան, ինչպես նաև քաղաքացիական նախաձեռնություններն ու խմբերը (կամավորական և սոցիալական շարժումներ):

99. Թվարկե՛ք քաղաքացիական հասարակության գործառույթներից մի քանիսը:

Ակնկալվող պատասխան. Գործառույթներից են՝ իրավունքների պաշտպանությունը, հասարակական վերահսկողությունը (կոռուպցիայի կանխում և թափանցիկության ապահովում), մասնակցությունը քաղաքականության մշակմանը, սոցիալական երկխոսության զարգացումը, խոսքի ազատության և տեղեկատվության ապահովումը:

100. Ներկայացրե՛ք քաղաքացիական հասարակության հասկացությունն ու հատկանիշները, այն է՝ ազատ մարդը որպես բարձրագույն արժեք, ինքնակառավարման ներուժը, բազմազանությունը որպես բնութագրական հատկանիշ:

Ակնկալվող պատասխան. Քաղաքացիական հասարակությունն ազատ անհատներից կազմված իրավական, ազատական-ժողովրդավարական, ինքնակառավարվող ու բազմակարծիք բաց հասարակություն է: Դրա բարձրագույն արժեքը ազատ մարդն

է, որն ինքնուրույն իրականացնում է իր շահերը բոլորի համար հավասար օրենքի շրջանակներում: Ինքնակառավարման ներուժը դրսևորվում է քաղաքացիների կամավոր միավորումների միջոցով, իսկ բազմազանությունը (գաղափարական, քաղաքական, հոգևոր-մշակութային) դրա բնութագրական հատկանիշն է, որն ապահովում է տարբեր շահերի ազատ արտահայտումը:

Քաղաքացիություն, քաղաքացիականություն և քաղաքացիական մասնակցություն

101. Ի՞նչ է քաղաքացիությունը, և ինչո՞վ է այն տարբերվում քաղաքացիականությունից:

Ակնկալվող պատասխան. Քաղաքացիությունն արտահայտում է պետության հետ մարդու քաղաքական ու իրավական կայուն կապը՝ կողմերի փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով: Քաղաքացիականությունն այն որակն է, որով օժտված անհատը՝ որպես իսկական քաղաքացի, գիտակցում է իր իրավունքներն ու պարտականությունները հայրենիքի և պետության նկատմամբ: Այսինքն՝ քաղաքացիությունը իրավական կարգավիճակ է, իսկ քաղաքացիականությունը՝ քաղաքացու գիտակցված, պատասխանատու վերաբերմունքը:

102. Ներկայացրե՛ք մարդկանց իրավական կարգավիճակներն ըստ քաղաքացիության՝ քաղաքացիներ, այլ պետության քաղաքացիներ, երկքաղաքացիներ, քաղաքացիություն չունեցողներ:

Ակնկալվող պատասխան. Քաղաքացիներին են վերապահվում քաղաքական և մի շարք այլ իրավունքներ, և նրանց չի կարելի հանձնել օտար պետությանը (բացի միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերից): Այլ պետության քաղաքացիները չեն զրկվում իրենց քաղաքական իրավունքներից, ունեն դիվանագիտական պաշտպանություն, բայց ՀՀ-ում չունեն, օրինակ, ընտրական իրավունք և կուսակցություններ ստեղծելու իրավունք: Երկքաղաքացիները միաժամանակ Հայաստանի և մեկ այլ պետության քաղաքացի են՝ օրենքով սահմանված իրավունքներով: Քաղաքացիություն չունեցողները (ապատրիդներ) կորցրել են իրենց քաղաքացիությունը՝ առանց նորը ձեռք բերելու, չունեն դիվանագիտական պաշտպանություն և օժտված են միայն մարդուն բնորոշ իրավունքներով:

103. Ի՞նչ է քաղաքացիական մասնակցությունը, և որո՞նք են դրա տեսակներն ըստ հասարակական նշանակության:

Ակնկալվող պատասխան. Քաղաքացիական մասնակցությունը մարդկանց ակտիվ ներգրավվածությունն է հասարակական կյանքին և որոշումների կայացմանը (ընտրություններ, հանրահավաքներ, հանրային քննարկումներ, կամավորություն) իրենց համայնքում կամ երկրում: Ըստ հասարակական նշանակության՝ առանձնացվում են՝ ակտիվ մասնակցությունը (նախաձեռնողական, բարեփոխիչ վարքագիծ), հարմարվողական մասնակցությունը (անվերապահ ենթարկում առանց սեփական դիրքորոշման) և հասարակությունից օտարված, անտարբեր գոյատևումը:

104. Ի՞նչ է քաղաքացիական մասնակցությունը՝ որպես ժողովրդավարության դրսևորում. համեմատե՛ք ակտիվ և հարմարվողական մասնակցությունը:

Ակնկալվող պատասխան. Ժողովրդավարության պայմաններում քաղաքացիական մասնակցությունը թույլ է տալիս մարդկանց ազդել իշխանության որոշումների վրա և պաշտպանել իրենց շահերը: Ակտիվ մասնակցության դեպքում անհատը գործում է համոզմունքով, ցուցաբերում է նախաձեռնողականություն և ձգտում է բարեփոխումների՝ ունենալով սեփական դիրքորոշում: Հարմարվողական մասնակցության դեպքում անհատը հարմարվում է շրջապատի կարծիքին և դրսևորում անվերապահ ենթարկում առանց սեփական դիրքորոշման: Ժողովրդավարության զարգացման համար նախընտրելի է ակտիվ, գիտակից մասնակցությունը:

Հասարակական և քաղաքական կազմակերպություններ

105. Ներկայացրե՛ք հասարակական կազմակերպությունները քաղաքացիական հասարակությունում, միավորումներ կազմելու իրավունքը, քաղաքական և ոչ քաղաքական կազմակերպությունները:

Ակնկալվող պատասխան. Միավորումներ կազմելու իրավունքը թույլ է տալիս անհատներին ստեղծել ոչ պետական, ինքնակառավարվող կազմակերպություններ՝ հանրային խնդիրներ լուծելու համար: Ոչ քաղաքական (հասարակական) կազմակերպությունները ստեղծվում են շահերի ընդհանրության հիմքով՝ հոգևոր կամ ոչ նյութական պահանջմունքներ բավարարելու նպատակով, և չեն ձգտում պետական իշխանության: Քաղաքական կազմակերպությունները (կուսակցությունները) ձևավորվում են ընդհանուր շահերի ու գաղափարների հիմքով և ձգտում են տիրանալու պետական իշխանությանը կամ ազդելու դրա վրա:

106. Ի՞նչ պայմաններով և ո՞ր մարմնի որոշմամբ կարող է կասեցվել կամ արգելվել կուսակցության գործունեությունը:

Ակնկալվող պատասխան. Կուսակցությունները կազմավորվում են ազատորեն և նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը, սակայն նրանց գործելակերպը չի կարող հակասել ժողովրդավարությանը: Երբ կուսակցության գործունեությունը հակասում է Սահմանադրությանն ու օրենքներին, դրա կասեցման կամ արգելման մասին որոշում է կայացնում Սահմանադրական դատարանը:

Շահերի պաշտպանություն և բազմակարծություն

107. Ի՞նչ է շահերի պաշտպանությունը. բերե՛ք օրինակներ:

Ակնկալվող պատասխան. Շահերի պաշտպանությունը քաղաքացիական հասարակության կարևոր գործառույթն է, երբ մարդիկ, խմբերը կամ կազմակերպությունները պայքարում են իրենց կամ ուրիշների իրավունքների համար: Այդպիսի օրինակներ են՝ կրթական, բնապահպանական, աշխատանքի ոլորտի, կանանց և սոցիալապես անապահով խմբերի իրավունքների, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանությունը:

108. Ինչ է բազմակարծությունը, և ինչո՞ւ է այն անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում:

Ակնկալվող պատասխան. Բազմակարծությունը նշանակում է, որ մարդիկ ազատ են արտահայտելու իրենց կարծիքները: Այն անհրաժեշտ է, որպեսզի տարբեր շահերի ու կարծիքների տեր մարդիկ կարողանան արտահայտվել և լսելի լինել, ինչը հասարակությանը թույլ է տալիս խնդիրների համար գտնել լավագույն լուծումներ: Ընդ որում՝ այլակարծությունը պետք է դրսևորվի իրավաչափորեն՝ օրենքի շրջանակներում:

109. Ինչո՞ւ է կարևոր, որ հասարակությունում լինեն տարբեր կարծիքներ և գաղափարներ:

Ակնկալվող պատասխան. Տարբեր կարծիքների առկայությունը թույլ է տալիս խնդիրները դիտարկել տարբեր տեսանկյուններից, խոսել տարբեր շահերի մասին և գտնել առավել հավասարակշռված լուծումներ: Դա նաև ապահովում է քաղաքացիների՝ իրենց իրավունքներն ու շահերը պաշտպանելու հնարավորությունը և նպաստում ժողովրդավարության ամրապնդմանը:

Զանգվածային լրատվության միջոցներ (ԶԼՄ)

110. Ինչ է զանգվածային լրատվությունը, և ո՞րն է դրա հիմնական նպատակը:

Ակնկալվող պատասխան. Զանգվածային լրատվությունն անսահմանափակ թվով անձանց համար հասանելի տեղեկատվության տարածումն է: Դրա հիմնական նպատակն է ապահովել մարդու սահմանադրական իրավունքը ազատորեն, անկախ պետական սահմաններից, փնտրել, ստանալ և տարածել տեղեկություններ ու գաղափարներ:

111. Թվարկե՛ք և բնութագրե՛ք ԶԼՄ-ների հիմնական գործառույթները:

Ակնկալվող պատասխան. Հիմնական գործառույթներն են՝ տեղեկատվություն հաղորդելը, մեկնաբանությունը (որպես հասարակության շահի ներկայացուցիչ), վերահսկողությունը (որպես «հասարակական հսկիչ») և հասարակական կարծիքի ձևավորումը փորձագիտական կարծիքների ու վերլուծությունների ներկայացմամբ:

112. Ներկայացրե՛ք ԶԼՄ-ների բացասական ազդեցություններից մի քանիսը:

Ակնկալվող պատասխան. Բացասական ազդեցություններից են՝ կեղծ տեղեկատվության (ապատեղեկատվության) տարածումը, մանիպուլյացիան ու քարոզչությունը, հասարակական պառակտումն ու բևեռացումը, մասնավոր կյանքի գաղտնիության խախտումը, կարծրատիպերի տարածումը և ագրեսիայի կամ բռնության քարոզումը:

113. Ինչ խորհուրդներ կտայիք մեդիագրագետ սպառողին:

Ակնկալվող պատասխան. Պետք է ստուգել հեղինակին, վերլուծել ասելիքը, ճշտել՝ ում խոսքն է մեջբերվում, կասկածով մոտենալ սենսացիոն վերնագրերին ու զգայական պատկերներին, տարբերել լրագրողական աշխատանքը սոցիալական ցանցի

գրառումից, հիշել, որ մեդիան միջնորդավորված է, զգուշանալ վախեցնող լրահոսից և տեղեկատվությունը համեմատել տարբեր աղբյուրների հետ:

114. Հնարավո՞ր է արդյոք ժողովրդավարական հասարակության բնականոն գոյությունն առանց լրատվամիջոցների. հիմնավորե՛ք:

Ակնկալվող պատասխան. Ո՛չ: Անկախ և ազատ մեդիա ունենալը ժողովրդավարության հիմքերից է: ԶԼՄ-ները տեղեկացնում են հանրությանը, վերահսկում իշխանության գործունեությունը, ապահովում թափանցիկություն ու ազատ խոսք և նպաստում հասարակական կարծիքի ձևավորմանը: Առանց դրանց քաղաքացիները զրկվում են տեղեկացված որոշումներ կայացնելու հնարավորությունից:

115. Ի՞նչ դեր են խաղում ԶԼՄ-ները ընտրությունների ընթացքում:

Ակնկալվող պատասխան. Ընտրությունների ժամանակ ԶԼՄ-ները լուսաբանում են թեկնածուների ծրագրերը, ելույթներն ու հանդիպումները՝ օգնելով ընտրողներին ծանոթանալու թեկնածուների տեսակետներին և համեմատելու առաջարկները: Հեռուստաբանավեճերը, վերլուծական հաղորդումներն ու հարցազրույցները մեծ ազդեցություն ունեն ընտրողների որոշումների վրա:

Հանրային քաղաքականություն և հանրային բարիք

116. Ի՞նչ է հանրային քաղաքականությունը, և ովքե՞ր են դրա մասնակիցները:

Ակնկալվող պատասխան. Հանրային քաղաքականությունն իշխանության մարմինների՝ հանրության հետ համաձայնեցված գործողություններն են՝ քաղաքացիների իրավունքները պաշտպանելու և համընդհանուր բարեկեցությանը նպաստելու համար: Մասնակիցներն են՝ իշխանության երեք ճյուղերը (օրենսդիր, գործադիր, դատական), քաղաքական կուսակցությունները, ԶԼՄ-ները, շահագրգիռ խմբերն ու ՀԿ-ները և առանձին անհատները:

117. Ներկայացրե՛ք հանրային քաղաքականության գործընթացի հիմնական քայլերը:

Ակնկալվող պատասխան. Քայլերն են՝ Մուտք (հիմնախնդրի բացահայտում, ուսումնասիրում, քննարկում), Որոշումների կայացում, Ելք/արդյունք (օրենքներ, ծրագրեր, որոշումներ, հրամաններ), Իրականացում, Գնահատում/արժևորում և Հետադարձ կապ (տեսակետների փոխանակում՝ թերությունները շտկելու համար):

118. Ի՞նչ է հանրային բարիքը, և ինչո՞վ է այն տարբերվում սովորական բարիքից:

Ակնկալվող պատասխան. Հանրային բարիքն այն ապրանքներն ու ծառայություններն են, որոնք մրցակցային չեն (մեկի օգտագործումը չի նվազեցնում մյուսի հնարավորությունը) և բացառելի չեն (մեկի օգտագործումը չի խանգարում մյուսին): Սովորական բարիքը, ընդհակառակը, մրցակցային և բացառելի է. օրինակ՝ մաքուր օդը հանրային բարիք է, իսկ շոկոլադը՝ սովորական բարիք: Հանրային բարիքներ ապահովելու հիմնական բեռը դրված է պետության վրա:

Թեմա 3

ԻՐԱՎՈՒՆՔ, ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Բարոյական նորմեր. բարոյականության ոսկե կանոնը

1. Ինչ են բարոյական նորմերը.

ա) համատեղ ապրելու և միմյանց հետ շփվելու վարքագծի կանոններ,
բ) պետության կողմից սահմանված պատժամիջոցներ,
գ) միայն կրոնական համայնքներում գործող կանոններ,
դ) դատարանի ընդունած որոշումներ:

2. Ինչի՞ վրա են հիմնվում համակեցության և շփման մասին մարդկանց պատկերացումները.

ա) միայն օրենքների,
բ) բարու և չարի, ճշմարիտի և սխալի,
գ) միայն պետական հարկադրանքի,
դ) միայն տնտեսական շահի:

3. Ստորև թվարկվածներից ո՞րը բարոյական պատկերացումների ձևավորման աղբյուր չէ.

ա) ավանդույթներն ու սովորույթները,
բ) կրոնը,
գ) դատական նախադեպը,
դ) հեքիաթներն ու առասպելները:

4. Բարոյական նորմերն ունեն.

ա) միայն որոշ մարդկանց վրա տարածվող բնույթ,
բ) միայն գրավոր ձև,
գ) պետական հարկադրանքով երաշխավորված բնույթ,
դ) տվյալ համայնքում համընդհանուր կատարման համար պարտադիր բնույթ:

5. Ո՞ւմ են առօրյայում անվանում բարոյական մարդ.

ա) նրան, ով իր վարքը համապատասխանեցնում է ընդունված բարոյական նորմերին,
բ) նրան, ով երբեք չի սխալվում,
գ) նրան, ով հարուստ է,
դ) նրան, ով պարզապես քաղաքավարի է:

6. Բարոյականը և քաղաքավարին.

ա) նույն իրողությունն են,
բ) չեն համընկնում,

գ) միշտ հակադրվում են,
դ) կախված են միայն օրենքից:

7. Բարոյական նորմը խախտելու դեպքում առաջ է գալիս.

ա) պետական հարկադրանք,
բ) քրեական պատիժ,
գ) հասարակական պարսավանք,
դ) դատական հայց:

8. Ո՞վ է բարոյական արարքի «դատավորը».

ա) դատարանը,
բ) ոստիկանությունը,
գ) պետությունը,
դ) հասարակական կարծիքը:

9. Ո՞րն է բարոյականության ոսկե կանոնը.

ա) դիմացինի հետ վարվի՛ր այնպես, ինչպես կցանկանաս, որ նա վարվի քեզ հետ,
բ) միշտ հնազանդվի՛ր օրենքին,
գ) մտածի՛ր միայն սեփական շահի մասին,
դ) երբեք մի՛ վստահիր ուրիշներին:

10. Ո՞րն է ոսկե կանոնի առանցքը.

ա) հարկադրանքը,
բ) փոխադարձությունը,
գ) պատիժը,
դ) մրցակցությունը:

11. Ստորև բերվածներից ո՞րն է բնութագրում բարոյականության պատկերացումների բնույթը.

ա) դրանք քարացած են և երբեք չեն փոխվում,
բ) դրանք փոխվում են միայն օրենքի փոփոխությամբ,
գ) դրանք ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել,
դ) դրանք կախված չեն մշակույթից:

Բարոյականության հիմնական հասկացությունները

12. Ի՞նչ է առաքինությունը.

ա) հարստություն կուտակելու կարողություն,
բ) ուրիշներին ղեկավարելու ունակություն,
գ) օրենքներ ստեղծելու իրավունք,
դ) բարոյական ճանապարհից չշեղվելու համար մարդուն անհրաժեշտ որակ:

13. Ինչ է էգոիզմը (եսասիրությունը).

ա) համոզմունք, ըստ որի սեփական ցանկությունների բավարարումն ավելի կարևոր է, քան այլոց կարիքները,
բ) ուրիշների մասին անձնվեր հոգատարությունը,
գ) ընկերասիրությունը,
դ) հայրենասիրությունը:

14. Ինչ է ալտրուիզմը (այլասիրությունը).

ա) սեփական շահերին հետամուտ լինելը,
բ) ուրիշների նկատմամբ անշահախնդիր հոգատարությունը՝ ընդհուպ զոհողություն,
գ) իշխանության ձգտումը,
դ) գիտելիք կուտակելը:

15. Բարոյագիտության տեսանկյունից էգոիզմը դիտարկվում է որպես.

ա) դրական սկզբունք,
բ) չեզոք սկզբունք,
գ) բացասական դիրքորոշում,
դ) առաքինություն:

16. Ալտրուիզմը բարոյական տեսանկյունից դիտարկվում է որպես.

ա) բացասական սկզբունք,
բ) օրինախախտում,
գ) քաղաքավարության դրսևորում,
դ) դրական սկզբունք:

17. Ո՞ր իմաստասերն է ասել՝ առաքինությունը գիտելիքն է.

ա) Սոկրատեսը,
բ) Պլատոնը,
գ) Արիստոտելը,
դ) Կանտը:

18. Ո՞ր մտածողն է առաքինությունն ամփոփել «ոսկե միջինի» կանոնի մեջ.

ա) Կոնֆուցիոսը,
բ) Արիստոտելը,
գ) Սոկրատեսը,
դ) Նժդեհը:

19. Ըստ Պլատոնի՝ առկա է չորս առաքինություն: Ստորև թվարկվածներից ո՞րը դրանցից չէ.

ա) իմաստությունը,
բ) քաջությունը,
գ) հարստությունը,
դ) արդարությունը:

20. Ըստ Իմանուիլ Կանտի՝ մարդը մեկ այլ մարդու հետ պետք է շփվի.

ա) որպես միջոցի,
բ) որպես մրցակցի,
գ) որպես ենթակայի,
դ) որպես նպատակի:

21. Ո՞ր հայ մտածողն է հայրենասիրությունը համարել մարդկային բարոյականության բարձրագույն արտահայտությունը.

ա) Գարեգին Նժդեհը,
բ) Մեսրոպ Մաշտոցը,
գ) Լեոն,
դ) Մովսես Խորենացին:

22. Հունական դիցաբանության ո՞ր կերպարի անունն է դարձել ինքնասիրահարվածության և հպարտության խորհրդանիշ.

ա) Յուստիցիա,
բ) Նարցիս (Նարկիսոս),
գ) Թեմիս,
դ) Հերոստրատ:

23. Ստորև թվարկվածներից ո՞րն է առաքինի մարդուն բնութագրող հատկանիշ.

ա) ազնվությունը,
բ) քաջությունը,
գ) մարդասիրությունը,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

Հասարակական նորմեր. իրավական և բարոյական նորմեր. իրավունք

24. Ի՞նչ է իրավունքը.

ա) միայն բարոյական կանոնների ամբողջությունը,
բ) կրոնական համայնքի ներքին կանոնները,
գ) մարդու վարքն ու հասարակական հարաբերությունները կարգավորող, պետության սահմանած համապարտադիր նորմերի համակցությունը,
դ) անհատի անձնական ցանկությունների ամբողջությունը:

25. Ի՞նչ են հասարակական նորմերը.

ա) միայն պետության ընդունած օրենքները,
բ) միայն կրոնական պատվիրանները,
գ) բնության օրենքները,
դ) միմյանց հետ հարաբերությունները կարգավորելու համար մարդկանց ստեղծած վարքագծի կանոնները:

26. Ստորև թվարկվածներից ո՞րը հասարակական նորմ չէ.

ա) ֆիզիկայի օրենքը,
բ) սովորույթը,
գ) կրոնական նորմը,
դ) էթիկական նորմը:

27. Ի՞նչ է սովորույթը.

ա) պետության ընդունած իրավական ակտ,
բ) ժամանակի ընթացքում պարբերաբար կրկնվելու արդյունքում բյուրեղացած վարքագծի կանոն,
գ) դատարանի որոշում,
դ) մասնագիտական համայնքի էթիկական կանոն:

28. Ո՞ր համայնքներում են գործում էթիկական նորմերը.

ա) միայն կրոնական,
բ) միայն ընտանեկան,
գ) մասնագիտական համայնքներում (փաստաբանների, դատավորների, բժիշկների և այլն),
դ) միջազգային:

29. Ի՞նչ է օրենքը.

ա) կրոնական պատվիրան,
բ) սովորույթ,
գ) բարոյական նորմ,
դ) պետության կողմից ընդունվող իրավական ակտ:

30. Ինչո՞վ է իրավունքը տարբերվում հասարակական այլ կարգավորիչներից (կրոն, սովորույթ, բարոյականություն).

ա) պետական հարկադրանքով,
բ) միայն գրավոր ձևով,
գ) հնությամբ,
դ) կրոնական հիմքով:

31. Ո՞ր հատկանիշն է բնորոշ իրավական նորմերին՝ ի տարբերություն բարոյական նորմերի.

ա) վերացական են և խիստ ձև չունեն,
բ) խիստ որոշակի, հստակ ձև ունեն և հիմնականում ամրագրված են պաշտոնական ակտերում,
գ) գտնվում են միայն մարդկանց գիտակցության մեջ,
դ) ունեն որոշակի ամրագրում, բայց չունեն պարտադիր բնույթ:

32. Համմուրաբիի օրենքները օրինակն են այն բանի, որ Հին Արևելքում.

ա) իրավական նորմերը հստակ տարանջատված էին բարոյականից,
բ) գոյություն չուներ որևէ նորմ,
գ) դժվար էր տարանջատել իրավական, բարոյական և կրոնական նորմերը,
դ) գործում էին միայն դատական նախադեպերը:

33. Ե՞րբ է առաջանում մարդկանց վարքագիծը իրավունքով կարգավորելու անհրաժեշտությունը.

ա) երբ հասարակությունը փոքր է և միատարր,
բ) երբ բոլորը ընդունում են նույն արժեքները,
գ) երբ չկան հակասություններ,
դ) երբ մարդկանց հարաբերությունները բարդանում են, և այլ նորմերով կարգավորումը ձախողվում է:

34. Ինչո՞ւ է իրավունքը համարվում հասարակական հարաբերությունների ամենաընդհանրական կարգավորիչը.

ա) որովհետև այն սահմանում է բոլորի համար հավասար և հավասարակշռված չափանիշներ,
բ) որովհետև կախված է անհատի կրոնից,
գ) որովհետև գործում է միայն միատարր հասարակություններում,
դ) որովհետև հիմնված է միայն սովորույթների վրա:

35. Ի՞նչ է անում պետությունը, երբ իրավունքները կամավոր չեն պահպանվում.

ա) փոխում է սովորույթները,
բ) կիրառում է պետական հարկադրանք,
գ) դիմում է միայն հասարակական պարսավանքի,
դ) անտեսում է խախտումը:

36. Ստորև թվարկվածներից ո՞րն է իրավունքի հատկանիշ.

ա) համապարտադիր է,
բ) սահմանվում է պետության կողմից,
գ) օժտված է պետական հարկադրանքով,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

37. Բարոյական նորմի խախտումն ուղղակիորեն ո՞ր դեպքում է առաջացնում պետական հարկադրանք.

ա) միշտ,
բ) երբ վկաներ կան,
գ) երբ տուժողը դիմում է դատարան,
դ) բոլոր պատասխանները սխալ են:

Իրավունքի աղբյուրները

38. Թվարկվածներից ո՞րը իրավունքի աղբյուրների երեք հիմնական տեսակներից չէ.

ա) նորմատիվ իրավական ակտը,
բ) իրավական սովորույթը,
գ) բարոյական նորմը,
դ) դատական նախադեպը:

39. Ի՞նչ է նորմատիվ իրավական ակտը.

ա) պաշտոնական փաստաթուղթ, որն ընդունվում է պետության կողմից,
բ) մարդկանց գիտակցության մեջ գոյություն ունեցող չգրված կանոն,
գ) դատարանի՝ կոնկրետ գործով որոշում,
դ) կրոնական սուրբ գիրք:

40. Ի՞նչ է իրավական սովորույթը.

ա) ցանկացած կրկնվող վարքագիծ,
բ) մարդկանց վարքագծի պարբերաբար կրկնման հետևանքով ձևավորված կանոն, որն ընկալվում է որպես պարտադիր,
գ) պետության ընդունած օրենք,
դ) դատարանի որոշմամբ արտահայտված վարքագծի կանոնը:

41. Ի՞նչ է դատական նախադեպը.

ա) իրավական սովորույթի հիման վրա պետության ընդունած օրենք,
բ) կրոնական նորմ,
գ) նմանատիպ փաստական հանգամանքներ ունեցող, նախկինում քննված գործով դատարանի ընդունած որոշում,
դ) բարոյական նորմ, որն արդեն դարձել է իրավական նորմ:

42. Ինչո՞վ է սովորությունը տարբերվում իրավական սովորույթից.

ա) սովորությունը միշտ գրավոր է,
բ) սովորությունն ընդունվում է պետության կողմից,
գ) սովորությունը կիրառվում է միայն դատարանում,
դ) սովորությունը հարկադրանք չի առաջացնում, այն պարզապես կրկնվող վարքագիծ է:

43. Ո՞ր հասարակություններում է առավել տարածված իրավական սովորույթը.

ա) միատարր հասարակություններում,
բ) բազմազգ հասարակություններում,
գ) միայն քաղաքային միջավայրում,
դ) միայն արդյունաբերական երկրներում:

44. Ո՞ր երկրներում է դատական նախադեպը համարվում իրավունքի առաջնային աղբյուր.

ա) Հայաստանում, Ֆրանսիայում, Գերմանիայում,
բ) Անգլիայում, ԱՄՆ-ում, Ավստրալիայում, Կանադայում,
գ) Ռուսաստանում, Իտալիայում,
դ) միայն միջազգային կազմակերպություններում:

45. Ինչո՞ւ են դատական նախադեպի երկրների դատավորներին անվանում «խոսող իրավունք».

ա) որովհետև նրանք միայն մեկնաբանում են օրենքները,
բ) որովհետև նրանք ընդունում են սահմանադրություն,
գ) որովհետև հենց նրանք են դատական նախադեպերով ստեղծում իրավունք,
դ) որովհետև նրանք սովորույթներ են ստեղծում:

46. Հայաստանում դատավորները.

ա) ստեղծում են իրավունք դատական նախադեպերով,
բ) ընդունում են օրենքներ,
գ) սահմանում են սովորույթներ,
դ) մեկնաբանում են արդեն օրենքներով հաստատված իրավունքները:

47. Իրավունքի նորմերը՝ որպես վարքագծի կանոններ, կարող են արտահայտվել.

ա) միայն գրավոր ձևով,
բ) միայն բանավոր ձևով,
գ) բանավոր և գրավոր ձևերով,
դ) բոլոր պատասխանները սխալ են:

48. Ստորև թվարկվածներից ո՞րը կարող է լինել իրավունքի աղբյուր.

ա) միջազգային պայմանագիրը,
բ) անհատի անձնական օրագիրը,
գ) գեղարվեստական վեպը,
դ) մասնավոր նամակը:

49. Ո՞ր դեպքում է սովորույթը վերածվում իրավական սովորույթի.

ա) երբ այն պարզապես կրկնվում է,
բ) երբ հասարակությունը ցանկանում է, որ այն ունենա պարտադիր բնույթ, և չկատարելու դեպքում հնարավոր լինի հարկադրանք կիրառել,
գ) երբ այն գրառվում է որևէ գրքում,
դ) երբ այն հնանում է:

Ընտրովի առաջադրանքների պատասխանների բանալի.

1	2	3	4	5	6	7	8	9	10
ա	բ	գ	դ	ա	բ	գ	դ	Ա	բ
11	**12**	**13**	**14**	**15**	**16**	**17**	**18**	**19**	**20**
գ	դ	ա	բ	գ	դ	ա	բ	Գ	դ
21	**22**	**23**	**24**	**25**	**26**	**27**	**28**	**29**	**30**
ա	բ	դ	գ	դ	ա	բ	գ	Դ	ա
31	**32**	**33**	**34**	**35**	**36**	**37**	**38**	**39**	**40**
բ	գ	դ	ա	բ	դ	դ	գ	Ա	բ
41	**42**	**43**	**44**	**45**	**46**	**47**	**48**	**49**	
գ	դ	ա	բ	գ	դ	գ	ա	Բ	

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

50. Համապատասխանեցրե՛ք հասկացությունները և դրանց բնորոշումները:

1. Բարոյականություն	ա. Հասարակության կողմից անձին տրված բացասական գնահատական
2. Հասարակական կարծիք	բ. Նորմերի, կանոնների ամբողջություն, որով կարգավորվում է մարդկանց վարքը
3. Հասարակական պարսավանք	գ. Պետության կողմից սահմանված պատժամիջոց
4. Պետական հարկադրանք	դ. Որոշակի թեմայի վերաբերյալ անհատական հայացքների համախումբ՝ արտահայտված համայնքի զգալի հատվածի կողմից

Պատասխան՝ **1 – բ, 2 – դ, 3 – ա, 4 – գ**

51. Համապատասխանեցրե՛ք անունները և նրանց բնութագրերը:

1. Գարեգին Նժդեհ	ա. Արդարադատության խորհրդանիշ՝ կշեռքով, սրով և աչքակապով
2. Համմուրաբի	բ. Հայրենասիրությունը համարել է բարոյականության բարձրագույն արտահայտություն
3. Նարցիս	գ. Հին Արևելքի օրենսդիր, որի օրենքներում միաձուլված էին իրավական, բարոյական և կրոնական նորմերը
4. Թեմիս (Ֆեմիդա, Յուստիցիա)	դ. Ինքնասիրահարվածության և հպարտության խորհրդանիշ դարձած դիցաբանական հերոս

Պատասխան՝ **1 – բ, 2 – գ, 3 – դ, 4 – ա**

52. Համապատասխանեցրե՛ք հասարակական նորմի տեսակները և դրանց բնութագրերը:

1. Սովորույթ	ա. Մասնագիտական համայնքներում գործող պարտադիր կանոններ
2. Կրոնական նորմ	բ. Պարբերաբար կրկնվելով բյուրեղացած վարքագծի կանոն
3. Էթիկական նորմ	գ. Պետության կողմից ընդունվող իրավական ակտ
4. Օրենք	դ. Որոշակի կրոնի շրջանակներում ընդունված վարքագծի կանոններ

Պատասխան՝ **1 – բ, 2 – դ, 3 – ա, 4 – գ**

53. Համապատասխանեցրե՛ք իրավունքի աղբյուրները և դրանց բնորոշումները:

1. Նորմատիվ իրավական ակտ	ա. Նախկինում քննված նման գործով դատարանի որոշում
2. Իրավական սովորույթ	բ. Պետության կողմից ընդունվող պաշտոնական փաստաթուղթ
3. Դատական նախադեպ	գ. Պարբերաբար կրկնվող, պարտադիր ընկալվող վարքագծի կանոն

Պատասխան՝ **1 – բ, 2 – գ, 3 – ա**

54. Համապատասխանեցրե՛ք բարոյական արժեքները և դրանց բնութագրերը:

1. Էգոիզմ	ա. Ուրիշների մասին սեփական անձից ավելի շատ հոգ տանելը
2. Ալտրուիզմ	բ. Սեփական շահերին հետամուտ լինելը՝ անտեսելով ուրիշների շահերը
3. Առաքինություն	գ. Բարոյական ճանապարհից չշեղվելու համար անհրաժեշտ որակ

Պատասխան՝ **1 – բ, 2 – ա, 3 – գ**

ԼՐԱՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Լրացրե՛ք բաց թողնված բառը կամ բառակապակցութունը:

55. Բարոյականության ոսկե կանոնի առանցքը _____ է:
Պատասխան՝ ***փոխադարձությունն***

56. Բարոյական նորմերը խախտելու դեպքում առաջանում է ոչ թե պետական հարկադրանք, այլ _____ :
Պատասխան՝ ***հասարակական պարսավանք***

57. Բարոյական սկզբունքներից չշեղվելու համար մարդուն անհրաժեշտ որակներն անվանում են _____ :
Պատասխան՝ ***առաքինություններ***

58. _____ բարոյական սկզբունք է, որն արտահայտվում է ուրիշների նկատմամբ անշահախնդիր հոգատարությամբ:
Պատասխան՝ ***Ալտրուիզմը***

59. Ըստ Սոկրատեսի՝ «առաքինությունը _____ է»:
Պատասխան՝ ***գիտելիքն***

60. _____ մարդու վարքն ու հասարակական հարաբերությունները կարգավորող, պետության սահմանած համապարտադիր նորմերի համակցությունն է:
Պատասխան՝ ***Իրավունքը***

61. _____ նորմերը որոշակի մասնագիտական համայնքներում գործող պարտադիր կանոններ են:
Պատասխան՝ ***էթիկական***

62. Իրավունքը հասարակական այլ կարգավորիչներից տարբերվում է _____ :
Պատասխան՝ ***պետական հարկադրանքով***

63. Իրավունքի աղբյուրների երեք հիմնական տեսակներն են՝ _____ , իրավական սովորույթ և դատական նախադեպ:
Պատասխան՝ ***նորմատիվ իրավական ակտ***

64. _____ իրավական նորմեր պարունակող պաշտոնական փաստաթուղթ է, որն ընդունվում է պետության, այդ թվում՝ դրա գործադիր իշխանության կողմից:
Պատասխան՝ ***Նորմատիվ իրավական ակտը***

65. _____ նմանատիպ փաստական հանգամանքներ ունեցող, նախկինում քննված գործով դատարանի ընդունած որոշումն է:
Պատասխան՝ ***Դատական նախադեպը***

ՇԱՐԱԴՐՎՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

66. Ներկայացրե՛ք, թե ինչ է բարոյական նորմը և ինչ դեր ունի հասարակության մեջ:

Ակնկալվող պատասխան. Բարոյական նորմը համատեղ ապրելու և շփվելու վարքագծի կանոն է, որը հիմնվում է բարու և չարի պատկերացումների վրա, ունի համընդհանուր պարտադիր բնույթ և կարգավորում է մարդկանց վարքը ոչ թե պետական հարկադրանքով, այլ հասարակական կարծիքի ու պարսավանքի միջոցով:

67. Բացատրե՛ք բարոյականության ոսկե կանոնի էությունը:

Ակնկալվող պատասխան. Ոսկե կանոնի համաձայն՝ մարդ պետք է վարվի ուրիշների հետ այնպես, ինչպես կցանկանար, որ իր հետ վարվեն, և ձեռնպահ մնա այն արարքներից, որ չէր ցանկանա՝ ուղղված լինեն իրեն: Դրա առանցքը փոխադարձությունն է. բարձր բարոյականությունը բարիք գործելն է նույնիսկ առանց փոխհատուցում ակնկալելու:

68. Ներկայացրե՛ք բարոյականության և քաղաքավարության տարբերությունը՝ բերելով օրինակներ:

Ակնկալվող պատասխան. Բարոյականությունը վերաբերում է բարու և չարի, ազնվության ու պարտականության հարցերին (օրինակ՝ ընկերոջն օգնելը, ազնիվ լինելը), իսկ քաղաքավարությունը վարվելակերպի չգրված կանոններին է վերաբերում (օրինակ՝ «Դուք»-ով դիմելը, հասարակական վայրում չաղմկելը): Անքաղաքավարի վարքը անբարոյական չէ:

69. Ի՞նչ է հասարակական կարծիքը, և ինչպե՞ս է այն ձևավորվում:

Ակնկալվող պատասխան. Հասարակական կարծիքը մարդկանց խմբերի ընդհանուր կարծիքն է՝ հիմնված տեղեկատվության ընդունման կամ մերժման վրա: Այն ձևավորվում է տարածված համոզմունքներից, կարծրատիպերից, երբեմն նաև կեղծ լուրերից. մեծ դեր ունեն զանգվածային լրատվության միջոցներն ու հեղինակավոր անձանց կարծիքները:

70. Ներկայացրե՛ք էգոիզմի և ալտրուիզմի տարբերությունը:

Ակնկալվող պատասխան. Էգոիզմը (եսասիրություն) սեփական շահերին հետամուտ լինելն է՝ ուրիշների կարիքներն անտեսելով, և բարոյագիտական տեսանկյունից գնահատվում է որպես բացասական իրողություն: Ալտրուիզմը (այլասիրություն) ուրիշների մասին ավելի շատ հոգ տանելն է, քան սեփական անձի, և գնահատվում է որպես դրական իրողություն:

71. Ի՞նչ է առաքինությունը. ներկայացրե՛ք փիլիսոփաների տեսակետները (Կոնֆուցիոս, Սոկրատես, Պլատոն, Արիստոտել):

Ակնկալվող պատասխան. Առաքինությունը բարոյական ճանապարհից չշեղվելու համար անհրաժեշտ որակ է: Կոնֆուցիոսը առանձնացնում էր հինգ առաքինություն

(մարդասիրություն, արդարություն, ողջամտություն, ազնվություն, հարգանք ավանդույթներին): Սոկրատեսը կարծում էր, որ «առաքինությունը գիտելիքն է»: Պլատոնը նշում էր չորսը՝ իմաստություն, քաջություն, արդարություն, չափավորություն: Արիստոտելը այն ամփոփում էր «ոսկե միջինի» կանոնում:

72. Բացատրե՛ք Իմանուիլ Կանտի բարոյական երկու սկզբունքները:

Ակնկալվող պատասխան. Առաջին՝ մարդուն պետք է վերաբերվել որպես նպատակի, ոչ թե միջոցի, այսինքն՝ չշահագործել դիմացինին սեփական նպատակների համար: Երկրորդ՝ մարդ պետք է դրսևորի այնպիսի վարքագիծ, որն արժանի լինի դառնալու բոլորի համար օրինակ:

73. Ինչո՞ւ է Գարեգին Նժդեհը հայրենասիրությունը համարել բարձրագույն առաքինություն:

Ակնկալվող պատասխան. Ըստ Նժդեհի՝ հայրենասիրությունը մարդկային բարոյականության բարձրագույն արտահայտությունն է, քանի որ արիություն է պահանջում. այն ենթադրում է համարձակություն, կյանքի կամ ունեցվածքի վտանգում, իսկ առօրյայում՝ նվիրված աշխատանք ու հոգատարություն:

74. Ներկայացրե՛ք հասարակական նորմերի հիմնական տեսակները:

Ակնկալվող պատասխան. Հասարակական նորմերն են՝ սովորույթներ (պարբերաբար կրկնվող բյուրեղացած կանոններ), բարոյական նորմեր, կրոնական նորմեր (որոշակի կրոնի շրջանակում), էթիկական նորմեր (մասնագիտական համայնքներում), իրավական նորմեր (պետության կողմից սահմանված):

75. Ի՞նչ է իրավունքը. ներկայացրե՛ք դրա հիմնական հատկանիշները:

Ակնկալվող պատասխան. Իրավունքը մարդու վարքն ու հասարակական հարաբերությունները կարգավորող, պետության սահմանած նորմերի համակցությունն է: Հատկանիշներն են՝ սահմանվում է պետության կողմից, ամրագրվում է պաշտոնական փաստաթղթերում, համապարտադիր է և օժտված պետական հարկադրանքով, պայմանավորված է մարդու և հասարակության զարգացվածությամբ:

76. Բացատրե՛ք իրավական և բարոյական նորմերի տարբերությունը օրինակներով:

Ակնկալվող պատասխան. Բարոյական նորմերը վերացական են, խիստ ձև չունեն և գտնվում են մարդկանց գիտակցության մեջ (օրինակ՝ «եղի՛ր բարի», «հավատարի՛մ եղիր ընկերոջդ»): Իրավական նորմերը հստակ ձև ունեն, ամրագրված են իրավական ակտերում և ապահովվում են պետական հարկադրանքով (օրինակ՝ վիրավորանքի կամ զրպարտության դեպքում անձը կարող է դիմել դատարան):

77. Ինչո՞ւ է առաջանում մարդկանց վարքագիծը իրավունքով կարգավորելու անհրաժեշտությունը:

Ակնկալվող պատասխան. Հասարակության ընդլայնվելուն զուգահեռ մարդկանց շահերն ու պահանջմունքները ավելի բազմազան են դառնում և հակասում են իրար: Երբ հարաբերությունները բարդանում են, միայն սովորույթներով, բարոյական ու կրոնական նորմերով կարգավորումը ձախողվում է, քանի որ ոչ բոլորն են ընդունում նույն արժեքները: Հենց այդ ժամանակ առաջանում է իրավունքով կարգավորելու անհրաժեշտությունը:

78. Ի՞նչ է պետական հարկադրանքը, և ինչո՞վ է այն տարբերում իրավունքը մյուս կարգավորիչներից:

Ակնկալվող պատասխան. Պետական հարկադրանքը պետության կողմից սահմանված պատժամիջոց է, որը կիրառում է իրավունքը խախտողի նկատմամբ՝ ստիպելով նրան հետևել իրավական կարգադրությանը: Հենց պետական հարկադրանքով է իրավունքը տարբերվում կրոնից, սովորույթից և բարոյականությունից:

79. Ներկայացրե՛ք իրավունքի աղբյուրների երեք հիմնական տեսակները:

Ակնկալվող պատասխան. Երեք հիմնական աղբյուրներն են՝ նորմատիվ իրավական ակտ (պետության ընդունած պաշտոնական փաստաթուղթ), իրավական սովորույթ (պարբերաբար կրկնվող, պարտադիր ընկալվող կանոն) և դատական նախադեպ (նման գործով նախկինում ընդունված դատական որոշում):

80. Ի՞նչ է նորմատիվ իրավական ակտը. բերե՛ք օրինակ:

Ակնկալվող պատասխան. Նորմատիվ իրավական ակտը պաշտոնական փաստաթուղթ է, որն ընդունվում է պետության կողմից և բովանդակում իրավունքի նորմեր: Օրինակ՝ օրենք, կառավարության որոշում, նախարարության հրաման:

81. Բացատրե՛ք, թե ինչով է սովորական սովորույթը տարբերվում իրավական սովորույթից:

Ակնկալվող պատասխան. Սովորական սովորույթը (սովորությունը) պարզապես կրկնվող վարքագիծ է և հարկադրանք չի առաջացնում: Իրավական սովորույթը դառնում է պարտադիր. հասարակությունն ունի իրավական համոզվածություն, որ այն պետք է կատարվի, և չկատարելու դեպքում կիրառվում է հարկադրանք:

82. Ի՞նչ է դատական նախադեպը, և ո՞ր երկրներում է այն իրավունքի առաջնային աղբյուր:

Ակնկալվող պատասխան. Դատական նախադեպը նմանատիպ փաստական հանգամանքներ ունեցող, նախկինում քննված գործով դատարանի որոշումն է, որը կիրառվում է նոր, նմանատիպ գործը լուծելիս: Այն առաջնային աղբյուր է Անգլիայում, ԱՄՆ-ում, Ավստրալիայում, Կանադայում, որտեղ դատավորներին անվանում են «խոսող իրավունք»:

83. Ինչո՞ւ է իրավական սովորույթը առավել տարածված միատարր հասարակություններում:

Ակնկալվող պատասխան. Միատարր հասարակություններում մարդիկ պատկանում են միևնույն էթնիկ խմբին, ավելի միանման են մտածում, ունեն ճիշտ և սխալ վարքագծի վերաբերյալ համընկնող պատկերացումներ: Ուստի հարաբերությունների զգալի մասը կարգավորվում է սովորութային իրավունքով:

84. Համմուրաբիի օրենքների օրինակով բացատրե՛ք, թե ինչու Հին Արևելքում դժվար էր տարանջատել իրավական, բարոյական և կրոնական նորմերը:

Ակնկալվող պատասխան. Համմուրաբիի 192-րդ հոդվածը, օրինակ (որդեգրված որդու պատիժ), միաժամանակ իրավական նորմ էր (ընդունված պետության՝ Համմուրաբի թագավորի կողմից), բարոյական պարտականություն (հարգել որդեգրողներին) և կրոնական նորմ (օրենքները համարվում էին արևի աստված Շամաշի կամքը): Դա ցույց է տալիս, որ Հին Արևելքում այդ նորմերը միասնական տեսք ունեին:

85. Համեմատե՛ք բարոյական և իրավական կարգավորումը՝ նշելով դրանց առանձնահատկությունները:

Ակնկալվող պատասխան. Բարոյական կարգավորումն ապահովվում է հասարակական կարծիքով ու պարսավանքով, ճկուն է, բայց ձևով անորոշ: Իրավական կարգավորումը հստակ է, ամրագրված ու համապարտադիր, ապահովված պետական հարկադրանքով և առավել արդարացիորեն է բաշխում ազատությունը՝ սահմանելով բոլորի համար հավասար պայմաններ: Երկուսը լրացնում են միմյանց հասարակության կարգավորման գործում:

Թեմա 4

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ
ԸՆՏՐՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Մարդու իրավունքների էությունը, բաղադրիչներն ու սերունդները

1. Ստորև թվարկվածներից ո՞ր շարքում են ճիշտ ներկայացված մարդու իրավունքների հիմնական բաղադրիչները.

ա) անօտարելի, անբաժանելի, համընդհանուր, փոխկապակցված,
բ) ժամանակավոր, բաժանելի, տեղական,
գ) շնորհվող, պայմանական, փոփոխական,
դ) պայմանագրային, տարածքային, ժառանգական:

2. «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով» դրույթը ցույց է տալիս, որ մարդու իրավունքները.

ա) պատկանում են միայն որոշ մարդկանց,
բ) կախված են անձի քաղաքացիությունից,
գ) պատկանում են միայն չափահասներին,
դ) համընդհանուր են և պատկանում են բոլորին՝ առանց խտրականության:

3. Բացարձակ իրավունքները նրանք են, որոնք.

ա) կարող են սահմանափակվել միայն պատերազմի ժամանակ,
բ) ոչ մի պարագայում չեն կարող ոտնահարվել կամ սահմանափակվել ոչ մեկի կողմից,
գ) սահմանափակվում են դատարանի ցանկացած որոշմամբ,
դ) կարող են սահմանափակվել մեծամասնության որոշմամբ:

4. Ստորև թվարկվածներից ո՞ր իրավունքն է իրապես բացարձակ, այսինքն՝ ոչ մի պարագայում սահմանափակման ենթակա չէ.

ա) կյանքի իրավունքը,
բ) սեփականության իրավունքը,
գ) խոշտանգման չենթարկվելու իրավունքը,
դ) ազատ տեղաշարժվելու իրավունքը:

5. Ինչո՞ւ են մարդու իրավունքները երբեմն անվանում բնական իրավունքներ.

ա) որովհետև դրանք սահմանվում են բնության պահպանության մասին օրենքներով,
բ) որովհետև դրանք վերաբերում են միայն բնապահպանությանը,
գ) որովհետև դրանք տրվում են ծնվելուց հետո պետության կողմից,
դ) որովհետև մարդն ունի դրանք բնության մասնիկ լինելու փաստի ուժով:

6. «Մարդու արժանապատվությունը նրա իրավունքների ու ազատությունների հիմքն է» սկզբունքը նշանակում է, որ.

ա) արժանապատվությունը կարելի է օտարել օրենքով,
բ) արժանապատվությունը վերաբերում է միայն չափահասներին,
գ) հենց արժանապատվության զգացումն ու համոզմունքն են ձևավորում մարդու իրավունքները,
դ) արժանապատվությունը կախված է մարդու հարստությունից:

7. Ստորև թվարկվածներից ո՞րը մարդու իրավունքների սկզբունք չէ.

ա) մարդու արժանապատվությունը նրա իրավունքների հիմքն է,
բ) իրավունքների պաշտպանության հասցեատերը պետությունն է,
գ) մարդու իրավունքներն ու ազատությունները պայքարի արդյունք են,
դ) իրավունքները պետության շնորհն են իր քաղաքացիներին:

8. Ստորև թվարկվածներից ո՞վ է մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության հասցեատերը.

ա) միջազգային կազմակերպությունները,
բ) բոլոր քաղաքացիները,
գ) պետությունը,
դ) Միավորված ազգերի կազմակերպությունը:

9. «Մարդու իրավունքներն ու ազատությունները պայքարի արդյունք են» դրույթն արտահայտում է այն միտքը, որ.

ա) իրավունքները պետության շնորհն են,
բ) իրավունքները ձևավորվում են բացառապես միջազգային պայմանագրերով,
գ) իրավունքները նվաճվում, պաշտպանվում և զարգանում են մարդկանց պայքարի միջոցով,
դ) իրավունքները գոյություն ունեն միայն թղթի վրա:

10. Ո՞ր փաստաթուղթն է սահմանում. «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով».

ա) Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը,
բ) ՄԱԿ–ի կանոնադրությունը,
գ) Հայաստանի Անկախության հռչակագիրը,
դ) Հայաստանի Սահմանադրությունը:

11. «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով» դրույթը նշանակում է, որ.

ա) պետությունն իրավունք ունի ոտնահարելու մարդկանց իրավունքները ժողովրդի պահանջով,
բ) ժողովրդական զանգվածներն իրենք կարող են սահմանափակել առանձին մարդկանց իրավունքները,
գ) իրավունքները գործում են միայն միջազգային մակարդակում,
դ) պետությունն իրավունք չունի ոտնահարելու այն, ինչի համար ինքը ստեղծվել է:

12. Ընտրական իրավունքը, հավաքներ ու ցույցեր կազմակերպելու իրավունքը, կուսակցություններ ստեղծելու իրավունքը իրավունքների ո՞ր սերնդին են վերաբերում.

ա) առաջին սերնդին (քաղաքացիական և քաղաքական),
բ) երկրորդ սերնդին (տնտեսական, սոցիալական, մշակութային),
գ) երրորդ սերնդին (համերաշխության),
դ) չորրորդ սերնդին (ազգային, կրոնական փոքրամասնությունների կամ տեխնոլոգիական զարգացմամբ պայմանավորված ապագայի այլ իրավունքներ):

13. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները մարդու իրավունքների ո՞ր սերնդին են պատկանում.

ա) առաջին սերնդին (քաղաքացիական և քաղաքական),
բ) երկրորդ սերնդին (տնտեսական, սոցիալական, մշակութային),
գ) երրորդ սերնդին (համերաշխության),
դ) չորրորդ սերնդին (ազգային, կրոնական փոքրամասնությունների կամ տեխնոլոգիական զարգացմամբ պայմանավորված ապագայի այլ իրավունքներ):

14. Համերաշխության (հավաքական կամ կոլեկտիվ) իրավունքները մարդու իրավունքների ո՞ր սերունդն են կազմում.

ա) առաջին սերնդին (քաղաքացիական և քաղաքական),
բ) երկրորդ սերնդին (տնտեսական, սոցիալական, մշակութային),
գ) երրորդ սերնդին (համերաշխության),
դ) չորրորդ սերնդին (ազգային, կրոնական փոքրամասնությունների կամ տեխնոլոգիական զարգացմամբ պայմանավորված ապագայի այլ իրավունքներ):

Անձնական, քաղաքացիական և քաղաքական իրավունքներ

15. Հետևյալ միտքը ո՞ր իրավունքն է բնութագրում. «Ոչ ոքի չի կարելի կամայականորեն զրկել այդ իրավունքից: Նախկինում, օրինակ, ստրկատիրական հասարակություններում ստրուկները զրկված էին դրանից, իսկ ֆեոդալական հասարակություններում ճորտերն արդեն ունեին այդ իրավունքը».

ա) կյանքի իրավունքը,
բ) սեփականության իրավունքը,
գ) կրթության իրավունքը,
դ) ընտրական իրավունքը:

16. Ստորև թվարկվածներից ո՞րն է անձնական (քաղաքացիական) իրավունք.

ա) ընտրվելու իրավունքը,
բ) գործադուլի իրավունքը,
գ) սոցիալական ապահովության իրավունքը,
դ) անձնական ու ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

17. «Ոչ ոք չի կարող ենթարկվել կտտանքների կամ նվաստացնող պատժի» դրույթն արտահայտում է.

ա) սեփականության իրավունքը,
բ) խոշտանգումների ու անմարդկային վերաբերմունքի արգելքը,
գ) աշխատանքի իրավունքը,
դ) սոցիալական ապահովության իրավունքը:

18. Ազատությունից զրկված անձինք (այդ թվում՝ դատապարտվածներն ու ռազմագերիները) ևս ունեն.

ա) ընտրվելու իրավունք,
բ) գործադուլի իրավունք,
գ) մարդասիրական վերաբերմունքի իրավունք,
դ) ազատ տեղաշարժվելու անսահմանափակ իրավունք:

19. «Ժողովրդավարական երկրներում մարդն ազատ է տեղափոխվելու ու ապրելու իր ցանկալի բնակավայրում»: Սա ո՞ր իրավունքի բնութագիրն է.

ա) ազատ տեղաշարժվելու իրավունքի,
բ) սեփականության իրավունքի,
գ) կրթության իրավունքի,
դ) հանգստի իրավունքի:

20. «Յուրաքանչյուր ոք ազատ է դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու որևէ կրոն»: Սա ո՞ր ազատության դրսևորումն է.

ա) տեղաշարժի ազատության,
բ) սեփականության ազատության,
գ) խոսքի ազատության,
դ) դավանանքի (խղճի) ազատության:

21. Դավանանքի ազատությունը ներառում է կրոնը կամ համոզմունքներն արտահայտելու ազատությունը, սակայն այդ արտահայտումը չպետք է ունենա.

ա) հրապարակային բնույթ,
բ) հոգեորսության բնույթ (մարդկանց ստիպել դավանել այս կամ այն կրոնը),
գ) անհատական բնույթ,
դ) ծիսական բնույթ:

22. Ստորև թվարկվածներից ո՞րն է քաղաքական իրավունք.

ա) հանգստի իրավունքը,
բ) սոցիալական ապահովության իրավունքը,
գ) հանրային կառավարմանը մասնակցելու իրավունքը,
դ) սեփականության իրավունքը:

23. Ընտրական իրավունքը ներառում է.

ա) միայն ընտրելու իրավունքը,
բ) միայն ընտրվելու իրավունքը,
գ) միայն հանրաքվեին մասնակցելու իրավունքը,
դ) ընտրելու ու ընտրվելու իրավունքը:

24. Գյուղի բնակիչները գյուղապետարանի առջև ցույց կազմակերպեցին: Սա ո՞ր տեսակի իրավունքի իրացում է.

ա) տնտեսական իրավունքի,
բ) մշակութային իրավունքի,
գ) քաղաքական իրավունքի,
դ) անձնական իրավունքի:

25. «Խտրականությունն արգելվում է՝ կախված սեռից, ռասայից, լեզվից, կրոնից և այլ հանգամանքներից» դրույթը բնութագրում է.

ա) ինքնորոշման իրավունքը,
բ) խտրականության արգելքը,
գ) գործադուլի իրավունքը,
դ) մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ

26. «Մարդու՝ օրենքով ճանաչված ու պահպանվող իրավունքն է իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը»: Ո՞ր իրավունքի բնութագիրն է սա.

ա) կյանքի իրավունքի,
բ) կրթության իրավունքի,
գ) աշխատանքի իրավունքի,
դ) սեփականության իրավունքի:

27. Ստորև թվարկվածներից ո՞րն է բնութագրում սեփականությունից զրկելու վերաբերյալ դրույթը.

ա) սեփականությունից զրկելն անթույլատրելի է և հնարավոր է միայն դատարանի որոշմամբ,
բ) սեփականությունից զրկելը կատարվում է ցանկացած պետական մարմնի որոշմամբ,
գ) սեփականությունից զրկելն ընդհանրապես արգելված է,
դ) սեփականությունից զրկելը կատարվում է առանց որևէ փոխհատուցման:

28. Ժառանգելու իրավունքը սերտորեն կապված է.

ա) կյանքի իրավունքի հետ,
բ) ընտրական իրավունքի հետ,
գ) սեփականության իրավունքի հետ,
դ) կրթության իրավունքի հետ:

29. Հայաստանում աշխատանքի բնագավառում պետությունը երաշխավորում է.

ա) բոլորին աշխատանքով ապահովելը,
բ) աշխատանքի ազատ ընտրության իրավունքը,
գ) պարտադիր աշխատանքը,
դ) որոշակի մասնագիտությամբ աշխատելու պարտականությունը:

30. Պարտադիր կամ հարկադիր աշխատանքը.

ա) թույլատրվում է գործատուի համաձայնությամբ,
բ) թույլատրվում է միայն պետական հատվածում,
գ) թույլատրվում է բարձր վարձատրության դեպքում,
դ) արգելվում է:

31. Աշխատողների կոլեկտիվ ու համաձայնեցված գործողությունը (աշխատանք չանելը) գործատուից աշխատանքային պայմանների բարելավում պահանջելու նպատակով կոչվում է.

ա) գործադուլ,
բ) հանրահավաք,
գ) գործազրկություն,
դ) երթ:

32. Ստորև թվարկվածներից ո՞րն է սոցիալական իրավունք.

ա) ընտրվելու իրավունքը,
բ) կուսակցություն ստեղծելու իրավունքը,
գ) սոցիալական ապահովության իրավունքը,
դ) խոսքի ազատության իրավունքը:

33. Ստորև թվարկվածներից ո՞ր դեպքում է մարդն ունենում սոցիալական ապահովության իրավունք.

ա) միայն ծերության դեպքում,
բ) միայն գործազրկության դեպքում,
գ) միայն վճարունակ քաղաքացիների համար,
դ) մայրության, հիվանդության, հաշմանդամության, գործազրկության և այլ դեպքերում:

34. Հայաստանում պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունը.

ա) վճարովի է,
բ) անվճար է,
գ) մատչելի է միայն քաղաքացիներին,
դ) մատչելի է միայն վճարունակ ընտանիքներին:

35. Հայաստանում պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթությունը.

ա) ամբողջովին անվճար է,
բ) հիմնականում վճարովի է,
գ) մատչելի չէ քաղաքացիներին,
դ) ամբողջովին ֆինանսավորվում է պետության կողմից:

36. Խոսքի ազատության չարաշահումը, երբ որևէ տարբերիչ հատկանիշի հիման վրա տարածվում է անհանդուրժող, նվաստացնող կամ թշնամանք հրահրող խոսք, կոչվում է.

ա) ատելության խոսք,
բ) քննադատություն,
գ) հրապարակային ելույթ,
դ) բանավեճ:

Կոլեկտիվ իրավունքներ, ինքնորոշում և բնապահպանություն

37. Կոլեկտիվ (հավաքական) իրավունքներով օժտված են.

ա) միայն առանձին անհատները,
բ) միայն պետությունները,
գ) միայն միջազգային կազմակերպությունները,
դ) մարդկանց խմբերը:

38. Ի տարբերություն առաջին երկու սերունդների՝ երրորդ սերնդի իրավունքների առանձնահատկությունն այն է, որ շեշտադրվում է.

ա) միայն անհատը,
բ) խումբը (կոլեկտիվը) և մարդ–հասարակություն–բնություն փոխհարաբերությունները,
գ) միայն պետական իշխանությունը,
դ) միայն տնտեսական շահը:

39. «Առողջ շրջակա միջավայրում ապրելու և միջավայրը չաղտոտելու պահանջի իրավունքը» երբեմն անվանում են.

ա) կանաչ իրավունքներ,
բ) քաղաքական իրավունքներ,
գ) անձնական իրավունքներ,
դ) տնտեսական իրավունքներ:

40. Ներքին ինքնորոշման իրավունքը ենթադրում է, որ ժողովուրդը.

ա) պարտադիր ստեղծում է նոր անկախ պետություն,
բ) հրաժարվում է իր իրավունքներից,
գ) մասնակցում է իր երկրի կառավարմանը գոյություն ունեցող պետության շրջանակներում,
դ) անջատվում է պետությունից ցանկացած պարագայում:

41. Ժողովրդի մեջ արտաքին ինքնորոշման իրավունք առաջանում է այն ժամանակ, երբ.

ա) նա ցանկանում է ընդլայնել իր տնտեսական հնարավորությունները,
բ) նա այլ կերպ հնարավորություն չունի կենսագործելու իր հիմնարար իրավունքները, իսկ առանձին դեպքերում վտանգված է իր ֆիզիկական գոյությունը,
գ) պետությունը որոշում է կայացնում այդ մասին,
դ) նա ցանկանում է փոխել իր մշակույթը:

42. Մարդու իրավունքների չորրորդ (նոր համարվող) սերնդի վերաբերյալ մի տեսակետի համաձայն՝ այն վերաբերում է.

ա) միայն սեփականության իրավունքին,
բ) ապագայի իրավունքներին՝ պայմանավորված գիտության ու տեխնոլոգիաների (գենետիկ ինժեներիա, արհեստական բանականություն) զարգացմամբ,
գ) միայն ընտրական իրավունքին,
դ) միայն կրոնական իրավունքներին:

Առանձին խմբերի իրավունքներ

43. Ընդհանուր կանոնի համաձայն՝ երեխա է համարվում.

ա) 16 տարին չլրացած անձը,
բ) 14 տարին չլրացած անձը,
գ) 18 տարին չլրացած անձը,
դ) 21 տարին չլրացած անձը:

44. Երեխային վերաբերող հարցերում.

ա) նախևառաջ հաշվի են առնվում ծնողների շահերը,
բ) երեխայի կարծիքը երբեք հաշվի չի առնվում,
գ) հաշվի են առնվում միայն պետության շահերը,
դ) նախևառաջ հաշվի են առնվում երեխայի շահերը (լավագույն շահը):

45. Երեխաների իրավունքների պաշտպանության ամենատարածված միջազգային փաստաթուղթն է.

ա) Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան,
բ) ՄԱԿ–ի կանոնադրությունը,
գ) Անկախության հռչակագիրը,
դ) Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան:

46. 18 տարին չլրացած հիվանդի դեպքում բժշկական միջամտության համաձայնությունը տալիս է.

ա) ինքը՝ երեխան,
բ) օրինական ներկայացուցիչը,
գ) բժիշկը,
դ) դպրոցի տնօրենը:

47. «Մայրությունը գտնվում է պետության հատուկ պաշտպանության ներքո» դրույթը վերաբերում է.

ա) կանանց իրավունքներին,
բ) սեփականության իրավունքին,
գ) ընտրական իրավունքին,
դ) մշակութային իրավունքներին:

48. Հայաստանում մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելը.

ա) թույլատրվում է,
բ) կատարվում է գործատուի հայեցողությամբ,
գ) թույլատրվում է աշխատողի համաձայնությամբ,
դ) արգելվում է:

49. Ստորև թվարկվածներից ո՞րն է ճիշտ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ.

ա) նրանց կարելի է չընդունել աշխատանքի՝ պատճառաբանելով հաշմանդամությունը,
բ) նրանց նկատմամբ խտրական վերաբերմունքն անթույլատրելի է, և պետությունը երաշխավորում է նրանց սոցիալական ապահովությունը,
գ) նրանք չունեն սոցիալական ապահովության իրավունք,
դ) նրանք կարող են աշխատել միայն հատուկ հաստատություններում:

50. Պետությունը հանրային հաստատություններին պարտավորեցնում է ապահովել թեքահարթակներ, որպեսզի.

ա) շենքերը գեղեցիկ տեսք ունենան,
բ) նվազեցվի էներգիայի ծախսը,
գ) հենաշարժային խնդիրներ ունեցող մարդիկ սայլակով կարողանան այցելել այդ հաստատություններ,
դ) հեշտանա բեռների տեղափոխումը:

51. Կանայք և տղամարդիկ.

ա) իրավահավասար են, և չի կարելի խտրական վերաբերմունք դրսևորել ոչ մեկի նկատմամբ,
բ) ունեն միանգամայն տարբեր իրավունքներ,
գ) հավասար են միայն քաղաքական իրավունքներում,
դ) հավասար են միայն ընտանիքում:

Ընտրովի առաջադրանքների պատասխանների բանալի.

1–ա	2–դ	3–բ	4–գ	5–դ	6–գ
7–դ	8–գ	9–գ	10–ա	11–դ	12–ա
13–բ	14–գ	15–ա	16–դ	17–բ	18–գ
19–ա	20–դ	21–բ	22–գ	23–դ	24–գ
25–բ	26–դ	27–ա	28–գ	29–բ	30–դ
31–ա	32–գ	33–դ	34–բ	35–բ	36–ա
37–դ	38–բ	39–ա	40–գ	41–բ	42–բ
43–գ	44–դ	45–ա	46–բ	47–ա	48–դ
49–բ	50–գ	51–ա			

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

52. Համապատասխանեցրե՛ք իրավունքը դրա սերնդին:

ա) Ընտրվելու իրավունք
բ) Հանգստի իրավունք
գ) Առողջ շրջակա միջավայրի իրավունք
դ) Խոսքի ազատություն
ե) Սոցիալական ապահովության իրավունք

Ա. Առաջին սերունդ Բ. Երկրորդ սերունդ Գ. Երրորդ սերունդ
Պատասխան՝ **ա–Ա, բ–Բ, գ–Գ, դ–Ա, ե–Բ**

53. Համապատասխանեցրե՛ք բնութագիրն իրավունքների խմբին:

ա) Ապահովում են մարդու մասնակցությունը պետության ու հասարակության քաղաքական կյանքին
բ) Ապահովում են արժանապատիվ կյանքի հիմնարար պայմաններն ու անհրաժեշտ նյութական բարիքները
գ) Պաշտպանում են մարդու կյանքը, ազատությունն ու անձեռնմխելիությունը

Ա. Անձնական իրավունքներ Բ. Քաղաքական իրավունքներ Գ. Տնտեսական և սոցիալական իրավունքներ
Պատասխան՝ **ա–Բ, բ–Գ, գ–Ա**

54. Համապատասխանեցրե՛ք իրավունքը դրա խմբին:

ա) Կյանքի իրավունք
բ) Ընտրելու իրավունք
գ) Սեփականության իրավունք
դ) Անձնական ազատության իրավունք
ե) Գործադուլի իրավունք

Ա. Անձնական իրավունքներ Բ. Քաղաքական իրավունքներ Գ. Տնտեսական և սոցիալական իրավունքներ
Պատասխան՝ **ա–Ա, բ–Բ, գ–Գ, դ–Ա, ե–Գ**

55. Համապատասխանեցրե՛ք հասկացությունն իր բնութագրին:

ա) Բացարձակ իրավունք
բ) Ատելության խոսք
գ) Հոգեորսություն
դ) Կանաչ իրավունքներ

Ա. Թշնամանք հրահրող, նվաստացնող խոսք Բ. Ոչ մի պարագայում չսահմանափակվող իրավունք Գ. Առողջ շրջակա միջավայրի իրավունք Դ. Մարդկանց ստիպել դավանել այս կամ այն կրոնը
Պատասխան՝ **ա–Բ, բ–Ա, գ–Դ, դ–Գ**

ԼՐԱՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Լրացրե՛ք բաց թողնված բառը կամ բառակապակցությունը:

56. Մարդու իրավունքներն _____ են, քանի որ բխում են մարդու էությունից և չեն կարող տարանջատվել նրանից:

Պատասխան՝ **անօտարելի (անբաժանելի)**

57. Իրապես բացարձակ է համարվում _____ չենթարկվելու իրավունքը:

Պատասխան՝ **խոշտանգման**

58. Ընդհանուր կանոնի համաձայն՝ երեխա է համարվում _____ տարին չլրացած անձը:

Պատասխան՝ **18**

59. Աշխատողների կոլեկտիվ ու համաձայնեցված գործողությունը՝ իրենց շահերը պաշտպանելու նպատակով, կոչվում է _____ :

Պատասխան՝ **գործադուլ**

60. Առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը մտնում է «_____ իրավունքների» շրջանակի մեջ:

Պատասխան՝ **կանաչ**

61. Սեփականությունից զրկելը հնարավոր է միայն _____ որոշմամբ:

Պատասխան՝ **դատարանի**

62. 1948 թ. ընդունված _____ հռչակագիրը սահմանում է, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար:

Պատասխան՝ **Մարդու իրավունքների համընդհանուր**

63. Խոսքի ազատության չարաշահումը, երբ տարածվում է թշնամանք հրահրող խոսք, կոչվում է «_____ խոսք»:

Պատասխան՝ **ատելության**

64. Մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության հասցեատերը _____ է:

Պատասխան՝ **պետությունն**

65. Ժողովրդի մասնակցությունն իր երկրի կառավարմանը՝ գոյություն ունեցող պետության շրջանակներում, կոչվում է _____ ինքնորոշում:

Պատասխան՝ **ներքին**

ՇԱՐԱԴՐՎՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Մարդու իրավունքների էությունը, բաղադրիչներն ու սերունդները

66. Ի՞նչ են մարդու իրավունքները: Թվարկե՛ք դրանց հիմնական բաղադրիչները:

Ակնկալվող պատասխան. Մարդու իրավունքներն անօտարելի, անբաժանելի, փոխկապակցված ու փոխկախված իրավունքներ են, որոնցով օժտված են բոլոր մարդիկ՝ անկախ սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, կրոնից ու այլ կարգավիճակից: Հիմնական բաղադրիչներն են՝ անօտարելիությունը, անբաժանելիությունը, համընդհանրությունն ու փոխկապակցվածությունը:

67. Ինչո՞ւ են մարդու իրավունքներն անվանում «բնական» իրավունքներ, և ինչպե՞ս են տարբեր մտածողներ ընկալել դրանց սկզբնաղբյուրը:

Ակնկալվող պատասխան. Բնական են, քանի որ մարդն ունի դրանք բնության մասնիկ լինելու փաստի ուժով, ուստի անօտարելի ու անբաժանելի են մարդու էությունից: Մտածողների մի մասը դրանք համարել է աստվածատուր, մի մասը՝ բնատուր, մյուս մասն էլ դրանց աղբյուրը համարել է մարդու բանականությունը:

68. Բացատրե՛ք, թե ինչու է խոշտանգման չենթարկվելու իրավունքը համարվում իրապես բացարձակ, մինչդեռ անգամ կյանքի իրավունքը կարող է սահմանափակվել:

Ակնկալվող պատասխան. Կյանքի իրավունքը մի շարք երկրներում կարող է սահմանափակվել (պատերազմ, մահապատիժ որոշ երկրներում): Սակայն բոլորը համակարծիք են, որ խոշտանգման չենթարկվելու իրավունքը չի կարելի սահմանափակել ոչ մի պարագայում, քանի որ խոշտանգելն ուղղակիորեն հարվածում է մարդու՝ որպես մարդ արարածի արժանապատվությանը:

69. Ներկայացրե՛ք մարդու իրավունքների երեք հիմնական սկզբունքները:

Ակնկալվող պատասխան. Ա. Մարդու արժանապատվությունը նրա իրավունքների ու ազատությունների հիմքն է: Բ. Իրավունքների ու ազատությունների պաշտպանության հասցեատերը պետությունն է: Գ. Մարդու իրավունքներն ու ազատությունները պայքարի արդյունք են:

70. Ի՞նչ դեր ունի պետությունը մարդու իրավունքների պաշտպանության գործում, և ինչո՞ւ է հանրային իշխանությունը սահմանափակված մարդու իրավունքներով:

Ակնկալվող պատասխան. Պետությունը ձևավորվել է հենց մարդկանց կողմից՝ նրանց իրավունքները պաշտպանելու համար, ուստի պարտավոր է հարգել ու պաշտպանել բոլորի իրավունքները: Միևնույն ժամանակ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու հիմնական իրավունքներով, այսինքն՝ պետությունն իրավունք չունի ոտնահարելու այն, ինչի համար ինքը ստեղծվել է (անգամ եթե դա պահանջում է ժողովուրդը. «Լինչի դատաստանի» օրինակ):

71. Թվարկե՛ք և համառոտ բնութագրե՛ք մարդու իրավունքների չորս սերունդները:

Ակնկալվող պատասխան. Առաջին սերունդ՝ քաղաքացիական ու քաղաքական իրավունքներ և անձնական ազատություններ: Երկրորդ սերունդ՝ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներ: Երրորդ սերունդ՝ համերաշխության (հավաքական/կոլեկտիվ) իրավունքներ: Չորրորդ սերունդ (նոր համարվող)՝ վերաբերում է կամ առանձին խմբերի իրավունքներին, կամ ապագային առնչվող (տեխնոլոգիական զարգացմամբ պայմանավորված) նոր հնարավոր իրավունքներին:

Անձնական, քաղաքացիական և քաղաքական իրավունքներ

72. Ի՞նչ է ենթադրում կյանքի իրավունքը:

Ակնկալվող պատասխան. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք. ոչ ոքի չի կարելի կամայականորեն զրկել կյանքից: Հին աշխարհում ստրուկները զրկված էին այս իրավունքից՝ համարվելով «խոսող գործիք»:

73. Ինչո՞վ է դավանանքի ազատությունը սահմանափակվում հոգեորսության արգելքով:

Ակնկալվող պատասխան. Դավանանքի ազատությունը ներառում է կրոնը կամ համոզմունքը փոխելու ու այն միայնակ կամ այլոց հետ, հրապարակավ կամ մասնավոր արտահայտելու ազատությունը (քարոզ, ծիսակատարություն և այլն): Սակայն այդ արտահայտումը չպետք է ունենա հոգեորսության բնույթ, այսինքն՝ չի թույլատրվում համոզման, խաբեության կամ այլ ձևերով մարդկանց ստիպել դավանել այս կամ այն կրոնը:

74. Թվարկե՛ք առաջին սերնդի քաղաքական իրավունքներից մի քանիսը:

Ակնկալվող պատասխան. Հանրային կառավարմանը մասնակցելու իրավունք, ընտրական իրավունք (ընտրելու ու ընտրվելու), հավաքներ, ցույցեր ու հրապարակային ելույթներ կազմակերպելու իրավունք, կուսակցություններ ու հասարակական կազմակերպություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք:

75. Ինչո՞ւ սկսեցին մարդիկ պայքարել, որ պետությունը ճանաչի իրենց քաղաքական իրավունքները. բերե՛ք պատմական օրինակ:

Ակնկալվող պատասխան. Մարդիկ չունեին երաշխիք, որ իրենց արդեն ամրագրված անձնական ու քաղաքացիական իրավունքները չեն խախտվի պետության կողմից, ուստի պայքարեցին, որ պետությունը ոչ միայն ճանաչի, այլև գործուն մեխանիզմներ տրամադրի իրավունքները կենսագործելու համար: Օրինակ՝ Ֆրանսիական մեծ հեղափոխության արդյունքում քաղաքացիներին տրվեց ընտրելու ու ընտրվելու իրավունք:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ

76. Ի՞նչ է ենթադրում սեփականության իրավունքը, և ինչպե՞ս կարելի է մարդուն զրկել սեփականությունից:

Ակնկալվող պատասխան. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ օգտագործելու, տիրապետելու ու տնօրինելու (վաճառելու, նվիրելու) իր սեփականությունը. ժառանգելու իրավունքը երաշխավորված է: Սեփականությունից զրկելն անթույլատրելի է և հնարավոր է միայն դատարանի որոշմամբ:

77. Ի՞նչ տարբերություն կա «աշխատանքի իրավունքի» և «աշխատանքի ազատ ընտրության իրավունքի» միջև Հայաստանի պարագայում:

Ակնկալվող պատասխան. Հայաստանում երաշխավորվում է աշխատանքի ազատ ընտրության իրավունքը, ոչ թե բոլորին աշխատանքով ապահովելը: Այսինքն՝ պետությունը չի երաշխավորում, որ բոլորին կապահովի աշխատանքով, այլ երաշխավորում է, որ յուրաքանչյուրն ազատ կարող է ընտրել, թե ինչ աշխատի: Պարտադիր կամ հարկադիր աշխատանքն արգելվում է:

78. Ի՞նչ է գործադուլը:

Ակնկալվող պատասխան. Գործադուլը կոլեկտիվ ու համաձայնեցված գործողությունն է (աշխատանք չանելը), որով աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերը պաշտպանելու նպատակով գործատուից պահանջում են աշխատանքային պայմանների բարելավում, աշխատավարձի բարձրացում և այլն:

79. Ինչպե՞ս է պետությունը երաշխավորում կյանքի իրավունքը. բացատրե՛ք քայլերով:

Ակնկալվող պատասխան. Պետությունն ընդունում է քրեական օրենսգիրք, որը, օրինակ, սպանությունը սահմանում է որպես հանցագործություն, ապա ձևավորում իրավապահ մարմիններ (ոստիկանություն, քննչական կոմիտե, դատախազություն, դատարան)՝ նախ կանխելու վտանգը, իսկ սպանության դեպքում՝ հայտնաբերելու հանցագործին ու ենթարկելու պատասխանատվության: Եթե պետությունը դա պատշաճ չի անում, ինքն է խախտում կյանքի իրավունքը:

80. Ի՞նչ է ատելության խոսքը, և ինչո՞ւ է այն վտանգավոր:

Ակնկալվող պատասխան. Ատելության խոսքը որևէ տարբերիչ հատկանիշի (սեռ, ծագում, եկամուտ, հայացքներ և այլն) հիման վրա անհանդուրժող, նվաստացնող կամ թշնամանք հրահրող խոսքն է մարդու կամ մարդկանց խմբի հասցեին: Այն մեծացնում է հասարակության ներսում անհանդուրժողականությունը, կարող է հանգեցնել անգամ հանցագործությունների, ուստի արգելված է, և պետությունը պետք է կանխի դրա տարածումը:

Կոլեկտիվ իրավունքներ, ինքնորոշում և բնապահպանություն

81. Ինչ են կոլեկտիվ իրավունքները, և ինչո՞վ են դրանք տարբերվում առաջին երկու սերունդների իրավունքներից:

Ակնկալվող պատասխան. Կոլեկտիվ իրավունքներով օժտված են մարդկանց խմբերը, և դրանք ուղղված են խմբի շահերի ու կարիքների բավարարմանը: Ի տարբերություն նախորդ սերունդների՝ շեշտադրվում է ոչ թե անհատը, այլ խումբը (կոլեկտիվը), ինչպես նաև մարդ–հասարակություն–բնություն փոխհարաբերությունները, սերունդների միջև համերաշխությունը, ազգերի ինքնորոշումն ու համագործակցությունը:

82. Բացատրե՛ք ներքին ու արտաքին ինքնորոշման տարբերությունը՝ բերելով հայկական իրականությունից օրինակ:

Ակնկալվող պատասխան. Ներքին ինքնորոշումը ժողովրդի մասնակցությունն է երկրի կառավարմանն ու իր հիմնահարցերի առաջմղումը գոյություն ունեցող պետության շրջանակներում: Երբ ժողովուրդն այդ հնարավորությունը չունի, նրա իրավունքները սահմանափակվում են, իսկ առանձին դեպքերում վտանգ է սպառնում իր ֆիզիկական գոյությանը, նա ստանում է արտաքին ինքնորոշման իրավունք: Օրինակ՝ Արցախի ժողովրդի պայքարը, երբ հայ բնակչությունը ֆիզիկական ոչնչացման վտանգի տակ էր. լուծումը 1991 թ. արտաքին ինքնորոշման իրավունքի կենսագործումն էր:

83. Ինչ են «կանաչ իրավունքները»:

Ակնկալվող պատասխան. «Կանաչ իրավունքները» երրորդ սերնդի իրավունքներից են՝ առողջ շրջակա միջավայր ունենալու, այդպիսի միջավայրում ապրելու և այլ անձանցից ու պետություններից միջավայրը չաղտոտելու պահանջի իրավունքը:

Առանձին խմբերի իրավունքներ

84. Ո՞վ է համարվում երեխա, և ինչպե՞ս է հաշվի առնվում երեխայի կարծիքը:

Ակնկալվող պատասխան. Ընդհանուր կանոնի համաձայն՝ երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձ, եթե կոնկրետ պետությունը չափահասության ավելի վաղ տարիք չի սահմանում: Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, ելնելով տարիքից ու հասունությունից, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում. ընդ որում, երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:

85. Ինչո՞ւ են կանանց իրավունքները պետությունների առանձնահատուկ պաշտպանության ներքո. բերե՛ք օրինակներ:

Ակնկալվող պատասխան. Հաշվի առնելով կանանց հատուկ դերն ընտանիքում, հասարակությունում ու պետությունում՝ նրանց իրավունքները հատուկ պաշտպանության ներքո են, թեև կանայք և տղամարդիկ իրավահավասար են: Օրինակ՝ Հայաստանում մայրությունը պետության հատուկ պաշտպանության ներքո է. մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է, կինն ունի հղիության ու ծննդաբերության վճարովի արձակուրդի ու սոցիալական ապահովության իրավունք:

86. Ինչպե՞ս է պետությունը պաշտպանում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները:

Ակնկալվող պատասխան. Խտրական վերաբերմունքն անթույլատրելի է (օրինակ՝ չի կարելի չընդունել աշխատանքի հաշմանդամության պատճառով): Պետությունը երաշխավորում է սոցիալական ապահովությունը (հաշմանդամության թոշակ, անվճար բուժօգնություն), իրականացնում կանխարգելման, բուժման ու վերականգնման ծրագրեր և ապահովում մատչելիություն (օրինակ՝ թեքահարթակներ հանրային հաստատություններում):

Միջազգային փաստաթղթեր և կառույցներ (ներկայացման հարցեր)

87. Ներկայացրե՛ք Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (ընդունման տարի, ընդունող մարմին, հիմնական դրույթ, նշանակություն Հայաստանի համար):

Ակնկալվող պատասխան. Ընդունվել է 1948 թ. ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի (վեհաժողովի) կողմից: Սահմանում է, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով (հոդված 1), և յուրաքանչյուր ոք ունի հռչակագրում նշված իրավունքները առանց որևէ խտրության (հոդված 2): Հայաստանի 1990 թ. Անկախության հռչակագիրը հղում է անում այս փաստաթղթին:

88. Ի՞նչ է Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ). թվարկե՛ք նրա նպատակներից մի քանիսը:

Ակնկալվող պատասխան. ՄԱԿ–ը միջազգային ամենամեծ կազմակերպությունն է, որի նպատակներից են միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանությունը, միջպետական բարիդրացիական հարաբերությունների զարգացումը, միջպետական համագործակցության խթանումը տնտեսական, սոցիալական, մշակութային ու հումանիտար խնդիրների լուծման գործում, ինչպես նաև մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի տարածումը:

Թեմա 5

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ԸՆՏՐՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Իրավունքի համակարգ

1. Կախված այն բանից՝ իրավունքի նորմերը կարգավորում են որոշակի շահով պայմանավորված հարաբերություններ՝ իրավունքի համակարգում առանձնանում են.

ա) նյութական և ընթացակարգային իրավունքը,
բ) հանրային և մասնավոր իրավունքը,
գ) ներպետական և միջազգային իրավունքը,
դ) նորմը և ինստիտուտը:

2. Ստորև թվարկվածներից ո՞րն է հանրային շահով պայմանավորված հարաբերության օրինակ.

ա) գույքի առուվաճառքը,
բ) ժառանգություն ստանալը,
գ) հարկերի վճարումը պետությանը,
դ) կտակ գրելը:

3. Իրավունքի նորմերը, որոնք սահմանում են մարդկանց և կազմակերպությունների կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները, կազմում են.

ա) ընթացակարգային իրավունքը,
բ) նյութական իրավունքը,
գ) միջազգային իրավունքը,
դ) դատավարական իրավունքը:

4. Քաղաքացիական, քրեական և վարչական դատավարության իրավունքը.

ա) ընթացակարգային իրավունք է,
բ) հանրային իրավունք է,
գ) նյութական իրավունք է,
դ) մասնավոր իրավունք է:

5. Պետությունների և միջազգային կազմակերպությունների միջև հարաբերությունները կարգավորում է.

ա) ներպետական իրավունքը,
բ) սահմանադրական իրավունքը,
գ) միջազգային իրավունքը,
դ) վարչական իրավունքը:

6. Ո՞րն է իրավունքի համակարգի կառուցվածքային ամենափոքր տարրը՝ «բջիջը».

ա) իրավունքի ճյուղը,
բ) իրավունքի ինստիտուտը,
գ) իրավունքի նորմը,
դ) իրավական ակտը:

7. Որոշակի տեսակի և միասեռ իրավունքի նորմերը, որոնք կարգավորում են նույնական հարաբերություններ, միավորվում են.

ա) իրավական ակտի մեջ,
բ) իրավունքի ճյուղի մեջ,
գ) իրավունքի ինստիտուտի մեջ,
դ) սահմանադրության մեջ:

8. Սեփականության, պարտավորական և ժառանգական իրավունքի ինստիտուտները միասին կազմում են.

ա) քրեական իրավունքի ճյուղը,
բ) քաղաքացիական իրավունքի ճյուղը,
գ) վարչական իրավունքի ճյուղը,
դ) սահմանադրական իրավունքի ճյուղը:

9. Եթե իրավունքի մի նորմ հակասում է մյուսին, ապա.

ա) երկուսն էլ դադարում են գործելուց,
բ) կիրառվում է գերակա նորմը,
գ) կիրառվում է ավելի հին նորմը,
դ) հարցը լուծում է միայն հանրաքվեն:

10. Ստորև թվարկվածներից ո՛րը չի համարվում իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորման համակարգի հատկանիշ.

ա) իրավունքի կենսագործումը երաշխավորված է միայն հասարակական պարսավանքով,
բ) իրավունքի կենսագործումը երաշխավորված է պետական հարկադրանքով,
գ) իրավունքը ընդհանուր և համապարտադիր նորմերի ամբողջություն է,
դ) իրավունքը ձևով որոշակի նորմերի համակարգ է:

11. Ստորև թվարկվածներից ո՛րը իրավունքի համակարգի բաղադրատարր չէ.

ա) իրավական ինստիտուտներն ու իրավունքի ճյուղերը,
բ) հանրային և մասնավոր իրավունքը,
գ) նյութական և վարույթային իրավունքը,
դ) դատարանը և դատավարության մասնակիցները:

Սահմանադրական իրավունք

12. Ո՞ր իրավական ակտն է կոչվում «Մայր օրենք», «Հիմնական օրենք».

ա) ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը,
բ) ՀՀ քրեական օրենսգիրքը,
գ) ՀՀ Սահմանադրությունը,
դ) ՀՀ աշխատանքային օրենսգիրքը:

13. ՀՀ Սահմանադրությունն ընդունվել է.

ա) 1991 թ. խորհրդարանի կողմից,
բ) 1995 թ. հանրաքվեի միջոցով,
գ) 1998 թ. նախագահի հրամանով,
դ) 2015 թ. Ազգային ժողովի կողմից:

14. Եթե որևէ իրավական ակտ հակասում է Սահմանադրությանը, ապա.

ա) գործում է այդ ակտը,
բ) երկու ակտերն էլ չեղյալ են համարվում,
գ) հարցը որոշում է կառավարությունը,
դ) գործում են Սահմանադրության դրույթները:

15. Ստորև բերված երկրների ո՞ր խմբում է սահմանադրությունն ընդունվում սահմանադրական հանրաքվեով.

ա) ԱՄՆ, Իտալիա, Հնդկաստան,
բ) Վրաստան, Իտալիա, ԱՄՆ,
գ) Հայաստան, Ռուսաստան, Հունաստան,
դ) Հնդկաստան, Վրաստան, Իռլանդիա:

16. Ստորև թվարկվածներից ո՞րը Սահմանադրության բնութագիր չէ.

ա) այն պետության ու հասարակության հիմնական օրենքն է,
բ) այն ունի բարձրագույն իրավաբանական ուժ և գործում է անմիջականորեն,
գ) այն խարսխվում է օրենքների իրավաբանական ուժի վրա և չի կարող հակասել դրանց,
դ) այն ամրագրում է հասարակական և պետական կարգերի հիմնական սկզբունքները:

Քաղաքացիական իրավունք

17. Ժամանակակից քաղաքացիական իրավունքի հիմքը դրվել է.

ա) Համմուրաբիի օրենքներով,
բ) Նապոլեոն Բոնապարտի քաղաքացիական օրենսգրքով,
գ) Հուստինիանոսի օրենսգրքով,
դ) Սոլոնի օրենքներով:

18. Ստորև թվարկվածներից ո՞րն է քաղաքացիական հարաբերությունների սուբյեկտ.

ա) պետությունը,
բ) համայնքը,
գ) իրավաբանական անձը,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

19. Անձի ունակությունը՝ ունենալու իրավունքներ և կրելու պարտականություններ, կոչվում է.

ա) իրավունակություն,
բ) գործունակություն,
գ) էմանսիպացիա,
դ) իրավասուբյեկտություն:

20. Մարդու իրավունակությունը ծագում է.

ա) 14 տարեկանից,
բ) 18 տարեկանից,
գ) 16 տարեկանից,
դ) ծննդյան պահից:

21. Լրիվ գործունակությունը, որպես կանոն, առաջանում է.

ա) 18 տարեկանից,
բ) 16 տարեկանից,
գ) ծննդյան պահից,
դ) 14 տարեկանից:

22. Մինչև 14 տարեկան երեխաները համարվում են.

ա) փոքրահասակ,
բ) լրիվ գործունակ,
գ) սահմանափակ գործունակ չափահաս,
դ) անգործունակ:

23. 14–18 տարեկան անչափահասները գործարքները, որպես կանոն, կնքում են.

ա) ինքնուրույն, օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ,
բ) միայն օրինական ներկայացուցիչների փոխարեն,
գ) միայն դատարանի թույլտվությամբ,
դ) միայն նոտարի միջոցով:

24. Իրավաբանական անձի իրավունակությունն ու գործունակությունը ծագում են.

ա) դրա հիմնադիրների ծննդյան պահից,
բ) դատարանի որոշմամբ,
գ) 18 տարի անց,
դ) դրա պետական գրանցման պահից:

25. Իրավունքի ո՞ր աղբյուրի նկարագիրն է հետևյալը. «Իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավաստեղծման արդյունքում կամ հանրաքվեով ընդունված պաշտոնական փաստաթուղթ, որը բովանդակում է իրավունքի նորմեր».

ա) նորմատիվ իրավական ակտ,
բ) իրավական սովորույթ,
գ) գործարար շրջանառության սովորույթ,
դ) դատական նախադեպ:

Ընտանեկան իրավունք

26. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում է միայն այն ամուսնությունը, որը գրանցվել է.

ա) եկեղեցում,
բ) համայնքապետարանում,
գ) նոտարի մոտ,
դ) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում:

27. Ամուսնանալ կարող են.

ա) 16 տարեկանը լրացած զույգերը,
բ) 14 տարեկանը լրացած զույգերը,
գ) ցանկացած տարիքի անձինք ծնողների համաձայնությամբ,
դ) 18 տարեկանը լրացած զույգերը:

28. Չափահաս անձանց կողմից իրենց անաշխատունակ ծնողներին պահելու պարտականությունն արտահայտվում է.

ա) ամուսնական պայմանագրով,
բ) կտակով,
գ) ալիմենտով,
դ) էմանսիպացիայով:

29. Ամուսնական պայմանագրի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

ա) այն պարտադիր է բոլոր ամուսնացողների համար,
բ) այն կնքվում է միայն ամուսնալուծվողների կողմից,
գ) այն պարտադիր չէ, սակայն կողմերն իրավունք ունեն կնքելու,
դ) այն կնքվում է միայն դատարանի որոշմամբ:

30. Ընտանեկան օրենսդրության հիմքում ընկած սկզբունքներից ո՞րն է ճիշտ ձևակերպված.

ա) ընտանեկան գործերին ազատ միջամտության թույլատրելիություն,
բ) երեխաների դաստիարակության երկրորդական դերը,
գ) ամուսինների անհավասար իրավունքներ,
դ) ընտանիքի ամրապնդում և երեխաների դաստիարակության առաջնայնություն:

31. «Երեխայի լավագույն շահ» ասելով՝ նկատի է առնվում.

ա) միայն երեխայի նյութական ապահովվածությունը,
բ) երեխայի զարգացմանն ուղղված գործողությունների ամբողջությունը՝ հաշվի առնելով նրա կարիքները,
գ) ծնողների հարմարավետությունը,
դ) միայն երեխայի կրթությունը:

32. Ամուսինների իրավունքներն ու պարտականությունները ծագում են.

ա) ամուսնության պետական գրանցման պահից,
բ) նշանդրեքի պահից,
գ) ամուսնության համաձայնության պահից,
դ) ամուսնության գրանցումից մեկ ամիս հետո:

33. Ստորև թվարկվածներից ո՞րը ամուսնության կնքման իրավական արգելք չէ.

ա) այն անձանց միջև, որոնցից մեկն արդեն այլ ամուսնության մեջ է,
բ) այն անձանց միջև, որոնցից մեկին դատարանն անգործունակ է ճանաչել,
գ) այն անձանց միջև, որոնցից մեկն օտարերկրացի է,
դ) մերձավոր ազգականների միջև:

Աշխատանքային իրավունք

34. «Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք» դրույթը նշանակում է, որ.

ա) պետությունը նշանակում է աշխատանքը,
բ) աշխատանքը պարտադիր է բոլորի համար,
գ) աշխատանքն ընտրում է գործատուն,
դ) ոչ ոք չի կարող մեկ ուրիշին պարտադրել զբաղվելու կոնկրետ աշխատանքով:

35. Հայաստանում պարտադիր կամ հարկադիր աշխատանքը.

ա) արգելվում է,
բ) թույլատրվում է գործատուի համաձայնությամբ,
գ) թույլատրվում է 18 տարեկանից,
դ) թույլատրվում է միայն պատերազմի ժամանակ:

36. Աշխատանքային հարաբերությունների ծագման հիմքը.

ա) վարչական ակտն է,
բ) աշխատանքային պայմանագիրն է,
գ) կտակն է,
դ) ամուսնական պայմանագիրն է:

37. Աշխատողների լրիվ գործունակությունը ծագում է.

ա) 14 տարեկանից,
բ) 16 տարեկանից,
գ) 18 տարեկանից,
դ) 15 տարեկանից:

38. 14–16 տարեկան անձանց աշխատանքի ներգրավման վերաբերյալ ո՞ր պայմանն է ճիշտ.

ա) կարող են աշխատել շաբաթական 40 ժամ,
բ) կարող են ներգրավվել միայն ծնողի կամ խնամակալի գրավոր համաձայնությամբ,
գ) կարող են կնքել մշտական աշխատանքային պայմանագրեր,
դ) կարող են աշխատել գիշերային հերթափոխում:

39. Ստորև թվարկվածներից ո՞ր պայմանն է աշխատանքային պայմանագրի լրացուցիչ (կողմերի համաձայնությամբ սահմանվող) պայման.

ա) աշխատանքի վարձատրության չափը,
բ) պաշտոնի, մասնագիտության անվանումը,
գ) աշխատանքային փորձաշրջանի անցկացման պայմանը,
դ) աշխատանքի վայրը:

40. Գործատուն աշխատողին կարող է աշխատանքից ազատել.

ա) միայն օրենքով հստակ սահմանված ծանրակշիռ հիմքերի առկայությամբ,
բ) ցանկացած պահի առանց հիմքի,
գ) միայն աշխատողի համաձայնությամբ,
դ) միայն դատարանի որոշմամբ:

41. Ստորև թվարկված հաստատություններից որո՞ւմ գործադուլը չի արգելվում.

ա) բնակարանաշինական կազմակերպություններում,
բ) անհետաձգելի բժշկական օգնության ծառայությունում,
գ) կենտրոնացված էներգամատակարարման կազմակերպություններում,
դ) ոստիկանությունում և զինված ուժերում:

Վարչական իրավունք

42. Ստորև թվարկվածներից ո՞րը ՀՀ վարչական մարմին չէ.

ա) նախարարությունը,
բ) մարզպետը,
գ) համայնքի ղեկավարը,
դ) դատարանը:

43. «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են» սկզբունքն ամրագրված է.

ա) ՀՀ Սահմանադրությունում,
բ) ՀՀ քաղաքացիական օրենսգրքում
գ) ՀՀ աշխատանքային օրենսգրքում
դ) ՀՀ ընտանեկան օրենսգրքում:

44. Ի տարբերություն պետական մարմինների՝ հասարակության մյուս անդամներն իրավունք ունեն կատարելու.

ա) միայն այն, ինչ ուղղակի թույլատրված է,
բ) միայն դատարանի թույլտվությամբ նախատեսվածը,
գ) միայն վարչական ակտով նախատեսվածը,
դ) ցանկացած գործողություն, որն արգելված չէ օրենսդրությամբ:

45. Զանցանքը.

ա) քրեական հանցագործություն է,
բ) աշխատանքային վեճ է,
գ) քաղաքացիական գործարք է,
դ) վարչական իրավախախտում է:

46. Վարչական իրավախախտման դեպքում մեղքը կարող է դրսևորվել.

ա) դիտավորությամբ կամ անզգուշությամբ,
բ) միայն անզգուշությամբ,
գ) միայն դիտավորությամբ,
դ) միայն անգործությամբ:

47. Ստորև թվարկվածներից ո՞րը վարչական տույժի տեսակ չէ.

ա) ազատազրկումը,
բ) տուգանքը,
գ) նախազգուշացումը,
դ) անձին տրված հատուկ իրավունքից զրկումը:

48. Վարչական հարաբերություններում կողմերից մեկը միշտ.

ա) ֆիզիկական անձ է,
բ) անչափահաս է,
գ) իրավաբանական անձ է,
դ) օժտված է իշխանական լիազորություններով:

Քրեական իրավունք

49. Հայաստանի Հանրապետությունում հանցագործություններ սահմանող միակ օրենքը.

ա) վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքն է,
բ) ՀՀ քրեական օրենսգիրքն է,
գ) ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն է,
դ) ՀՀ աշխատանքային օրենսգիրքն է:

50. Զանցանքը հանցանքից տարբերակելու հիմնական չափանիշ է.

ա) կատարողի տարիքը,
բ) հանրային վտանգավորության աստիճանը և թե որ օրենքով է սահմանված,
գ) կատարման վայրը,
դ) տուժողի ցանկությունը:

51. «Nullum crimen sine lege» սկզբունքը (չկա հանցագործություն, որը սահմանված չէ օրենքով) քրեական իրավունքի ո՞ր սկզբունքին է համապատասխանում.

ա) մարդասիրության,
բ) օրինականության,
գ) անխուսափելիության,
դ) մարդասիրության և հավասարության:

52. Ըստ պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի՝ հանցավորության դեմ արդյունավետ պայքարի հիմքը.

ա) պատիժների առավելագույն խստացումն է,
բ) հանցագործների հրապարակային պատժումն է,
գ) մահապատժի կիրառումն է,
դ) որևէ հանցագործության անպատիժ չմնալն է:

53. Անմեղության կանխավարկածի համաձայն՝ անձը համարվում է անմեղ, քանի դեռ.

ա) նրան չեն ձերբակալել,
բ) դատախազը մեղադրանք չի ներկայացրել,
գ) նա ինքը չի խոստովանել,
դ) նրա մեղքն ապացուցված և հաստատված չէ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

54. Անձնական պատասխանատվության սկզբունքը նշանակում է, որ անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում.

ա) միայն անձամբ իր կատարած հանցանքի համար,
բ) իր ընտանիքի անդամների արարքների համար,
գ) իր գործատուի հանձնարարությամբ կատարածի համար,
դ) հասարակության ցանկացած անդամի արարքի համար:

55. Ստորև թվարկվածներից ո՞րը ՀՀ-ում քրեական պատժի տեսակ չէ.

ա) տուգանքը,
բ) վարչական նախազգուշացումը,
գ) ազատազրկումը որոշակի ժամկետով,
դ) գույքի բռնագրավումը:

56. Պետական դավաճանություն է համարվում.

ա) չարամտորեն հարկերից խուսափելը,
բ) հասարակական կարգը խախտելը,
գ) ճանապարհային կանոնները խախտելը,
դ) թշնամու կողմն անցնելը, լրտեսությունը, պետական գաղտնիք հանձնելը՝ ի վնաս ՀՀ-ի:

57. «Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել» դրույթն արտահայտում է.

ա) նույն արարքի համար կրկին դատվելու արգելքը,
բ) մարդասիրության սկզբունքը.
գ) օրենքի հետադարձ ուժի արգելքը,
դ) հրապարակայնության սկզբունքը:

58. Ստորև թվարկված պետական հարկադրանքի միջոցներից ո՞րը քրեադատավարական խափանման միջոց չէ.

ա) ձերբակալումը,
բ) գրավը,
գ) ազատազրկումը,
դ) խուզարկությունը:

Իրավապահ մարմիններ

59. Փաստաբանների հիմնական դերն է.

ա) պետական մեղադրանքը պաշտպանել դատարանում,
բ) քրեական գործ հարուցել,
գ) իրավաբանական օգնություն ցուցաբերել անձի իրավունքների պաշտպանության և իրականացման ուղղությամբ,
դ) վարչական ակտեր ընդունել:

60. Դատախազին երբեմն անվանում են.

ա) «պետության փաստաբան»,
բ) «խոսող իրավունք»,
գ) «հանրային պաշտպան»,
դ) «անկախ պաշտոնյա»:

61. Քրեական գործ հարուցելը, դեպքի վայրի զննությունը, վկաների ու կասկածյալի հարցաքննությունն իրականացնում է.

ա) փաստաբանը,
բ) քննիչը,
գ) դատավորը,
դ) մարդու իրավունքների պաշտպանը:

62. Ստորև թվարկվածներից ո՞րը ոստիկանության առաջնային խնդիր չէ.

ա) մարդու անվտանգության ապահովումը,
բ) հասարակական կարգի պահպանությունը,
գ) արդարադատության իրականացումը,
դ) հանցագործությունների կանխումն ու բացահայտումը:

63. Մարդու իրավունքների պաշտպանը.

ա) հաշտարար դատարան է,
բ) անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է մարմինների կողմից մարդու իրավունքների պահպանմանը,
գ) քրեական գործ հարուցող մարմին է,
դ) հասարակական կազմակերպություն է:

64. Իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հիմնական առաքելությունն է.

ա) վերահսկել պետական մարմինների գործունեությունը մարդու իրավունքների բնագավառում,
բ) քրեական պատիժներ նշանակել,
գ) օրենքներ ընդունել,
դ) հարկեր հավաքելու գործընթացի կազմակերպման վրա հսկողություն իրականացնել:

65. ՀՀ-ում անվճար իրավաբանական օգնություն ապահովելու պարտականությունը պետությունը ստանձնել է.

ա) ՀՀ քաղաքացիական օրենսգրքով,
բ) ՀՀ Սահմանադրությամբ,
գ) ՀՀ աշխատանքային օրենսգրքով,
դ) ՀՀ կառավարության որոշմամբ:

66. Ստորև թվարկվածներից ո՞րը փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու արգելք չէ.

ա) չունենալ բարձրագույն իրավաբանական կրթություն,
բ) դատարանի վճռով ճանաչված լինել անգործունակ,
գ) անցած չլինել պարտադիր զինվորական ծառայություն,
դ) դատապարտված լինել դիտավորյալ հանցագործության համար՝ չմարված դատվածությամբ:

Արդարադատություն

67. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են.

ա) դատախազությունն ու դատարանները,
բ) ոստիկանությունն ու դատարանները,
գ) միայն դատարանները,
դ) կառավարությունն ու դատարանները:

68. Ընդհանուր գործերով արդարադատությունն իրականացնում է.

ա) Սահմանադրական դատարանը,
բ) եռաստիճան դատական համակարգը,
գ) Բարձրագույն դատական խորհուրդը,
դ) դատախազությունը:

69. Եռաստիճան դատական համակարգը կազմված է.

ա) Սահմանադրական, վերաքննիչ և առաջին ատյանի դատարաններից,
բ) Վճռաբեկ, Սահմանադրական և վերաքննիչ դատարաններից,
գ) Վճռաբեկ, վերաքննիչ և առաջին ատյանի դատարաններից,
դ) բոլոր պատասխանները սխալ են:

70. Ստորև թվարկվածներից ո՞րը ՀՀ մասնագիտացված դատարան չէ.

ա) վարչական դատարանը,
բ) հակակոռուպցիոն դատարանը,
գ) սնանկության դատարանը,
դ) ընդհանուր իրավասության դատարանը:

71. Քրեական գործերով դատարանը կայացնում է.

ա) դատավճիռ,
բ) որոշում,
գ) վճիռ,
դ) եզրակացություն:

72. Սահմանադրական դատարանը կազմված է.

ա) յոթ դատավորից,
բ) ինը դատավորից,
գ) տասնմեկ դատավորից,
դ) հինգ դատավորից:

73. Դատավորների և դատարանների անկախությունը երաշխավորող անկախ պետական մարմինն է.

ա) դատախազությունը,
բ) Ազգային ժողովը,

գ) Բարձրագույն դատական խորհուրդը,
դ) կառավարությունը:

74. «Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան» դրույթը նշանակում է, որ դատավորը ենթարկվում է.

ա) կառավարությանն ու վարչապետին,
բ) օրենսդիր մարմնին ու նախագահին,
գ) վերադաս դատավորներին,
դ) միայն Սահմանադրությանն ու օրենքներին:

75. Մրցակցային դատավարությունը նշանակում է, որ դատարանը.

ա) ապահովում է դատավարության կողմերի համար հավասար մրցակցային միջավայր,
բ) պաշտպանում է միայն պետության շահերը,
գ) որոշում է կայացնում առանց կողմերի մասնակցության,
դ) նախապատվություն է տալիս մեղադրող կողմին:

76. Ստորև թվարկվածներից ո՞ր դրույթն է ճիշտ արտացոլում դատական գործի հրապարակային քննության իրավունքը՝ որպես արդարադատության սկզբունք.

ա) դատական նիստին կարող է ներկա գտնվել միայն 18 տարին լրացած անձը,
բ) դատական նիստին կարող է ներկա գտնվել միայն 15 տարին լրացած անձը,
գ) դատական նիստին կարող է ներկա գտնվել միայն 16 տարին լրացած անձը,
դ) դատական նիստին կարող է ներկա գտնվել յուրաքանչյուր անձ:

77. Ստորև թվարկվածներից ո՞ր դրույթն է ճիշտ բնութագրում Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու իրավազորությունը.

ա) անհատը կարող է դիմել առանց որևէ պայմանի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ պատասխանողը պետությունն է,
բ) դիմել կարող է ցանկացած անհատ առանց սահմանափակման,
գ) դիմել կարող է միայն պետությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավազորությունն ընդունած այլ պետության դեմ հայցով,
դ) անհատը կարող է դիմել, եթե խախտվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված իրավունքը, և սպառվել են ներպետական պաշտպանության բոլոր միջոցները:

Ընտրովի առաջադրանքների պատասխանների բանալի.

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
բ	գ	բ	ա	գ	գ	գ	բ	բ	Ա	դ	գ	բ

14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26
դ	գ	գ	բ	դ	ա	դ	ա	ա	Ա	դ	ա	դ

27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39
դ	գ	գ	դ	բ	ա	գ	դ	ա	Բ	բ	բ	գ

40	41	42	43	44	45	46	47	48	49	50	51	52
ա	ա	դ	ա	դ	դ	ա	ա	դ	Բ	բ	բ	դ

53	54	55	56	57	58	59	60	61	62	63	64	65
դ	ա	բ	դ	գ	գ	գ	ա	բ	Գ	բ	ա	բ

66	67	68	69	70	71	72	73	74	75	76	77
գ	գ	բ	գ	դ	ա	բ	գ	դ	Ա	դ	դ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

78. Համապատասխանեցրե՛ք իրավունքի ճյուղերը դրանց բնութագրերին.

ա) Սահմանադրական իրավունք	Ա) Կարգավորում է անձանց միջև գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները
բ) Քաղաքացիական իրավունք	Բ) Սահմանում է հանցագործություններն ու դրանց համար պատասխանատվությունը
գ) Քրեական իրավունք	Գ) Կարգավորում է պետության ձևավորումը, մարդու իրավունքները, պետական մարմինների կարգը
դ) Ընտանեկան իրավունք	Դ) Կարգավորում է ամուսնության և ընտանիքի հետ կապված հարաբերությունները

Պատասխան՝ **ա–Գ, բ–Ա, գ–Բ, դ–Դ**

79. Համապատասխանեցրե՛ք իրավունքի համակարգի դասակարգման տեսակները դրանց օրինակներին.

ա) Հանրային իրավունք	Ա) Գույքի առուվաճառք անձանց միջև
բ) Մասնավոր իրավունք	Բ) Քաղաքացիական դատավարության կանոնները
գ) Նյութական իրավունք	Գ) Հարկերի վճարումը պետությանը
դ) Ընթացակարգային իրավունք	Դ) Քրեական իրավունքի նորմերը, որ սահմանում են հանցագործությունը

Պատասխան՝ **ա–Գ, բ–Ա, գ–Դ, դ–Բ**

80. Համապատասխանեցրե՛ք իրավապահ մարմիններին (անձանց) դրանց գործառույթներին.

ա) Ոստիկան	Ա) Դատարանում պաշտպանում է պետական մեղադրանքը
բ) Քննիչ	Բ) Ապահովում է հասարակական կարգի պահպանությունն ու հանցագործությունների կանխումը
գ) Դատախազ	Գ) Իրավաբանական օգնություն է ցուցաբերում անձին՝ նրա իրավունքները պաշտպանելու համար
դ) Փաստաբան	Դ) Անկախ պաշտոնյա է, հետևում է մարմինների կողմից մարդու իրավունքների պահպանմանը
ե) Մարդու իրավունքների պաշտպան	Ե) Հարուցում է քրեական գործ, կատարում զննություն և հարցաքննում

Պատասխան՝ **ա–Բ, բ–Ե, գ–Ա, դ–Գ, ե–Դ**

81. Համապատասխանեցրե՛ք դատարանների տեսակները դրանց բնութագրերին.

ա) Առաջին ատյանի դատարան	Ա) Ապահովում է Սահմանադրության գերակայությունը, կազմված է ինը դատավորից
բ) Վերաքննիչ դատարան	Բ) Քննում է գործը ըստ էության և կայացնում առաջին որոշումը
գ) Վճռաբեկ դատարան	Գ) Երկրորդ ատյան է, վերանայում է առաջին ատյանի դատական ակտերը
դ) Սահմանադրական դատարան	Դ) Բարձրագույն դատական ատյան է, ապահովում է օրենքի միատեսակ կիրառությունը

Պատասխան՝ **ա–Բ, բ–Գ, գ–Դ, դ–Ա**

82. Համապատասխանեցրե՛ք քաղաքացու գործունակության տեսակները դրանց բնութագրերին.

ա) Փոքրահասակ	Ա) 14–18 տ. անձ, որ գործարքներ է կնքում օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ
բ) Սահմանափակ գործունակ անչափահաս	Բ) Մինչև 14 տ. անձ, որի փոխարեն գործարքները կնքում են օրինական ներկայացուցիչները
գ) Լրիվ գործունակ քաղաքացի	Գ) Հոգեկան խանգարման հետևանքով դատարանով այդպիսին ճանաչված անձ, որի նկատմամբ սահմանվում է խնամակալություն
դ) Անգործունակ քաղաքացի	Դ) 18 տարեկան դառնալու պահից քաղաքացիական իրավունքներ ձեռք բերող և իրականացնող անձ

Պատասխան՝ **ա–Բ, բ–Ա, գ–Դ, դ–Գ**

83. Համապատասխանեցրե՛ք վարչական տույժերն ու քրեական պատիժները դրանց օրինակներին.

ա) Վարչական նախազգուշացում	Ա) Մեքենան գերարագությամբ վարելու համար պետավտոտեսուչի կիրառած դրամական տույժ
բ) Վարչական տուգանք	Բ) Որպես քրեական պատիժ՝ անձին որոշակի ժամկետով ազատությունից զրկելը
գ) Հատուկ իրավունքից զրկում	Գ) Պետավտոտեսուչի բանավոր զգուշացումը կանոնները խախտած վարորդին
դ) Ազատազրկում	Դ) Տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկելը

Պատասխան՝ **ա–Գ, բ–Ա, գ–Դ, դ–Բ**

84. Համապատասխանեցրե՛ք իրավական պատասխանատվության սկզբունքները դրանց բնութագրերին.

ա) Մարդասիրություն	Ա) Պատասխանատվությունը սահմանվում է հանրորեն վտանգավոր արարքների համար՝ ելնելով «չկա պատասխանատվություն առանց օրենքի» դրույթից
բ) Անխուսափելիություն	Բ) Պատասխանատվության չափը որոշելիս հաշվի են առնվում մեղքի աստիճանը, արարքի վտանգավորությունը, անձի որակները
գ) Օրինականություն	Գ) Պատասխանատվությունը չի կարող դառնալ մարդու արժանապատվությունը նսեմացնելու հիմք
դ) Անհատականացում	Դ) Կարևոր է, որ մեղավորը հայտնաբերվի և կրի արժանի պատիժ անկախ պատժի խստությունից

Պատասխան՝ **ա–Գ, բ–Դ, գ–Ա, դ–Բ**

ԼՐԱՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Լրացրե՛ք բաց թողնված բառը կամ բառակապակցությունը:

85. Իրավունքի համակարգի կառուցվածքային ամենափոքր տարրը՝ դրա «բջիջը», _____ է:
Պատասխան՝ **իրավունքի նորմն**

86. Երկրի բարձրագույն օրենքը, որը գտնվում է նորմատիվ իրավական ակտերի բուրգի գագաթին, _____ է:
Պատասխան՝ **Սահմանադրությունն**

87. Անձի ունակությունը՝ իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և պարտականություններ ստեղծելու ու կատարելու, կոչվում է _____:
Պատասխան՝ **գործունակություն**

88. Իրավասուբյեկտությունը բաղկացած է իրավունակությունից և _____:
Պատասխան՝ **գործունակությունից**

89. Չափահաս անձանց կողմից իրենց անաշխատունակ ծնողներին, ինչպես նաև ծնողների կողմից երեխաներին պահելու պարտականությունը կոչվում է _____:
Պատասխան՝ **ալիմենտ**

90. Այն պայմանագիրը, որով ամուսինները որոշում են իրենց գույքային իրավունքներն ու պարտականությունները, կոչվում է _____ պայմանագիր:
Պատասխան՝ **ամուսնական**

91. Աշխատողի լրիվ գործունակությունն աշխատանքային հարաբերություններում ծագում է _____ տարեկանից:
Պատասխան՝ **տասնվեց**

92. Աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել շաբաթական _____ ժամից:
Պատասխան՝ **40**

93. Վարչական իրավախախտումը, այսինքն՝ պետական կամ հասարակական կարգի դեմ ոտնձգող այն արարքը, որի համար նախատեսվում է վարչական պատասխանատվություն, կոչվում է _____:
Պատասխան՝ **զանցանք**

94. Այն արարքը, որն ունի հանրային վտանգավորության բարձր աստիճան և սահմանված է քրեական օրենսգրքով, կոչվում է _____:
Պատասխան՝ **հանցագործություն (հանցանք)**

95. Ըստ _____ սկզբունքի՝ անձը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքը հաստատված չէ դատարանի՝ ուժի մեջ մտած դատավճռով:
Պատասխան՝ **անմեղության կանխավարկածի**

96. Մեղքի այն ձևը, երբ անձը նախատեսում և ցանկանում է հանրորեն վտանգավոր հետևանքի առաջացումը, կոչվում է _____:
Պատասխան՝ **դիտավորություն**

97. Դատարանում պետական մեղադրանքը պաշտպանող և պետության շահերը ներկայացնող պաշտոնյան _____ է:
Պատասխան՝ **դատախազն**

98. Անկախ պաշտոնատար անձը, որը հետևում է պետական մարմինների կողմից մարդու իրավունքների պահպանմանը, _____ է:
Պատասխան՝ **Մարդու իրավունքների պաշտպանն**

99. Բարձրագույն դատական ատյանը, որն ապահովում է օրենքի միատեսակ կիրառությունը, _____ դատարանն է:
Պատասխան՝ **Վճռաբեկ**

100. Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է _____ դատարանը, որը կազմված է ինը դատավորից:
Պատասխան՝ **Սահմանադրական**

101. Աշխատանքային պայմանագրով նախատեսված միջոցը, որի նպատակն է ստուգել աշխատողի համապատասխանությունը հանձնարարվող աշխատանքին, կոչվում է_____ :
Պատասխան՝ **փորձաշրջան**

102. Հատուկ պետական մարմինը, որն օրենքի հիման վրա հաստատում է իրավաբանական փաստեր և կատարում իրավական նշանակություն ունեցող գործողություններ (օրինակ՝ վավերացնում է գործարքը), _____ է:
Պատասխան՝ **նոտարն**

103. Իրավաբանական անձի իրավունակությունն ու գործունակությունը ծագում են դրա _____ պահից և դադարում լուծարմամբ:
Պատասխան՝ **պետական գրանցման**

104. ՀՀ-ում ճանաչվում է միայն _____ մարմիններում գրանցված ամուսնությունը:
Պատասխան՝ **քաղաքացիական կացության ակտերի գրանցման**

ՇԱՐԱԴՐՎՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Իրավունքի համակարգ

105. Ինչո՞վ են տարբերվում հանրային և մասնավոր իրավունքի նորմերը: Բերե՛ք օրինակներ:

Ակնկալվող պատասխան. Հանրային իրավունքը կարգավորում է հանրային շահով պայմանավորված հարաբերությունները (պետություն–անձ, օրինակ՝ հարկերի վճարում, քրեական պատասխանատվություն), իսկ մասնավոր իրավունքը՝ մասնավոր շահով պայմանավորվածները (անձ–անձ, օրինակ՝ գույքի առք ու վաճառք, ժառանգություն, կտակ):

106. Ի՞նչ հարաբերակցության մեջ են իրավունքի նորմերը, ինստիտուտներն ու ճյուղերը:

Ակնկալվող պատասխան. Իրավունքի նորմերը համակարգի ամենափոքր տարրերն են. միասեռ նորմերը կազմում են ինստիտուտ (օրինակ՝ սեփականության իրավունքի ինստիտուտ), իսկ մի քանի ինստիտուտ միասին կազմում են ճյուղ (օրինակ՝ քաղաքացիական իրավունքի ճյուղ): Իրավունքի համակարգը կարելի է պատկերել բուրգի տեսքով՝ նորմ → ինստիտուտ → ճյուղ:

107. Ինչո՞ւ է կարևոր հանրային և մասնավոր իրավունքի հավասարակշռությունը հասարակության համար:

Ակնկալվող պատասխան. Մասնավոր իրավունքը պաշտպանում է անհատի ազատությունն ու շահերը, հանրայինը՝ ընդհանուր բարիքն ու կարգը. մի կողմի գերակըշռումը կարող է հանգեցնել կա՛մ անհատի իրավունքների ոտնահարման, կա՛մ հասարակական կարգի խաթարման:

108. Ինչո՞ւ է սահմանադրությունը համարվում համաձայնագիր պետության և հասարակության միջև:

Ակնկալվող պատասխան. Սահմանադրությունը նախ հասարակության անդամների միջև համաձայնագիր է պետություն ձևավորելու մասին և միաժամանակ համաձայնագիր հասարակության ու պետության միջև, որով պետությունն ստանձնում է իրավունքների պաշտպանության պարտականությունը:

109. Արդյոք մարդկանց արդյունավետ և երջանիկ համակեցության համար պարտադիր է ունենալ սահմանադրություն: Հիմնավորե՛ք:

Ակնկալվող պատասխան. Անհրաժեշտ է անդրադառնալ սահմանադրության դերին իշխանության սահմանափակման, իրավունքների երաշխավորման և կայունության ապահովման տեսանկյունից՝ հնարավոր հակափաստարկների քննարկմամբ:

110. Ինչ տարրերից է բաղկացած իրավասուբյեկտությունը, և երբ են դրանք ծագում մարդու համար:

Ակնկալվող պատասխան. Իրավասուբյեկտությունը բաղկացած է իրավունակությունից (ծագում է ծննդյան պահին, դադարում մահվամբ) և գործունակությունից (լրիվ գործունակությունը ծագում է 18 տարեկանից, մինչ այդ սահմանափակ է):

111. Համեմատե՛ք մինչև 14 և 14–18 տարեկան անչափահասների գործունակությունը:

Ակնկալվող պատասխան. Մինչև 14 տարեկան (փոքրահասակ). նրանց փոխարեն գործարքները կնքում են օրինական ներկայացուցիչները (6–14 տ.՝ մանր կենցաղային գործարքներ): 14–18 տարեկան. ինքնուրույն կնքում են գործարքները ներկայացուցիչների համաձայնությամբ, տնօրինում են աշխատավարձն ու կրթաթոշակը և ինքնուրույն գույքային պատասխանատվություն են կրում:

112. Ինչո՞ւ է կարևոր, որ պետությունը չափավոր միջամտի ընտանեկան հարաբերություններին:

Ակնկալվող պատասխան. Ընտանեկան հարաբերությունները զգացմունքային են, ուստի պետությունը միջամտում է միայն այնքանով, որքանով անհրաժեշտ է անդամների (հատկապես երեխաների) իրավունքները երաշխավորելու համար:

113. Ներկայացրե՛ք ձեր մոտեցումը ամուսնական պայմանագրի իրավական և բարոյական նշանակության մասին:

Ակնկալվող պատասխան. Անհրաժեշտ է անդրադառնալ պայմանագրի՝ որպես գույքային հարաբերությունների կանխորոշման իրավական գործիքի և դրա բարոյական/հոգեբանական ընկալմանը:

114. Ինչ է նշանակում աշխատանքի ազատ ընտրության իրավունքը, և ինչո՞ւ է արգելվում հարկադիր աշխատանքը:

Ակնկալվող պատասխան. Ոչ ոք չի կարող մեկ ուրիշին պարտադրել զբաղվել կոնկրետ աշխատանքով. մարդն ինքն է ընտրում աշխատանքը, իսկ հարկադիր աշխատանքի արգելքը բխում է անձի ազատության և արժանապատվության պաշտպանությունից:

115. Պատկերացրե՛ք, որ գործատուն երկարացնում է աշխատաժամերը առանց հավելյալ վճարման, ֆինանսական դժվարությունների պատճառաբանությամբ: Որքանո՞վ է դա համապատասխանում արդարության ու օրենքի պահանջներին:

Ակնկալվող պատասխան. Այդպիսի քայլն ապօրինի է (խախտում է աշխատաժամանակի սահմանափակման և վարձատրության իրավունքը) և բարոյապես անարդար. քննարկվում են աշխատողի և գործատուի շահերի հավասարակշռման ուղիներ:

116. Ինչո՞վ են տարբերվում զանցանքներն ու հանցանքները:

Ակնկալվող պատասխան. Երկուսն էլ իրավախախտումներ են, սակայն զանցանքն ավելի պակաս հանրային վտանգավորություն ունի և սահմանվում է վարչական իրավունքի նորմերով (վարչական պատասխանատվություն), իսկ հանցանքը՝ քրեական օրենսգրքով (քրեական պատասխանատվություն):

117. Ներկայացրե՛ք քրեական իրավունքի սկզբունքներից երեքը՝ հիմնավորելով իրական կյանքից վերցված օրինակներով:

Ակնկալվող պատասխան. Օրինականություն (nullum crimen sine lege), օրենքի առջև հավասարություն, պատասխանատվության անխուսափելիություն, անձնական պատասխանատվություն, մարդասիրություն կամ անմեղության կանխավարկած՝ համապատասխան օրինակներով:

118. Ըստ ձեզ՝ ո՞րն է քրեական պատասխանատվության նպատակը: Հարցը դիտարկե՛ք անձի և հասարակության տեսանկյունից:

Ակնկալվող պատասխան. Անհրաժեշտ է անդրադառնալ դաստիարակման, նոր հանցագործությունների կանխման, արդարության վերականգնման և հասարակության պաշտպանության նպատակներին, ոչ թե միայն պատժին:

119. Արդյոք հանցագործությունը կարո՞ղ է արդարացվել բարոյական հիմքերով (օրինակ՝ սովածը հաց է գողանում): Բերե՛ք կողմ և դեմ փաստարկներ:

Ակնկալվող պատասխան. Բաց, բանավիճային հարց է. բերվում են հակադիր փաստարկներ՝ մի կողմից սոցիալական պայմանների ու անհրաժեշտության, մյուս կողմից՝ օրինականության ու պատասխանատվության անխուսափելիության սկզբունքների լույսի ներքո:

Իրավապահ մարմիններ և արդարադատություն

120. Ինչո՞ւ են իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները կարևոր ժողովրդավարական հասարակության համար:

Ակնկալվող պատասխան. Դրանք վերահսկում են պետական մարմիններին մարդու իրավունքների բնագավառում, աջակցում են մարդկանց իրենց իրավունքները պաշտպանելու հարցում և կանխում հնարավոր խախտումները՝ ստիպելով պետությանը լինել առավել զգոն:

121. Ի՞նչ բարոյական սկզբունքներով պետք է առաջնորդվեն իրավապահ մարմինների ներկայացուցիչները:

Ակնկալվող պատասխան. Արդարություն, անաչառություն, օրինականություն, մարդու արժանապատվության հարգում, պատասխանատվություն, մասնագիտական և անձնական համոզմունքների սահմանազատում:

122. Ինչո՞ւ է կարևոր դատական իշխանության անկախությունը:

Ակնկալվող պատասխան.Դատավորի անկախությունը (ենթարկվում է միայն Սահմանադրությանն ու օրենքներին) երաշխավորում է անաչառ արդարադատություն, պաշտպանում քաղաքացիների իրավունքները և կանխում իշխանության չարաշահումը:

123. Ըստ ձեզ՝ ո՞ր սոցիալական խմբերն են առավել խոցելի արդարադատության համակարգում, և ինչպե՞ս կարող է իրավական օգնությունը հասանելի դառնալ բոլորին:

Ակնկալվող պատասխան. Քննարկվում է խոցելի խմբերի (անապահով, անչափահաս, հաշմանդամություն ունեցող, փախստական և այլն) համար անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու, հանրային պաշտպանի ինստիտուտի դերի մասին:

124. Վերլուծե՛ք իրավիճակը. Դավիթը բողոքարկում է տուգանքի որոշումը ընդհանուր իրավասության դատարանում, միաժամանակ դիմում է հորեղբորը՝ սնանկության դատարանի դատավորին՝ խնդրելով, որ որպես «վերադաս դատարան»՝ պարտավորեցնի բավարարելու դիմումը: Ի՞նչ սխալներ կան նրա մոտեցման մեջ:

Ակնկալվող պատասխան. Սնանկության դատարանը մասնագիտացված է և վերադաս չէ ընդհանուր իրավասության դատարանի նկատմամբ. դատավորն անկախ է ու չի կարող միջամտել այլ դատարանի գործին. տուգանքի (վարչական) գործը ենթակա է վարչական/ընդհանուր իրավասության դատարանին, ոչ սնանկության: Դատավորի նմանատիպ միջամտությունն արգելված է և առաջացնում է պատասխանատվություն:

Թեմա 6

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ
ԸՆՏՐՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Միջազգային իրավունքի էությունը և պատմական զարգացումը

1. Ինչ է միջազգային իրավունքը.

ա) միայն միջազգային կազմակերպությունների ընդունած որոշումների ամբողջություն,

բ) իրավունքի սկզբունքների և նորմերի համակարգ, որը կարգավորում է պետությունների, միջազգային կազմակերպությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների միջև հարաբերությունները,

գ) պետությունների բարոյական պարտավորությունների ամբողջություն,

դ) պետության ներսում գործող իրավական նորմերի ամբողջություն:

2. Ինչի՞ արդյունք է միջազգային իրավունքը.

ա) պետությունների կամքերի համաձայնեցման,

բ) մեկ գերտերության կամքի թելադրանքի,

գ) գիտնականների տեսական աշխատանքների,

դ) միջազգային դատարանների որոշումների:

3. Հռոմեական իրավունքում առաջին անգամ օգտագործված jus gentium արտահայտությունը թարգմանաբար նշանակում է.

ա) բնական իրավունք,

բ) պետությունների իրավունք,

գ) ժողովուրդների իրավունք,

դ) պատերազմի իրավունք:

4. Ո՞ր փաստաթղթով սահմանվեց պետությունների ինքնիշխանության գաղափարը:

ա) Կարսի պայմանագրով,

բ) Վեստֆալյան հաշտությամբ,

գ) Բրիան-Քելլոգի պակտով,

դ) Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայով:

5. Ո՞վ է համարվում դասական միջազգային իրավունքի հիմքերը գցող մտածողը.

ա) Հուգո Հրոցիուսը,

բ) Ժան Բոդենը,

գ) Նիկոլո Մաքիավելին,

դ) Շառլ Մոնտեսքյոն:

6. Խեթական պետության և Հայասա-Ազիի միջև Ք.ա. երկրորդ հազարամյակում կնքված խաղաղության պայմանագիրը վառ օրինակ է.

ա) միջազգային քրեական իրավունքի,
բ) միջազգային պայմանագրային իրավունքի,
գ) փափուկ իրավունքի,
դ) միջազգային սովորութային իրավունքի:

7. Ինչպիսի՞ հանցագործություն էր ծովահենությունը բոլոր պետությունների կողմից.

ա) ներպետական բնույթի,
բ) միջազգային բնույթի,
գ) քաղաքական բնույթի,
դ) վարչական բնույթի:

8. Ի՞նչ նպատակ ունի ժամանակակից միջազգային իրավունքը.

ա) ապահովել պետությունների միջև փոխադարձ վստահություն և կանխատեսելի վարքագիծ,
բ) բացառել, որ մեծ ու հզոր պետություններն իրենց կամքը թելադրեն փոքր պետություններին,
գ) ապահովել վեճերի լուծումը խաղաղ ճանապարհներով,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

Միջազգային իրավունքի աղբյուրները

9. Ստորև թվարկվածներից ո՞րը միջազգային իրավունքի ուղղակի աղբյուր չէ.

ա) առավել հեղինակավոր մասնագետների աշխատանքները,
բ) միջազգային պայմանագրերը,
գ) իրավունքի ընդհանուր սկզբունքները,
դ) միջազգային իրավական սովորույթը:

10. Դատական որոշումները և առավել հեղինակավոր մասնագետների աշխատանքները միջազգային իրավունքում համարվում են.

ա) հիմնական աղբյուրներ,
բ) փափուկ իրավունք,
գ) սովորութային իրավունք,
դ) օժանդակ միջոցներ (երկրորդական աղբյուրներ):

11. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են.

ա) կառավարության որոշումների նորմերը,
բ) դատարանի հայեցողությամբ ընտրված նորմերը,
գ) օրենքների նորմերը,
դ) միջազգային պայմանագրերի նորմերը:

12. Մինչև վավերացումը միջազգային պայմանագրերի համապատասխանությունը Սահմանադրությանը ստուգում է.

ա) ՀՀ կառավարությունը,
բ) ՀՀ Սահմանադրական դատարանը,
գ) ՀՀ Վճռաբեկ դատարանը,
դ) ՀՀ Ազգային ժողովը:

13. 1921 թ. հոկտեմբերի 13-ին կնքված Կարսի պայմանագիրը բազմակողմ պայմանագրերի ո՞ր տեսակին է պատկանում.

ա) լոկալ,
բ) համընդհանուր,
գ) երկկողմ,
դ) տարածաշրջանային:

14. 1949 թ. Ժնևյան կոնվենցիաները, որոնք վավերացրել են 180-ից ավելի պետություններ, օրինակ են.

ա) երկկողմ պայմանագրերի,
բ) լոկալ պայմանագրերի,
գ) համընդհանուր պայմանագրերի,
դ) տարածաշրջանային պայմանագրերի:

15. Որո՞նք են միջազգային իրավական սովորույթի երկու պարտադիր տարրերը.

ա) համընդհանուր պրակտիկան և իրավական համոզվածությունը,
բ) դատական որոշումը և մասնագիտական կարծիքը,
գ) պայմանագիրը և բանաձևը,
դ) գրավոր ձևը և վավերացումը:

16. Պետությունների պրակտիկան, որպեսզի աճի սովորույթի մակարդակի, պետք է լինի.

ա) գրավոր և վավերացված,
բ) գաղտնի և չհրապարակված,
գ) տևական, միատեսակ և ընդհանուր,
դ) կարճատև, բազմազան և տեղային:

17. Pacta sunt servanda սկզբունքը պահանջում է.

ա) պայմանագրերը կնքել միայն գրավոր,
բ) ձեռնպահ մնալ պայմանագրեր կնքելուց,
գ) վեճերը լուծել բացառապես դատարանում,
դ) ձեռք բերված պայմանավորվածությունը բարեխղճորեն կատարել:

Միջազգային իրավունքի սկզբունքները

18. Միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները բացարձակ են, ինչը նշանակում է, որ.

ա) դրանք գործում են միայն պատերազմի ժամանակ,
բ) դրանք պարտադիր են միայն մեծ պետությունների համար,
գ) դրանք ունեն աստիճանական կառուցվածք,
դ) դրանցից վերապահում կատարել չի կարելի:

19. Ստորև թվարկվածներից ո՞ր փաստաթղթով են սահմանվում միջազգային իրավունքի սկզբունքները.

ա) Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի 1975 թ. եզրափակիչ ակտով,
բ) ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրով,
գ) ՄԱԿ-ի կանոնադրությամբ,
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

20. Ինքնորոշման սկզբունքն ունի երկու դրսևորում.

ա) ժամանակավոր և մշտական,
բ) ներքին և արտաքին,
գ) քաղաքական և տնտեսական,
դ) գրավոր և բանավոր:

21. Քվեբեկը՝ Կանադայի կազմում, Չեչնիան Ռուսաստանի կազմում լինելը օրինակ են.

ա) ապագաղութացման,
բ) ներքին ինքնորոշման,
գ) ինքնիշխան հավասարության,
դ) արտաքին ինքնորոշման:

22. Երբ է ժողովրդի մեջ առաջանում արտաքին ինքնորոշման իրավունք.

ա) ցանկացած պահի՝ առանց որևէ պայմանի,
բ) երբ ներքին ինքնորոշումը հնարավոր չէ, հիմնական իրավունքները սահմանափակվում են, իսկ առանձին դեպքերում ժողովրդի գոյությանը վտանգ է սպառնում,
գ) միայն հարևան պետությունների համաձայնությամբ,
դ) միայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ:

23. 1960-ականներին աֆրիկյան ժողովուրդների անկախացումը Մեծ Բրիտանիայից և Ֆրանսիայից, ինչպես նաև 1999 թ. Արևելյան Թիմորի անկախացումը օրինակներ են.

ա) արտաքին ինքնորոշման,
բ) տարածքային ամբողջականության,

գ) փափուկ իրավունքի,
դ) ներքին ինքնորոշման:

24. Պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքի համաձայն՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում Չինաստանը, Գերմանիան և Հայաստանը ունեն.

ա) բնակչության թվին համամասնական ձայներ,
բ) տնտեսական հզորությանը համապատասխան ձայներ,
գ) մեկական հավասար ձայն,
դ) տարածքի չափին համապատասխան ձայներ:

25. Ինքնիշխանություն ասելով՝ հասկանում ենք.

ա) միջազգային կազմակերպություններին անդամակցելը,
բ) ռազմական գերակայությունը հարևանների նկատմամբ,
գ) անկախությունն այլ պետություններից և գերակայությունը սեփական տարածքում,
դ) տնտեսական լիակատար ինքնաբավությունը:

26. Քանի՞ բացառություն է սահմանում միջազգային իրավունքը ուժի կիրառման կամ դրա սպառնալիքի արգելքից.

ա) մեկ,
բ) երկու,
գ) երեք,
դ) բացառություններ չկան:

27. Ստորև թվարկվածներից ո՞րը ուժի կիրառման կամ դրա սպառնալիքի արգելքի սկզբունքի խախտում չէ.

ա) այլ պետության նավահանգիստների զինված շրջափակումը,
բ) զինված հարձակման դեպքում ինքնապաշտպանությունը,
գ) ագրեսիան և ռազմական օկուպացիան,
դ) պետության զինված ուժերի ներխուժումն այլ պետության տարածք:

28. Տարածքային ամբողջականության սկզբունքը խախտվում է, երբ.

ա) մեկ պետությունը գրավում է մեկ այլ պետության տարածքի մի մասը կամ ամբողջը,
բ) պետությունը փակում է իր սահմանները,
գ) ժողովուրդը կենսագործում է իր ինքնորոշման իրավունքը,
դ) պետությունն անդամակցում է միջազգային կազմակերպության:

29. Ներքին գործերին չմիջամտելու սկզբունքի միակ բացառությունը վերաբերում է.

ա) ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ Կանոնադրությամբ նախատեսված հարկադրական միջոցներին,
բ) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներին,
գ) ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևերին,
դ) տարածաշրջանային կազմակերպությունների որոշումներին:

Միջազգային վեճերը և դրանց խաղաղ կարգավորումը

30. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքի էությունն այն է, որ.

ա) վեճերը պետք է սառեցվեն անորոշ ժամկետով,
բ) վեճերը պետք է լուծի միայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը,
գ) վեճերի դեպքում պետությունները կարող են դիմել ուժի,
դ) վեճերը պետք է լուծվեն բացառապես խաղաղ միջոցներով՝ բացառելով զինված ուժի գործադրումը:

31. ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանն իրավասու է քննելու.

ա) միայն մարդու իրավունքների խախտումները,
բ) միջազգային իրավունքի ցանկացած հարց, որը պետությունները կբարձրացնեն նրա առջև,
գ) միայն առևտրային վեճերը,
դ) միայն եվրոպական պետությունների վեճերը:

32. Արցախյան հակամարտության կարգավորման շրջանակներում գործող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող պետություններն էին.

ա) Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Իտալիան,
բ) Թուրքիան, Իրանը, Վրաստանը,
գ) ԱՄՆ-ը, Չինաստանը, Հնդկաստանը,
դ) ԱՄՆ-ը, Ռուսաստանի Դաշնությունը, Ֆրանսիան:

Միջազգային իրավունքի սուբյեկտները

33. Ստորև թվարկվածներից ո՞րը միջազգային իրավունքի սուբյեկտ չէ.

ա) պետությունները,
բ) ինքնորոշման համար պայքարող ժողովուրդները,
գ) միջազգային միջկառավարական կազմակերպությունները,
դ) առևտրային ընկերությունները:

34. Ստորև թվարկվածներից ո՞րը պետության պարտադիր հատկանիշ չէ՝ միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչվելու համար.

ա) միջազգային կազմակերպություններին անդամակցությունը,
բ) սահմանված տարածքը,
գ) մշտական բնակչությունը,
դ) կառավարությունը (հանրային իշխանությունը):

35. Միջազգային իրավունքի առաջնային սուբյեկտներ են համարվում.

ա) պետությունները,
բ) մարդիկ,
գ) պետականակերպ կազմավորումները,
դ) միջազգային կազմակերպությունները:

36. Հայաստանը չի անդամակցում 1979 թ. Լուսնի համաձայնագրին, հետևաբար.

ա) պետք է դիմի ՄԱԿ թույլտվության համար,
բ) պարտավոր է կատարել դրա բոլոր դրույթները,
գ) կաշկանդված չէ այդ համաձայնագրի դրույթներով,
դ) կարող է կիրառել դրույթների միայն մի մասը:

37. Ստորև թվարկվածներից ո՞րը ազգային ազատագրական շարժումը միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչելու չափանիշ չէ.

ա) ռազմական տեխնիկայի քանակը,
բ) ինքնորոշման իրավունքի կենսագործման նպատակը,
գ) տարածքի նկատմամբ վերահսկողությունը,
դ) կազմակերպված խմբի առկայությունը:

38. Ամենահին միջազգային կազմակերպություններից է.

ա) Ռեյնի վրա նավարկության կենտրոնական հանձնաժողովը,
բ) Ազգերի լիգան,
գ) Առևտրի համաշխարհային կազմակերպությունը,
դ) Եվրոպայի խորհուրդը:

39. Ազգերի լիգան ստեղծվել է.

ա) 1815 թ. Վիեննայի կոնգրեսում,
բ) 1920 թ. Առաջին համաշխարհային պատերազմից հետո,
գ) 1995 թ. միջազգային առևտրի կանոնները սահմանելու նպատակով,
դ) 1945 թ. Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

40. Միջազգային կազմակերպությունների ընդունած խորհրդատվական բնույթի որոշումներն ու բանաձևերը, որոնք կիրառվում են այդ կազմակերպությունների հեղինակության ուժով, կոչվում են.

ա) սովորութային իրավունք,
բ) նախադեպային իրավունք,
գ) փափուկ իրավունք,
դ) կոշտ իրավունք:

41. Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ին անդամակցել է.

ա) 2001թ. հունվարի 25-ին,
բ) 2003 թ. փետրվարի 5-ին,
գ) 1991թ. սեպտեմբերի 21-ին,
դ) 1992 թ. մարտի 2-ին:

42. Ստորև թվարկվածներից ո՞րն է տարածաշրջանային միջազգային կազմակերպություն.

ա) Միավորված ազգերի կազմակերպությունը,
բ) Եվրոպայի խորհուրդը,

գ) Առևտրի համաշխարհային կազմակերպությունը,
դ) Համաշխարհային բանկը:

43. Ինքնատիպ (sui generis) կազմավորումների առանձնահատկությունն այն է, որ նրանք.

ա) ունեն պետության բոլոր հատկանիշները,
բ) զրկված են միջազգային հարաբերություններին մասնակցելու իրավունքից,
գ) բացառապես կրոնական կազմակերպություններ են,
դ) սովորաբար չունեն պետության հիմնական հատկանիշներից մեկը և ունեն սահմանափակ միջազգային իրավասուբյեկտություն:

44. Պետության չորս հատկանիշներից ո՞րը չունի Վատիկան քաղաքը.

ա) տարածք,
բ) հանրային իշխանություն,
գ) մշտական բնակչություն,
դ) այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու իրավասություն:

45. Սուրբ Աթոռը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում ունի.

ա) դիտորդի կարգավիճակ՝ առանց քվեարկելու իրավունքի,
բ) անդամության որևէ կարգավիճակ չունի,
գ) լիիրավ անդամի կարգավիճակ,
դ) համանախագահի կարգավիճակ:

Մարդը միջազգային իրավունքում և մարդու իրավունքների միջազգային պաշտպանությունը

46. Ստորև թվարկված միջազգային դատարաններից ո՞րն է մշտապես գործող.

ա) Նյուրնբերգի միջազգային տրիբունալը,
բ) Ռուանդայի միջազգային քրեական տրիբունալը,
գ) Միջազգային քրեական դատարանը,
դ) նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալը:

47. Մարդու իրավունքների բնագավառում միջազգային իրավունքի դերն այն է, որ այն սահմանում է.

ա) մարդու նվազագույն իրավունքներն ու ազատությունները, որոնք պետք է երաշխավորեն բոլոր անդամ պետությունները,
բ) միայն քաղաքական իրավունքները,
գ) իրավունքներ միայն պատերազմի ժամանակ,
դ) մարդու իրավունքների ամբողջական ցանկը՝ փոխարինելով ներպետական իրավունքին:

48. Ստորև թվարկվածներից ո՞րն է տարածաշրջանային նշանակության միջազգային փաստաթուղթ.

ա) Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948),
բ) Քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիրը (1966),
գ) Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան (1981),
դ) Երեխաների իրավունքների վերաբերյալ կոնվենցիան (1989):

49. Ստորև թվարկվածներից ո՞րը չի համարվում Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու պայման.

ա) խախտված իրավունքը պետք է երաշխավորված լինի Եվրոպական կոնվենցիայով,
բ) պատասխանող պետությունը պետք է անդամակցի Եվրոպական կոնվենցիային,
գ) սպառված պետք է լինեն իրավունքների պաշտպանության ներպետական բոլոր միջոցները,
դ) դիմողը պետք է լինի պատասխանող պետության քաղաքացին:

50. Իրավունքների պաշտպանության ներպետական միջոցները կարելի է չսպառել, եթե.

ա) դիմողը օտարերկրացի է,
բ) դրանք կրում են ձևական բնույթ, կամ օբյեկտիվորեն հնարավոր չէ սպառել դրանք,
գ) վեճը գույքային բնույթի է,
դ) բոլոր պատասխանները սխալ են:

51. Եթե պետությունը չի կատարում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները, ապա նրա նկատմամբ սանկցիաներ է կիրառում.

ա) ԵԱՀԿ Մինսկի խումբը,
բ) ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը,
գ) Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն,
դ) Եվրոպական միության հանձնաժողովը:

52. ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեների և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի որոշումները.

ա) ուժի մեջ են մտնում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հաստատմամբ,
բ) գործում են միայն եվրոպական պետությունների համար,
գ) խորհրդատվական բնույթի են, սակայն ունեն բարձր հեղինակություն,
դ) պարտադիր են և ապահովված հարկադրանքով:

Արտաքին քաղաքականություն և դիվանագիտական հարաբերություններ

53. Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերն ընդունում է.

ա) ՀՀ արտաքին գործերի նախարարությունը,
բ) ՀՀ Ազգային ժողովը,
գ) ՀՀ նախագահը,
դ) ՀՀ վարչապետը:

54. Ագրեսիայի բնութագիրն է.

ա) դիվանագիտական կապերի խզումն այլ պետության հետ,
բ) տնտեսական պատժամիջոցների կիրառումն այլ պետության նկատմամբ,
գ) պետության կողմից ոչ բարեկամական քայլերի ձեռնարկումն այլ պետության նկատմամբ,
դ) պետության կողմից զինված ուժի կիրառումն այլ պետության ինքնիշխանության դեմ կամ ՄԱԿ-ի կանոնադրության հետ անհամատեղելի որևէ այլ ձևով:

Ընտրովի առաջադրանքների պատասխանների բանալի.

Հարց	**1**	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	**13**	**14**	**15**	**16**
Պատ.	բ	ա	Գ	բ	ա	բ	բ	դ	ա	դ	Դ	բ	ա	գ	ա	գ

Հարց	**17**	**18**	**19**	**20**	**21**	**22**	**23**	**24**	**25**	**26**	**27**	**28**	**29**	**30**	**31**	**32**
Պատ.	դ	դ	Դ	բ	բ	բ	ա	գ	գ	բ	Բ	ա	ա	դ	բ	դ

Հարց	**33**	**34**	**35**	**36**	**37**	**38**	**39**	**40**	**41**	**42**	**43**	**44**	**45**	**46**	**47**	**48**
Պատ.	դ	ա	Ա	գ	ա	ա	բ	գ	դ	բ	Դ	գ	ա	գ	ա	գ

Հարց	**49**	**50**	**51**	**52**	**53**	**54**
Պատ.	դ	բ	Գ	գ	գ	դ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

55. Համապատասխանեցրե՛ք միջազգային իրավունքի աղբյուրները և օժանդակ միջոցները դրանց օրինակներին.

1) Միջազգային պայմանագիր	ա) Pacta sunt servanda
2) Միջազգային իրավական սովորույթ	բ) 1949 թ. Ժնևյան կոնվենցիաները
3) Իրավունքի ընդհանուր սկզբունք	գ) Կոսովոյի անկախության վերաբերյալ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացությունը
4) Դատական ակտ	դ) Դեսպանների անձեռնմխելիությունը մինչև դրա գրավոր ամրագրումը

Պատասխան՝ **1—բ, 2—դ, 3—ա, 4—գ**

56. Համապատասխանեցրե՛ք միջազգային իրավունքի սկզբունքները դրանց բնութագրերին.

1) Պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունք	ա) Մի պետությունը չի կարող մեկ այլ պետության նկատմամբ ուժ կիրառել կամ սպառնալ դրա կիրառմամբ
2) Ուժի կիրառման կամ դրա սպառնալիքի արգելքի սկզբունք	բ) Պետությունները պարտավոր են կատարել կնքված և վավերացված պայմանագրերով ստանձնած պարտավորությունները
3) Ներքին գործերին չմիջամտելու սկզբունք	գ) Բոլոր պետությունները, անկախ հզորությունից և չափերից, ունեն հավասար իրավունքներ, միջազգային կառույցներում՝ հավասար ձայներ
4) Տարածքային ամբողջականության սկզբունք	դ) Պետություններին արգելվում է միջամտել մյուս պետության ներքին գործերին, թելադրել սեփական կամքը
5) Միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունք	ե) Ոչ մի պետություն չի կարող ոտնձգություն կատարել մեկ այլ պետության տարածքի նկատմամբ

Պատասխան՝ **1—գ, 2—ա, 3—դ, 4—ե, 5—բ**

57. Համապատասխանեցրե՛ք միջազգային պայմանագրերի տեսակները դրանց օրինակներին.

1) Երկկողմ	ա) Կարսի պայմանագիրը (1921)
2) Լոկալ	բ) Ժնևյան կոնվենցիաները (1949)

3) Տարածաշրջանային	գ) Հայաստանի և Ֆրանսիայի միջև Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը (1993)
4) Համընդհանուր	դ) Մաստրիխտի պայմանագիրը (1992)

Պատասխան՝ **1—գ, 2—ա, 3—դ, 4—բ**

58. Համապատասխանեցրե՛ք միջազգային իրավունքի սուբյեկտները դրանց բնութագրերին.

1) Պետություններ	ա) Ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների ներկայացուցիչներ՝ սահմանափակ իրավասուբյեկտությամբ
2) Միջազգային կազմակերպություններ	բ) Միջազգային իրավունքի առաջնային սուբյեկտներ
3) Ազգային ազատագրական շարժումներ	գ) Կրում են ուղղակի պարտավորություն՝ չկատարելու միջազգային հանցագործություններ
4) Ինքնատիպ (պետականակերպ) կազմավորումներ	դ) Գործում են պետությունների կողմից փոխանցված լիազորությունների շրջանակում
5) Մարդիկ	ե) Sui generis միավորներ՝ սովորաբար պետության հատկանիշներից մեկի բացակայությամբ

Պատասխան՝ **1—բ, 2—դ, 3—ա, 4—ե, 5—գ**

59. Համապատասխանեցրե՛ք միջազգային կազմակերպությունները դրանց բնութագրերին.

1) Ռեյնի վրա նավարկության կենտրոնական հանձնաժողով	ա) Ստեղծվել է 1920 թ. միջազգային խաղաղության պահպանման նպատակով
2) Ազգերի լիգա	բ) Ձևավորվել է 1995 թ. միջազգային առևտրի միասնական կանոններ սահմանելու նպատակով
3) Միավորված ազգերի կազմակերպություն	գ) Ամենահին միջազգային կազմակերպություններից է՝ ստեղծված 1815 թ. Վիեննայի կոնգրեսում
4) Առևտրի համաշխարհային կազմակերպություն	դ) Տարածաշրջանային կազմակերպություն, որին Հայաստանն անդամակցել է 2001թ.
5) Եվրոպայի խորհուրդ	ե) Հիմնադրվել է 1945 թ. որպես Ազգերի լիգայի գործի շարունակող, ունի 193 անդամ

Պատասխան՝ **1—գ, 2—ա, 3—ե, 4—բ, 5—դ**

ԼՐԱՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Լրացրե՛ք բաց թողնված բառը կամ բառակապակցությունը:

60. Միջազգային իրավունքն իրավական նորմերի հատուկ համակարգ է, որը ստեղծվում է հիմնականում ———————— կողմից՝ իրենց կամարտահայտության համաձայնեցման միջոցով:
Պատասխան՝ **պետությունների**

61. Հռոմեական իրավունքում առաջին անգամ սկսեց օգտագործվել ———————— («ժողովուրդների իրավունք») արտահայտությունը:
Պատասխան՝ **jus gentium**

62. Չգրված միջազգային իրավունքի դրույթները կոչվում են միջազգային ———————— իրավունք:
Պատասխան՝ **սովորութային**

63. 1969 թ. ընդունվել է Պայմանագրային իրավունքի վերաբերյալ ———————— կոնվենցիան, որին անդամակցում է նաև Հայաստանի Հանրապետությունը:
Պատասխան՝ **Վիեննայի**

64. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են ———————— նորմերը:
Պատասխան՝ **միջազգային պայմանագրերի**

65. Մինչև վավերացնելը միջազգային պայմանագրերն ուսումնասիրվում են ———— ———————— կողմից՝ Սահմանադրությանը համապատասխանությունը ստուգելու նպատակով:
Պատասխան՝ **Սահմանադրական դատարանի**

66. Որպեսզի պետությունների պրակտիկան աճի սովորույթի մակարդակի, այն պետք է լինի տևական, ———————— ու ընդհանուր:
Պատասխան՝ **միատեսակ**

67. Ձեռք բերված պայմանավորվածությունը բարեխղճորեն կատարելու սկզբունքը լատիներեն կոչվում է ———————— :
Պատասխան՝ **pacta sunt servanda**

68. Միջազգային իրավունքի սկզբունքները ———————— են, ինչը նշանակում է, որ դրանցից վերապահում կատարել չի կարելի:
Պատասխան՝ **բացարձակ**

69. Ինքնորոշման սկզբունքն ունի երկու դրսևորում՝ ———————— և ———————— ինքնորոշման իրավունք:
Պատասխան՝ **ներքին, արտաքին**

70. Ինքնիշխանություն ասելով՝ հասկանում ենք անկախությունն այլ պետություններից և ———————— սեփական տարածքում:
Պատասխան՝ **գերակայությունը**

71. Ուժի կիրառման արգելքի բացառություններն են ինքնապաշտպանության ժամանակ կիրառվող ուժը և ———————— որոշմամբ կիրառվող ուժը:
Պատասխան՝ **ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի**

72. 1928 թ. Բրիան-Քելլոգի պակտով պետություններին արգելվեցին ———————— և դրանց միջոցով միջազգային քաղաքականություն վարելը:
Պատասխան՝ **ագրեսիվ պատերազմները**

73. Ագրեսիվ պատերազմ վարելը (ագրեսիան) համարվում է միջազգային ————————:
Պատասխան՝ **հանցագործություն**

74. Պետության հատկանիշներն են՝ մշտական բնակչությունը, սահմանված տարածքը, ————— և այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու իրավասությունը:
Պատասխան՝ **կառավարությունը կամ հանրային իշխանությունը**

75. Միջազգային կազմակերպությունների ընդունած խորհրդատվական բնույթի բանաձևերն ու որոշումները կոչվում են ————— իրավունք:
Պատասխան՝ **փափուկ**

76. Sui generis կազմավորումները հայերեն կոչվում են ———————— միավորներ:
Պատասխան՝ **ինքնատիպ (պետականակերպ)**

77. Վատիկան քաղաքը պետության չորս հատկանիշներից չունի ————————:
Պատասխան՝ **մշտական բնակչություն**

78. Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելուց առաջ անձը պետք է ————— իրավունքների պաշտպանության ներպետական բոլոր միջոցները:
Պատասխան՝ **սպառի**

79. ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեների որոշումները ————— բնույթի են, սակայն ունեն բարձր հեղինակություն:
Պատասխան՝ **խորհրդատվական**

ՇԱՐԱԴՐՎՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

80. Սահմանե՛ք միջազգային իրավունքը և թվարկե՛ք դրա սուբյեկտները:

Ակնկալվող պատասխան. Միջազգային իրավունքը իրավունքի սկզբունքների և նորմերի համակարգ է, որը կարգավորում է պետությունների, միջազգային կազմակերպությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների միջև հարաբերությունները: Այն պետությունների կամքի համաձայնեցման արդյունք է: Սուբյեկտներն են՝ պետությունները (առաջնային), միջազգային կազմակերպությունները, ժողովուրդները (ազգային ազատագրական շարժումները), ինքնատիպ (պետականակերպ) կազմավորումները, առանձին դեպքերում՝ մարդիկ:

81. Ներկայացրե՛ք միջազգային իրավունքի աղբյուրները և իրավական նորմերի որոշակիացման օժանդակ միջոցները:

Ակնկալվող պատասխան. Աղբյուրներն են՝ միջազգային պայմանագրերը, միջազգային իրավական սովորույթը և քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքները: Օժանդակ միջոցներ (երկրորդական աղբյուրներ) են դատական որոշումները (նախադեպային իրավունք, օրինակ՝ Կոսովոյի վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը) և առավել հեղինակավոր մասնագետների աշխատանքները, որոնք ծառայում են նորմերի որոշակիացմանը:

82. Ներկայացրե՛ք միջազգային պայմանագրերի տեսակները օրինակներով:

Ակնկալվող պատասխան. Պայմանագրերը լինում են երկկողմ (օրինակ՝ ՀՀ-Ֆրանսիա Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը, 1993 թ.) և բազմակողմ: Բազմակողմ պայմանագրերն իրենց հերթին լինում են լոկալ (Կարսի պայմանագիրը, 1921 թ.), տարածաշրջանային (Մաստրիխտի պայմանագիրը, 1992 թ.) և համընդհանուր (Ժնևյան կոնվենցիաները, 1949 թ.):

83. Որո՞նք են միջազգային իրավական սովորույթի պարտադիր տարրերը: Բացատրե՛ք օրինակով:

Ակնկալվող պատասխան. Երկու տարրերն են՝ պետությունների համընդհանուր պրակտիկան (օբյեկտիվ չափանիշ), որը պետք է լինի տևական, միատեսակ ու ընդհանուր, և իրավական համոզվածությունը, որ այդ պրակտիկան պարտադիր է (սուբյեկտիվ չափանիշ): Օրինակ՝ դեսպանների անձեռնմխելիությունը դարեր շարունակ պահպանվել է որպես չգրված իրավունք նախքան գրավոր ամրագրվելը: Սովորույթը կարող է լինել նաև տարածաշրջանային՝ պարտադիր միայն տվյալ տարածաշրջանի պետությունների համար:

84. Ի՞նչ են իրավունքի ընդհանուր սկզբունքները: Բերե՛ք օրինակներ:

Ակնկալվող պատասխան. Դրանք ընդհանուր իրավունքում ձևավորված, աքսիոմատիկ ճշմարտություններ պարունակող սկզբունքներ են, որոնք ընդունելի են գրեթե բոլոր ազգերի համար և կասկածի տակ չեն առնվում: Օրինակներ՝ pacta sunt servanda (ձեռք բերված պայմանավորվածությունը պետք է բարեխղճորեն կատարել) և դատավորի անկողմնակալության սկզբունքը (անձը չի կարող դատավոր լինել այն վեճում, որտեղ ունի անձնական շահագրգռվածություն):

85. Ներկայացրե՛ք ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ներքին և արտաքին դրսևորումները օրինակներով:

Ակնկալվող պատասխան. Ներքին ինքնորոշման դեպքում ժողովուրդը միասնական պետության կազմում ձևավորում է ինքնավար կազմավորում՝ պահպանելով ու զարգացնելով իր մշակույթը, լեզուն (Քվեբեկը՝ Կանադայում, Աջարիան՝ Վրաստանում, Տիբեթը՝ Չինաստանում): Արտաքին ինքնորոշման իրավունքն առաջանում է, երբ ներքին իրավունքը հնարավոր չէ իրականացնել, ժողովրդի իրավունքները սահմանափակվում են, իսկ առանձին դեպքերում գոյությանը վտանգ է սպառնում (1960-ականների ապագաղութացումը, Արևելյան Թիմորի անկախացումը 1999 թ., Արցախի ժողովրդի պայքարը): Բոլոր պետություններն իրավունք և պարտականություն ունեն աջակցելու ինքնորոշվող ժողովրդին:

86. Բացատրե՛ք պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը:

Ակնկալվող պատասխան. Բոլոր պետությունները օժտված են ինքնիշխանությամբ՝ անկախությամբ այլ պետություններից և գերակայությամբ սեփական տարածքում, և միմյանց նկատմամբ իրավահավասար են՝ անկախ տնտեսական, ռազմական հզորությունից, տարածքից ու բնակչության թվից: Օրինակ՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում Չինաստանը, Գերմանիան և Հայաստանը ունեն մեկական հավասար ձայն:

87. Ներկայացրե՛ք ուժի կիրառման կամ դրա սպառնալիքի արգելքի սկզբունքը և դրա բացառությունները:

Ակնկալվող պատասխան. Դեռևս 1928 թ. Բրիան-Քելլոգի պակտով արգելվեցին ագրեսիվ պատերազմները, իսկ ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրվեց, որ միջազգային հարաբերություններում արգելվում է ուժի կիրառումը կամ դրա սպառնալիքը. ագրեսիան միջազգային հանցագործություն է: Երկու բացառություններն են՝ ինքնապաշտպանության ժամանակ կիրառվող ուժը (ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդված) և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ կիրառվող ուժը՝ միջազգային խաղաղությունը վերականգնելու կամ պահպանելու համար (օրինակ՝ 1990 թ. Իրաք-Քուվեյթ պատերազմի ժամանակ թիվ 678 բանաձևը):

88. Ինչո՞ւ տարածքային ամբողջականության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքները չեն հակասում միմյանց:

Ակնկալվող պատասխան. Դրանք ոչ միայն չեն հակասում, այլև փոխլրացնում են միմյանց, քանի որ ունեն տարբեր հասցեատերեր: Տարածքային ամբողջականության սկզբունքը վերաբերում է միջպետական հարաբերություններին և խախտվում է, երբ մեկ պետությունը գրավում է մեկ այլ պետության տարածքի մի մասը կամ ամբողջը: Ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը վերաբերում է ժողովրդին և այն պետությանը, որտեղ այդ ժողովուրդն ապրում է. ինքնորոշվող ժողովուրդը պետություն չէ, ուստի նրա ինքնորոշումը տարածքային ամբողջականության խախտում չէ:

89. Ներկայացրե՛ք ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը և դրա բացառությունը:

Ակնկալվող պատասխան. Սկզբունքը պարտավորեցնում է պետություններին և

ՄԱԿ-ին չմիջամտել մյուս պետության ներքին գործերին, չթելադրել սեփական կամքը (ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 7-րդ կետ): Խախտում է, երբ պետությունն իր տնտեսական կամ ռազմական գերակայությամբ մեկ այլ պետությանը պարտադրում է առաջնորդվել իր կամքով: Միակ բացառությունը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ Կանոնադրության VII գլխով նախատեսված հարկադրական միջոցներն են միջազգային անվտանգության և խաղաղության պահպանման նպատակով (օրինակ՝ ցեղասպանության դեպքում միջամտելը):

90. Ներկայացրե՛ք միջազգային վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքը դատական գործերի օրինակներով:

Ակնկալվող պատասխան. Միջազգային հանրության բոլոր անդամները պարտավոր են վեճերը լուծել բացառապես խաղաղ միջոցներով՝ բացառելով զինված ուժի գործադրումը (ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդված): Օրինակներ՝ Հյուսիսային ծովի մայրցամաքային ելուստի գործը (1969 թ., Դանիա, Գերմանիա, Նիդեռլանդներ), Միջուկային փորձարկումների գործը (1974 թ., Ավստրալիա և Նոր Զելանդիա ընդդեմ Ֆրանսիայի), Նիկարագուան ընդդեմ ԱՄՆ-ի (1986 թ.): Գործում են նաև ոչ դատական՝ հաշտարարական մեխանիզմներ (ԵԱՀԿ Մինսկի խումբ) և առևտրային վեճերի լուծման մարմիններ (ԱՀԿ):

91. Ներկայացրե՛ք միջազգային իրավունքի հետևյալ՝ պետությունների ինքնիշխան հավասարության, տարածքային ամբողջականության, ժողովուրդների ինքնորոշման, ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքները:

Ակնկալվող պատասխան. Ինքնիշխան հավասարություն. բոլոր պետությունները հավասար են՝ անկախ հզորությունից, միջազգային կառույցներում ունեն մեկական ձայն: Տարածքային ամբողջականություն՝ ոչ մի պետություն չի կարող ոտնձգել այլ պետության տարածքի նկատմամբ և քաղաքական կախվածության մեջ գցել նրան: Ժողովուրդների ինքնորոշում. յուրաքանչյուր ժողովուրդ իրավունք ունի ինքնուրույն որոշելու իր ճակատագիրը ներքին կամ արտաքին ինքնորոշման ձևով: Ուժի չկիրառում. արգելվում է ուժի կիրառումը կամ դրա սպառնալիքը՝ բացառությամբ ինքնապաշտպանության և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ կիրառվող ուժի:

92. Ինչ հատկանիշներ պետք է ունենա պետությունը՝ միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչվելու համար: Ինչո՞ւ են պետությունները համարվում առաջնային սուբյեկտներ:

Ակնկալվող պատասխան. Չորս հատկանիշներն են՝ մշտական բնակչություն, սահմանված տարածք, կառավարություն (հանրային իշխանություն) և այլ պետություններ հետ հարաբերությունների մեջ մտնելու իրավասություն: Պետություններն առաջնային սուբյեկտներ են, քանի որ միջազգային իրավունքը նրանց կամքերի համաձայնեցման արդյունք է. նրանք իրենք են ստեղծում նորմերը և պարտավորվում կատարել դրանք: Պետությունը կաշկանդված չէ այն նորմերով, որոնց ստեղծմանը չի մասնակցել (օրինակ՝ Հայաստանը 1979 թ. Լուսնի համաձայնագրի անդամ չէ և կաշկանդված չէ դրանով):

93. Ինչ չափանիշների պետք է բավարարի ազգային ազատագրական շարժումը՝ միջազգային իրավունքի սուբյեկտ համարվելու համար:

Ակնկալվող պատասխան. Չորս չափանիշներն են. 1) նպատակը պետք է լինի ինքնորոշման իրավունքի կենսագործումը, 2) կազմակերպված խմբի առկայությունը, որը հանդես է գալիս ամբողջ ժողովրդի անունից և ունի հստակ ղեկավարություն, 3) վերահսկողությունը որևէ տարածքի նկատմամբ (հարաբերական չափանիշ), 4) ռազմական գործողություններում վարքագծի ընդհանուր սկզբունքների պահպանումը՝ առանց միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների: Միջազգային ամենալայն ճանաչում ունեցող օրինակը Պաղեստինի ազատագրության կազմակերպությունն է (հիմն. 1964 թ.):

94. Ներկայացրե՛ք միջազգային կազմակերպությունների տեսակները և «փափուկ իրավունքի» հասկացությունը:

Ակնկալվող պատասխան. Կազմակերպությունները լինում են համընդհանուր, որոնց կարող են անդամակցել բոլոր պետությունները (ՄԱԿ՝ 193 անդամ, ԱՀԿ՝ 164, Համաշխարհային բանկ՝ 189), և տարածաշրջանային (ԵԱՀԿ, Եվրոպայի խորհուրդ, ԱՊՀ): Նրանք ունեն միջազգային իրավասուբյեկտություն. կարող են ինքնուրույն պայմանագրեր կնքել: Փափուկ իրավունք են կոչվում կազմակերպությունների ընդունած խորհրդատվական բնույթի բանաձևերն ու որոշումները (օրինակ՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևերը), որոնք կիրառվում են կազմակերպությունների հեղինակության ուժով:

95. Ինչ են ինքնատիպ (պետականակերպ) կազմավորումները: Ներկայացրե՛ք Սուրբ Աթոռի և Վատիկանի օրինակները:

Ակնկալվող պատասխան. Դրանք sui generis միավորներ են, որոնք պետություն կամ միջազգային կազմակերպություն չեն, սակայն օգտվում են միջազգային հարաբերությունների հնարավորություններից. նման կարգավիճակի հասնում են յուրահատուկ պատմական հանգամանքներով, սովորաբար չունեն պետության հատկանիշներից մեկը և ունեն սահմանափակ իրավասուբյեկտություն: Սուրբ Աթոռը Հռոմի պապի և կաթոլիկ հոգևորականության միասնական կազմակերպությունն է. ունի դիվանագիտական հարաբերություններ (այդ թվում՝ ՀՀ-ի հետ), ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում՝ դիտորդի կարգավիճակ՝ առանց քվեարկելու իրավունքի: Վատիկան քաղաքն ունի տարածք, հանրային իշխանություն և հարաբերությունների մեջ մտնելու իրավասություն, բայց չունի մշտական բնակչություն: Այս շարքին են դասվում նաև Մալթայի ինքնիշխան միաբանությունը, Կարմիր խաչի միջազգային կոմիտեն:

96. Ինչպե՞ս է դրսևորվում մարդկանց միջազգային իրավասուբյեկտությունը:

Ակնկալվող պատասխան. Մարդիկ ունեն սահմանափակ իրավասուբյեկտություն՝ երեք դրսևորմամբ: Առաջին՝ նրանք ուղղակիորեն կրում են պարտավորություն չկատարելու միջազգային հանցագործություններ (ցեղասպանություն, մարդկության դեմ ուղղված և պատերազմական հանցագործություններ, ագրեսիա). այս պարտավորությունը բացարձակ է, և խախտողները պատասխանատվության են ենթարկվում միջազգային դատարանների կողմից (Նյուրնբերգի, նախկին Հարավսլավիայի,

Ռուանդայի ժամանակավոր տրիբունալներ, մշտապես գործող Միջազգային քրեական դատարան): Երկրորդ՝ մարդիկ ուղղակիորեն կրում են միջազգային իրավունքով սահմանված իրավունքներ և կարող են գործընթաց սկսել այն պետությունների դեմ, որոնք նախապես տվել են իրենց համաձայնությունը (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, ներդրումային վեճերի կենտրոն): Երրորդ՝ հեղինակավոր իրավաբան-գիտնականներն էական ազդեցություն ունեն միջազգային իրավունքի զարգացման վրա:

97. Ներկայացրե՛ք Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու պայմանները և դատարանի որոշումների կատարման ապահովման մեխանիզմը:

Ակնկալվող պատասխան. Երեք պայմաններն են. 1) հանրային իշխանությունը պետք է խախտած լինի Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքը, 2) պատասխանող պետությունը պետք է անդամակցի կոնվենցիային, 3) սպառված պետք է լինեն իրավունքների պաշտպանության ներպետական բոլոր միջոցները (բացառություն՝ երբ դրանք ձևական բնույթ ունեն կամ օբյեկտիվորեն հնարավոր չէ սպառել): Դիմողի քաղաքացիությունը պարտադիր չէ. կարևոր է, որ պատասխանող պետությունն անդամ լինի (հնարավոր են նաև միջպետական բողոքներ, օրինակ՝ Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի): Խախտում ճանաչելու դեպքում պետությունը պարտավոր է վերացնելու խախտումը և փոխհատուցելու վնասը. որոշումները չկատարելու դեպքում Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն կիրառում է սանկցիաներ՝ ձայնի իրավունքից զրկումից մինչև անդամակցության դադարեցում:

ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐ

Արդի քաղաքացիավարության պայմաններում դժվար է գերագնահատել սոցիալ-քաղաքական տարբեր գործոնների ազդեցության ենթարկված սովորողների կողմից «Հասարակագիտություն» առարկայի համակողմանի յուրացման կարևորությունը, քանի որ այն թույլ է տալիս նրանց ծանոթանալու համամարդկային արժեքների և վարքագծի ձևերի համակարգին: Այնուամենայնիվ, դրան հասնելու համար ուսուցիչները պետք է ընտրեն գործնական ուղղվածությամբ շտեմարաններ և ուսումնական նյութեր՝ խուսափելով խիստ ընդհանրացված տեսական բովանդակության գերբեռնվածությունից, և համակարգված կերպով կիրառեն այն դասագործընթացում՝ զարգացնելով սովորողների հաղորդակցման և վերլուծական հմտությունները: Այս առումով ներկայացված շտեմարանը հնարավորություն կտա սովորողներին տիրապետելու հասարակագիտական առարկայական տարբեր հմտությունների և հետևողականորեն զարգացնելու դրանք՝ տարբեր առաջադրանքների միջոցով խորացնելով իրավաքաղաքական գիտելիքները:

Մասնավորապես, կրթական առաջադիմություն ունեցող սովորողների ուսումնառության առկա հաջողություններն ու առաջընթացը կապված են այն փաստի հետ, որ նրանք ունեն հասարակության քաղաքական կյանքի և պետաիրավական բովանդակության տեղեկատվության ընթերցման և վերլուծության հմտություններ: Կարողանալով հասկանալ կարդացածի իմաստը՝ սովորողները, բնականաբար, գիտակցաբար ընտրում են և համակարգում սոցիալական տեղեկատվությունը, գնահատում դրա բովանդակությունը և մեկնաբանում այն:

Ներկայացված շտեմարանի միջոցով «Հասարակագիտություն» առարկայի յուրացման էական առավելություն է նաև համընդհանուր հաղորդակցական հմտությունների զարգացումը: Այսպես՝ սովորողները կկարողանան մասնակցել քաղաքացիական երկխոսության՝ բացահայտելով սեփական դիրքորոշումների միջև տարբերությունները/նմանությունները և ներկայացնելով փաստարկներ, կատարելով հարցադրումներ քննարկվող թեմայի շուրջ և արտահայտելով հաղորդակցական խնդիր լուծելուն ուղղված գաղափարներ:

Հետևաբար, այս շտեմարանը միտված է դառնալու սովորողների ընթերցանության, գրավոր և բանավոր խոսքի զարգացմանն ուղղված կարևոր միջոց՝ քայլ առ քայլ այն դարձնելով առավել կիրառական և աշխատանքային:

Շտեմարանը ընդգծում է «Հասարակագիտություն» առարկայի առանձնահատկությունը՝ թույլ տալով համակարգված կարդալու և վերլուծելու տարաբնույթ տեղեկատվություն, քննարկելու հասարակական կյանքի իրադարձությունները, երևույթները և գործընթացները, ինչպես նաև սովորողների անձնական սոցիալական փորձի դրսևորումները:

Վստահ եմ, որ այս շտեմարանը կարող է դառնալ սովորողների համար հետաքրքիր տեղեկատվության աղբյուր, որից արդյունավետորեն օգտվելը կապահովի նրանց դրական մոտիվացիան և հաջողությունը: Այս առումով սովորողները կյուրացնեն հասկացությունների սահմանումները և սոցիալ-քաղաքական երևույթների դրսևորումները՝ մարդու քաղաքական և կենսասոցիալական էության, գործու-

նեության ընդհանուր հատկանիշները, հասարակության որոշ բնութագրեր և գործոններ, ինչպես նաև պետական իշխանության և քաղաքական համակարգի որոշ առանձնահատկություններ: Ավելին, նրանք կըմբռնեն քաղաքացիական մասնակցության տեսակները և պետաիրավական նորմերի էությունը, իրավական պետության և քաղաքացիական հասարակության բնութագրերը, քաղաքացիական երկխոսության պատճառներն ու տեսակները, մարդու և քաղաքացիական իրավունքների և ազատությունների դասակարգումը՝ ճանաչելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սահմանադրական իրավունքներն ու պարտականությունները:

Համոզված եմ, որ համակարգված, ակտիվ ճանաչողական գործունեության միջոցով սովորողները կկարողանան շտեմարանի օգնությամբ զարգացնել իրենց ինքնակազմակերպման և ինքնակառավարման հմտությունները, որոնք կարևորագույն նշանակություն կունենան ինչպես միջանկյալ, այնպես էլ վերջնական գնահատումները հանձնելիս, ինչպես նաև ցանկացած գործնական գործունեության մեջ:

Աշոտ Ալեքսանյան

Քաղաքական գիտությունների դոկտոր պրոֆեսոր
ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի վարիչ
«Journal of Political Science: Bulletin of Yerevan University
Yerevan State University»-ի հանդեսի գլխավոր խմբագիր

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
(պետականագիտություն)

ՇՏԵՄԱՐԱՆ



Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ

Հեղինակներ՝
Արթուր Վաղարշյան, իրավաբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր
Տարոն Սիմոնյան, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Խմբագիր՝ **Գայանե Վարդանյան, բան. գիտ. թեկնածու, դոցենտ**
Շապիկի ձևավորում՝ **Աշխեն Սարգսյան**
Էջադրում և ձևավորում՝ **Լիլիթ Եգորյան**



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է **«ԱՍՈՂԻԿ»** *հրատարակչության տպարանում*
Ք. Երևան, Բաղրամյան 30 *(գրասենյակ)*
Ավան,Դավիթ Մալյան 45 *(տպարան)*
Հեռ.՝ (374 11) 52 10 20, (374 11) 54 62 60
Էլ. փոստ՝ *info@asoghik.com*



ISBN 978-9939-1-2380-6

ԵՐԵՎԱՆ 2026